ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ԼԵՎ ԳՐՈՒՊ

ADVOCATE'S OFFICE
LEV GROUP

0010, Երևան, Միհր Մկրտչյան 8/1, Հեռ/Ֆաքս +374 10 568080, E-mail: info@levgroup.am, www.levgroup.am

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ
հասցե՝ ՀՀ ք. Երևան. Մարշալ Բաղրամյան պող., 10 շենք

ԴԻՄՈՒՄԱՏՈՒ՝ «ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
գրանցման համար՝ 211.172.13.98475
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պուշկինի փ., 37.շ., բն.5
ծանուցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան Միհր Մկրտչյան 8/1

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ ՓԱՍՏԱԲԱՆ ՏԱՐՈՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 2243
նույնականացման քարտ՝ 015459308, տրվ. 10.02.2024թ. 005-ի կողմից
ծանուցման հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Միհր Մկրտչյան 8/1

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
հասցե՝ ՀՀ, ք. Երևան Գևորգ Քոչար փող., 21 Ա շենք

ԴԻՄՈՒՄ

2026 թվականի հունիսի 07-ին տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 14 հունիսի 2026 թվականին ընդունված թիվ 259-Ա որոշումը և ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու պահանջների մասին

Հարգելի՛ Բարձր դատարան,

2026 թվականի հունիսի 07-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ/ այսուհետ նաև՝ ընտրություններ/, որի շրջանակներում ընտրության արդյունքները ամփոփվել են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի /այսուհետ նաև՝ ԿԸՀ/ 14.06.2026 թվականի թիվ 259-Ա որոշմամբ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԸՆԴՀՈՒՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 3-72
«19» 06 2026 թ.

Ընտրությունների նախընտրական, ընտրական և հետընտրական գործընթացներում տեղի են ունեցել ընտրախախտումներ, որոնք կրել են կազմակերպված, զանգվածային և պարբերաբար կրկնվող բնույթ, ավելին՝ առկա են զգալի չափով հաստատված անճշտություններ: Խախտումների համադրումը վկայում է դրանց միջև համակարգային փոխկապակցվածության մասին, որոնք հիմք են տալիս փաստելու, որ նշված ընտրությունները չեն արտահայտում ընտրողի իրական կամքը և ընտրությունների իրական արդյունքները:

Վերը նշվածի արդյունքում խախտվում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածները, ՀՀ ընտրական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 3-րդ, 4-րդ, 6-րդ, 19-րդ և 23-րդ հոդվածները:

Հաշվի առնելով խախտումների և անճշտությունների էական ազդեցությունը ընտրությունների արդյուքների վրա ՀՀ Սահմանադրական դատարանին է ներկայացվում 2026 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած ընտրությունների արդյունքներն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ դիմում:

I. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2026 թվականի Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության և քվեարկության ընթացքում հանրային տիրույթում, զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական հարթակներով, քաղաքական ուժերի պաշտոնական հաղորդագրություններով և քաղաքացիների հրապարակային ահազանգերով տարածվել են բազմաթիվ տեղեկություններ, որոնք փաստում են պետական և համայնքային

կառույցների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև վարչական այլ լծակների համակարգային ներգրավման մասին **ընտրական գործընթացներում՝ հօգուտ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության /նշված քաղաքական ուժը ընտրական գործընթացների ընթացքում հանդիսացել է իշխող ուժ/:**

Մասնավորապես հրապարակվել են ձայնագրություններ, հայտարարություններ և տեսանյութեր, որոնց համաձայն՝

1.1. Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի կրթության ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձինք մանկապարտեզների տնօրեններին փոխանցել են հանձնարարություններ՝ ապահովելու աշխատակիցների մասնակցությունը իշխող քաղաքական ուժի գրասենյակի բացման և քաղաքական բնույթի միջոցառումներին: Ըստ հրապարակված տեղեկությունների՝ դրանից հետո մանկապարտեզների տնօրեններին նաև պահանջվել է ներկայացնել այն աշխատակիցների տվյալները, որոնք չեն աջակցում իշխող քաղաքական ուժին: Հետագա հրապարակումներում ներկայացվել են նաև տեղեկություններ այն մասին, որ նշված հանգամանքների հրապարակումից հետո նույն պաշտոնատար անձանց կողմից իրականացվել են սպառնալիք պարունակող հաղորդակցություններ՝ ուղղված համապատասխան կրթական հաստատությունների ղեկավարներին: */Նշված հրապարակումներից հետո հերքող որևէ հաղորդագրություն, հրապարակում, պաշտոնական հայտարարություն չի եղել/*

1.2. 2026 թվականի մայիսի 19-ին, ժամը 12:45-ին, Ստեփանավան քաղաքում իրականացված՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչական միջոցառման ընթացքում արձանագրվել է մի շարք պետական և համայնքային հիմնարկների աշխատակիցների մասնակցություն: Մասնավորապես, հավաքին ներկա են եղել Ստեփանավանի համայնքապետարանի, բժշկական կենտրոնի, հանրակրթական դպրոցների, քոլեջի և մանկապարտեզների աշխատակիցներ: Հատկանշական է, որ նշված անձինք քարոզչական միջոցառմանը մասնակցել են իրենց աշխատանքային ժամերին, երբ, ըստ իրենց զբաղեցրած պաշտոններից բխող պարտականությունների, պետք է գտնվեին աշխատավայրում և իրականացնեին իրենց ծառայողական գործառույթները: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն փաստը,

որ հավաքին ներկա գտնվող անձանցից մեկը, որը փաստացի հանդիսանում է Ստեփանավանի համայնքապետարանի **կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, սոցիալակն աջակցության բաժնի պետ**, հանրային հարցադրմանը **թե ինքը որտեղ է աշխատում** պատասխանելիս հայտարարել է, որ **աշխատում է մասնավոր հացի արտադրամասում և միջոցառմանը մասնակցում է բացառապես սեփական նախաձեռնությամբ: Հետագայում ձեռք բերված և ստուգված տվյալները վկայում են, որ նշված անձը իրականում հանդիսանում է Ստեփանավան համայնքապետարանի աշախատակից՝ Գայանե Ղալաչյանը:**

Նշված հանգամանքը ևս մեծ էական նշանակություն ունի, քանի որ այն ևս մեկ անգամ վկայում է քարոզչական միջոցառմանը պետական կամ համայնքային կրթական հաստատությունների աշխատակիցների մասնակցության իրական բնույթը թաքցնելու, ինչպես նաև հանրությանը մոլորեցնող տեղեկություններ ներկայացնելու փորձի մասին: Նման վարքագիծը, համակցված աշխատաժամանակին հավաքին մասնակցության փաստի հետ, ինչպես նաև քաղաքացու պատասխանը լրատվական ծառայությանը, թե իբր վերջինս հացի արտադրամասի աշխատակից է ենթակա է իրավական գնահատման՝ ընտրական գործընթացում վարչական ռեսուրսի օգտագործման, ծառայողական կախվածության հնարավոր դրսևորումների և ընտրողների ազատ կամարտահայտման վրա ազդեցության տեսանկյունից:

1.3. Բացի այդ, հանրային տիրույթում լայնորեն տարածվել են տեղեկություններ այն մասին, որ տարբեր համայնքների ղեկավարներ, վարչական շրջանների ղեկավարներ, մարզային և համայնքային պաշտոնատար անձինք ուղղակի կամ անուղղակի մասնակցել են ընտրական գործընթացներին՝ ազդեցություն գործադրելով ընտրողների կամքի ձևավորման վրա:

Մասնավորապես հրապարակվել են տեղեկություններ, համաձայն որոնց՝ ընտրությունների օրը

- Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի ղեկավարի կողմից թիվ 21/29 ընտրատեղամասում իրականացվել են ընտրողների ուղղորդման գործողություններ,

- Թեղուտ համայնքում վարչական շրջանի ղեկավարը գտնվել է ընտրատեղամասի տարածքում և, ըստ հրապարակված տեղեկությունների, միջամտել ընտրական գործընթացներին և ընտրության գաղտնիությանը,
- Մեծավան համայնքի ընտրատեղամասում ՀՀ վարչապետի խորհրդական Արամ Խաչատրյանը ապօրինի կերպով գտնվել է ընտրատեղամասում և ըստ տեղեկությունների միջամտել է ընտրական գործընթացներին:

1.4. Միևնույն ժամանակ հրապարակվել են տեղեկություններ ՁԼՄ-ների կողից, որոնք դատավարական տեսանկյունից չեն կարող հանդիսանալ ապացույցներ, սակայան ներկայացնում են ՁԼՄ-ների բացահայտումները, որոնք հնարավորություն են տալիս կարծիք կազմելու համար, մասնավորապես՝

- Վանաձորի 23/53 ընտրատեղամասում արձանագրվել են ընտրողների ուղղորդման վերաբերյալ հաղորդումներ,
- Աշտարակի 17/11 ընտրատեղամասում օգնության կարիք ունեցող ընտրողների քվեարկության գործընթացին ապօրինի կերպով մասնակցել են իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչներ,
- Մարտունու Ծակքար գյուղում արձանագրվել են ընդդիմադիր քաղաքական ուժի քարոզչական նյութերի հեռացման դեպքերի վերաբերյալ հրապարակումներ, որոնք վերագրվել են համայնքային մարմինների ցուցումներին:

Միաժամանակ հրապարակվել են տեղեկություններ քվեարկության ընթացքում տեղի ունեցած մի շարք այլ խախտումների վերաբերյալ, այդ թվում՝

- նույն անձի կողմից բազմակի քվեարկության կասկածների,
- ընտրողներին որոշակի քաղաքական ուժի օգտին ուղղորդելու,
- ընտրողներին ամբողջական կամ հավասար քանակությամբ քվեաթերթիկներ չտրամադրելու,
- ընտրատեղամասերում քաղաքական քարոզչություն իրականացնելու,
- ընտրողների ցուցակներում փաստացի չբնակվող կամ մահացած անձանց ընդգրկված լինելու,
- ընտրատեղամասերի տարածքներում պաշտոնատար անձանց անթույլատրելի ներկայության և ազդեցության վերաբերյալ:

Վերոնշյալ տեղեկությունները վերաբերում են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և համայնքների՝ Գեղարքունիքի, Լոռու, Արմավիրի, Արագածոտնի և այլ վարչատարածքային միավորների, ինչպես նաև ընտրական գործընթացի տարբեր փուլերի՝ նախընտրական քարոզչությունից մինչև քվեարկության օր: Դրանք ներառում են պետական և համայնքային կառավարման տարբեր մակարդակների պաշտոնատար անձանց գործողություններ, կրթական հաստատությունների ներգրավում, ընտրողների ուղղորդման, վարչական ազդեցության մասին բազմաթիվ հաղորդումներ:

Այս հանգամանքների ամբողջական համադրությունը ձևավորում է ողջամիտ և հիմնավորված կասկած, որ արձանագրված դեպքերը չեն հանդիսանում առանձին, միմյանցից անկախ և պատահական միջադեպեր, այլ վկայում են վարչական ռեսուրսի կիրառման համակարգային մեխանիզմների առկայության մասին, որոնց նպատակը եղել է ընտրողների կամարտահայտման գործընթացի վրա ազդեցություն գործադրելը և ընտրական մրցակցության հավասար պայմանների խախտումը:

Հաշվի առնելով ներկայացված փաստական տվյալների ծավալը, ներգրավված պաշտոնատար անձանց շրջանակը և խախտումների բնույթը՝ առկա են հստակ տեղեկություններ, ինչպես նաև ՀԼՄ-ների կողմից հրապարակված տեղեկություններ, որոնք հիմք են տալիս հանգելու հետևության, որ առկա է Ընտրական իրավունքի խախտման գործընթաց վարչական ռեսուրսի կիրառմամբ, ինչը կրել է համատարած բնույթ, եղել շարունակական, ինչն էլ էական ազդեցություն է թողել ընտրությունների ազատության, արդարության և արդյունքների հավաստիության վրա:

*Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը՝ «**Վարչական ռեսուրսի կիրառում 1**»*

2. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԹԱՔՆՎԱԾ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

2.1. Ազգային ժողովի ընտրություններին նախորդած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության գործադիր

իշխանության ներկայացուցիչները, այդ թվում՝ բարձրագույն պետական պաշտոն զբաղեցնող անձինք, պարբերաբար իրականացրել են աշխատանքային այցեր Հանրապետության տարբեր մարզեր և համայնքներ, կազմակերպել բազմամարդ հանդիպումներ, մասնակցել պետական, համայնքային և հանրային միջոցառումների, ինչպես նաև հանդես եկել լայն հանրային հետաքրքրություն առաջացնող ելույթներով և հայտարարություններով, որոնք ուղեկցվել են նախընտրական ժամանակահատվածում կիրառվող նշաններով /տպագրված սիմվոլ, որն արտահայտում է մատերով սրտիկի ցուցադրում պատկեր, ՀՀ քարտեզ կոնկրետ գույնով և ձևաչափով, գույների համադրություն և այլն/: Թեև նշված միջոցառումները պաշտոնապես ներկայացվել են որպես պետական կառավարման, հանրային հաշվետվողականության և ծառայողական լիազորությունների իրականացման շրջանակներում կատարվող գործողություններ, դրանց իրականացման հաճախականությունը, կազմակերպման ձևը, բովանդակությունը և հանրային ներկայացման եղանակը վկայում են, որ դրանք ունեցել են ոչ միայն վարչական կամ կառավարչական, այլև ակնհայտ քաղաքական բնույթ և ազդեցություն:

Հարկ է նկատել, որ նախընտրական քարոզարշավը սկսվել է 2026 թվականի մայիսի 08-ին, սակայն մինչ այդ տեղի ոն ունեցել տարբեր միջոացառումներ և հրապարակումներ, որոնք պարունակել են վերևը նշված քարոզչական նյութերը:

Մի շարք դեպքերում գործադիր իշխանության ներկայացուցիչները հանրային միջոցառումներին և քաղաքացիների հետ հանդիպումներին մասնակցել են այնպիսի խորհրդանշաններով և տարբերանշաններով, որոնք նույնացվում են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչության հետ: Այդ համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պաշտոնատար անձինք հանդես են եկել Հայաստանի Հանրապետության քարտեզի պատկերով կրծքանշաններով, որոնք իշխող քաղաքական ուժի կողմից նախընտրական քարոզչության ընթացքում ներկայացվել են որպես այսպես կոչված «Իրական Հայաստանի» խորհրդանիշ: Հաշվի առնելով այդ խորհրդանիշի քաղաքական բովանդակությունն ու դրա օգտագործման համատեքստը՝ ակնհայտ է, որ պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից դրա կիրառումը չէր կարող ընկալվել բացառապես որպես չեզոք կամ պետական

նշանակության գործողություն, այլ պարունակում էր հստակ ընտրական ենթատեքստ:

Նման պայմաններում պետական իշխանության ներկայացուցիչների կողմից քաղաքական բովանդակություն ունեցող խորհրդանիշների օգտագործումը, հատկապես այն ժամանակահատվածում, երբ պաշտոնական նախընտրական քարոզչությունը դեռևս չէր սկսվել, ազդել է ընտրողների քաղաքական ընկալումների և նախապատվությունների ձևավորման վրա՝ վերջիններիս համար ստեղծելով նախնական և կանխակալ պատկերացումներ քաղաքական գործընթացի մասնակիցների վերաբերյալ: Ավելին, այդ ազդեցությունն իրականացվել է այն փուլում, երբ ընտրողները դեռևս հնարավորություն չեն ունեցել ծանոթանալու ընտրություններին մասնակցող մյուս քաղաքական ուժերի ծրագրերին, գաղափարախոսությանը և քաղաքական առաջարկներին, ինչը կարող էր խաթարել քաղաքական մրցակցության հավասար պայմանները:

Կարևոր է նաև արձանագրել, որ նման գործունեությունը մնացած քաղաքական ուժերի նկատմամբ ստեղծել է անհամաչափ և ոչ արդարացված առավելություն: Այդ առավելությունը պայմանավորված է եղել ոչ թե տվյալ քաղաքական ուժի քաղաքական ծրագրերով կամ հանրային աջակցության մակարդակով, այլ այն հանգամանքով, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը միաժամանակ հանդիսացել է գործադիր իշխանության կրող քաղաքական ուժը և փաստացի օգտվել է պետական կառավարման համակարգին բնորոշ կազմակերպչական, տեղեկատվական և հանրային ռեսուրսներից, որոնք իրենց ծավալով և հասանելիությամբ անհամեմատ գերազանցում են մյուս քաղաքական ուժերի հնարավորությունները:

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ նշված միջոցառումները լայնորեն լուսաբանվել են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր զանգվածային լրատվության միջոցներով, պետական մարմինների և պաշտոնատար անձանց պաշտոնական տեղեկատվական հարթակներով, սոցիալական ցանցերի պաշտոնական էջերով և հանրային հաղորդակցության այլ միջոցներով: Արդյունքում գործող իշխանության ներկայացուցիչները շարունակաբար գտնվել են հանրային ուշադրության կենտրոնում՝ ստանալով տեղեկատվական և հաղորդակցական այնպիսի առավելություն,

որը փաստացի անհասանելի է եղել ընտրական գործընթացի մյուս մասնակիցներին:

Հատկանշական է նաև, որ նկարագրված գործունեությունն իրականացվել է ընտրական գործընթացին անմիջապես նախորդող ժամանակահատվածում և ժամանակային առումով համընկել է ընտրողների քաղաքական նախապատվությունների ձևավորման առավել զգայուն փուլի հետ: Այդ պայմաններում պետական պաշտոն զբաղեցնող անձինք հնարավորություն են ստացել իրենց քաղաքական ուղերձները տարածել ոչ միայն որպես քաղաքական ուժի ներկայացուցիչներ, այլև որպես պետական իշխանության կրողներ՝ օգտվելով իրենց պաշտոնեական կարգավիճակից, հեղինակությունից և հանրային ճանաչելիությունից:

Վերոգրյալի արդյունքում ձևավորվել է այնպիսի տեղեկատվական և քաղաքական միջավայր, որտեղ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից մեկը ստացել է շարունակական, համակարգային և էական առավելություն: Այդ առավելությունը պայմանավորված է եղել ոչ թե բացառապես քաղաքական ծրագրերի մրցակցությամբ, գաղափարների ազատ պայքարով կամ նախընտրական քարոզչության արդյունավետությամբ, այլ պետական իշխանության լծակների, պաշտոնեական կարգավիճակի, վարչական հնարավորությունների և հանրային ռեսուրսների հասանելիության հանգամանքով:

Նշված փաստական հանգամանքների ամբողջությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ընտրական գործընթացին նախորդող և դրա հետ անմիջական ժամանակային ու բովանդակային կապ ունեցող ժամանակահատվածում պետական պաշտոնի առավելությունը կիրառվել է քաղաքական նպատակներով, իսկ պետական գործառույթների իրականացումն ու քաղաքական հաղորդակցությունը փաստացի միախառնվել են:

2.2. Ավելին՝ ընտրությունների օրը լրագրողների հարցին ի պատասխան, թե իշխող ուժը ինչու է օգտագործում իր նախընտրական նշանները /տպագրված սիմվոլ, որն արտահայտում է մատերով սրտիկի ցուցադրում պատկեր, ՀՀ քարտեզ կոնկրետ գույնով և ձևաչափով, գույների համադրություն և այլն/, լրագրողներին ի պատասխան կուսակցության լիազոր ներկայացուցիչը պատասխանում է, որ իրենք /նկատի է ունեցել լրագրողներին/ գտնվում են Քաղաքացիական պայմանագիր կուսակցության

շտաբում և դա իրենց դիզայն է և դա նորմալ է, իսկ մյուս ներկայացուցիչը նշում է, որ տարօրինակ կլիներ, որ իրենց շտաբում իրենց քարոզչանյութերը չլիներ /տեսանյութում այդ փաստը հաստատվում է 18-րդ րոպեից/:

Այսինքն՝ փաստացի իշխող ուժն ընդունում է այդ պատկերների քարոզչական նյութ հանդիսանալու փաստը: Սա ևս մեկ անգամ հիմնավորում է այն փաստը, որ Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունն ընդունում է, որ համապատասխան սիմվոլները և դիզայինները հանդիսանում են իրենց նախընտրական քարոզչության նյութերը:

Նշվածի համատեքստում կարող ենք փաստել, որ նախընտրական քարոզարշավի համար չի ապահովվել հավասար պայմաններ և թույլ են տրվել իշխող ուժի կողմից ընտրական օրենսդրության մի շարք խախտումներ, որոնք էական ազդեցություն են թողել ընտրությունների արդյուքնների վրա, մասնավորապես ստեղծել են անհավասար մոտեցում մնացյալ կուսակցությունների հետ, ինչի շրջանակներում մնացյալ կուսակցությունները զրկված են եղել հավասար պայմաններում իրականացնել քարոզարշավ:

*Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը՝ «**Թաքնված նախընտրական քարոզչություն 2**»:*

3. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԿԱՄՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

3.1. *ՀՀ կառավարության կողմից իրականացվել է Կենսաթոշակների, նպաստների և սոցիալական վճարների բարձրացում ընտրություններին անմիջապես նախորդող ժամանակահատվածում, մասնավորապես՝*

ՀՀ կառավարության 05.03.2026 թվականի թիվ 244-Ն որոշմամբ փոփոխություններ է իրականացվել ՀՀ կառավարության 26.12.2013 թվականի թիվ 1489-Ն որոշման մեջ, որն ուժի մեջ է մտել 01.04.2026 թվականին: Նշված որոշմամբ ընտրություններից 2 ամիս առաջ, իսկ քարոզարշավից մոտ մեկ ամիս առաջ կառավարությունն ընդունել է սոցիալական վճարների բարձրացմանն ուղղված որոշում:

Մասնավորապես՝

• ծերության նպաստ՝ 46 000 դրամ - ավելացել է 10.000 ՀՀ դրամով

• հաշմանդամության նպաստ՝ 49 000 դրամ - ավելացել է 10.000 ՀՀ դրամով

• կերակրողին կորցնելու դեպքում նպաստ՝ 46 000 դրամ,- ավելացել է 10.000 ՀՀ դրամով

• երկու ծնողին կորցրած երեխաների նպաստ՝ 130 000 դրամ – ավելացել է 30.000 ՀՀ դրամով

• թաղման նպաստ՝ 200 000 դրամ:

Սույն գործով վիճարկման առարկան սոցիալական քաղաքականության իրավաչափությունը չէ, այլ ընտրական գործընթացի համատեքստում էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ տվյալ որոշումը կայացվել է ընտրություններին մասնակցող նույն քաղաքական ուժի կողմից, որը միաժամանակ հանդիսանում էր գործադիր իշխանության կրող և դա կատարվել է ընտրությունների նախաշեմին:

Արդյունքում ընտրողների զգալի շրջանակի մոտ ձևավորվել է սոցիալական բարելավումների և ընտրություններին մասնակցող քաղաքական ուժի նկատմամբ սոցիալական աջակցության պայմանավորված դրական վերաբերմունք, այսինքն՝ այս կուսակցությունը թիրախավորեց սոցիալական ամենախոցելի խավին և բյուջեի օգտագործմամբ հնարավորություն ստեղծեց ազդել վերջիններիս ընտրական կամահայտնության վրա:

Անհրաժեշտ է փաստել, որ գործող քաղաքական ուժը ամբողջ կառավարման ընթացքում չի իրականացրել որևէ սոցիալական բարելավման գործընթաց և դա իրականացրեց հենց ընտրությունների նախաշեմին: Նշվածը ակնհայտորեն անհավասար պայմաններ ստեղծեց մնացյալ կուսակցությունների նկատմամբ:

3.2. *ՀՀ կառավարության կողմից ընտրություններից օրեր առաջ իրականցվել է պարտքերի ներման գործընթաց, մասնավորապես*

ՀՀ Կառավարության 2026 թվականի մայիսի 27-ի թիվ 748-Ա որոշմամբ ՀՀ կառավարությունը ներել է ՀՀ կառավարության 2023 թվականի թիվ 2326-Ն որոշմամբ սահմանված որոշ կատեգորիայի անձանց

պարտավորություններ, որոնց պարտքը չի գերազանցել 5.000.000 ՀՀ դրամը:

Հարկ է նակտել, որ այդ պարտավորությունը դեռևս 2023 թվականից մինչ օրս որևէ այլ պարտավորություն չի զիջվել պետության կողմից և այդ պարտավորությունները հիմնականում վերաբերել են Լեռնային Ղարաբաղի քաղաքացիներին, ինչպես նաև ՀՀ քաղաքացիներին, ինչի շնորհիվ քաղաքական իշխանությունը ընտրություններից առաջ փորձեց ներգադել վերջիններիս կամահայտնության վրա թիրախավորելով կրկին անգամ խոցելի խմբի, իսկ ծրագրի շահառուների շրջանակը եղել է լայն, իսկ տնտեսական ազդեցությունը՝ էական:

Թեև կառավարությունը ծրագիրը ներկայացրել է որպես սոցիալական աջակցության միջոցառում, սակայն դրա ընդունման ժամանակահատվածը, ընտրություններին անմիջականորեն նախորդելը, շահառուների մեծ քանակը և քաղաքացիների ֆինանսական վիճակի վրա անմիջական ազդեցությունը սույն հանգամանքին տալիս են առանձնահատուկ սահմանադրաիրավական նշանակություն:

Հատկանշական է, որ ցեսիան իրականացվել է 2023 թվականին, իսկ փաստացի պարտքի զիջումը ընտրություններից 10 օր առաջ:

ՀՀ կառավարության այս որոշումները ընտրողի իրական կամքի վրա իշխանական լիազորությունների օգտագործմամբ ազդեցության գործադրում է: Նշված փաստերը ազդել են ընտրության արդյուքների վրա և կրել են հստակ մեխանիզմով կազմակերպված զանգվածային բնույթ /շահառուների ահռելի քանակ/, որով անհավասար պայմաններ են ստեղծել մնացյալ քաղաքական ուժերի համար:

Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը՝ ***«Կառավարության որոշումներ որպես, ընտրական ազդեցություն 3»***

4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՎԱԽԻ, ՍՊԱՌՆԱԼԻՔԻ, ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ

Ընտրական գործընթացի ընթացքում և դրանից հետո արձանագրվել են մի շարք հանգամանքներ, որոնք առերևույթ հիմք են տալիս կասկածի

տակ դնելու ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների, մասնավորապես՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ինչպես նաև իրավապահ մարմինների անկախությունը, անաչառությունը և քաղաքական չեզոքությունը Ընտրական գործընթացների նկատմամբ:

4.1. 2026 թվականի մայիսի 20-ին նախընտրական քարոզչության ընթացքում գործող իշխանության ղեկավարի՝ ընտրություններին մասնակցող իշխող քաղաքական ուժի առաջնորդի՝ Նիկոլ Փաշինյանի կողմից հրապարակային հայտարարություններ են հնչեցվել այն մասին, որ մոտ ապագայում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության մարմինների կողմից հաղորդում է ներկայացվելու և իրականացվելու են գործողություններ, որոնք առնչվելու են ընդդիմադիր քաղաքական ուժի՝ Բարգավաճ Հայաստան կուսակցության պադգամավորի թեկնածու Անդրանիկ Թևանյանի նկատմամբ պետական դավաճանության համար քրեական հետապնդում հարուցելու և ձերբակալելու վերաբերյալ:

Սույն հայտարարությունից անմիջապես հետո 2026 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության Ազգային Անվտանգության ծառայության կողմից իրականացվել է Անդրանիկ Թևանյանի ձերբակալում՝ նույն բնույթի մեղադրանքների կամ կասկածների շրջանակներում, որոնց մասին նախապես հրապարակային կերպով հայտարարել էր իշխող քաղաքական ուժի առաջնորդը:

Նշված հանգամանքը կարևոր է այն տեսանկյունից, որ իրավական պետության պայմաններում քրեական հետապնդման, օպերատիվ-հետախուզական կամ ազգային անվտանգության ոլորտին վերաբերող գործողությունների նախաձեռնումը պետք է իրականացվի բացառապես իրավասու մարմինների կողմից և հիմնված լինի օրենքով սահմանված ընթացակարգերի վրա, այլ ոչ թե քաղաքական հայտարարությունների կամ նախընտրական հռետորաբանության շրջանակներում նախապես ազդարարվի քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից:

Այս տեսանկյունից նման ժամանակային և բովանդակային համընկնումները փաստում են, որ իրավապահ մարմնի գործունեությունը գտնվում է քաղաքական ազդեցության ներքո և օգտագործվում է ընտրական գործընթացի ընթացքում քաղաքական նպատակներով:

Նշենք, որ այսպիսի իրավիճակը հատկապես կարևոր է ընտրությունների ժամանակ, որովհետև քաղաքական ուժերը նախընտրական գործնեության ընթացքում պետք է գործեն հավասար պայմաններում և զերծ լինեն պետական հարկադրանքի կամ դրա սպառնալիքի գործադրման ազդեցությունից:

Բացի այդ, ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայացուցիչների նկատմամբ ընտրական գործընթացի ակտիվ փուլում իրականացվող իրավապահ գործողությունները, անկախ դրանց իրավական հիմնավորվածությունից, կարող են օբյեկտիվորեն ազդեցություն ունենալ ոչ միայն տվյալ անձանց, այլ նաև նրանց քաղաքական համակիրների, քարոզչական թիմերի և ընտրողների վրա՝ **ձևավորելով վախի, ճնշման կամ հնարավոր հետապնդման մթնոլորտ:**

Վերոգրյալ հանգամանքների համակցությունը հիմք է տալիս ենթադրելու, որ ընտրական գործընթացի ընթացքում պետական մարմինների, մասնավորապես՝ իրավապահ մարմինների գործունեության և իշխող քաղաքական ուժի քաղաքական շահերի միջև առկա հնարավոր փոխկապակցվածությունը պետք է դառնա համակողմանի իրավական գնահատման առարկա, քանի որ այն առերևույթ վկայում է վարչական ռեսուրսի կիրառման, քաղաքական մրցակցության անհավասար պայմանների ձևավորման և ընտրություններին մասնակցող այլ քաղաքական ուժերի նկատմամբ ճնշման և վախի մթնոլորտի ստեղծման մասին:

4.2. Ընտրությունների ավարտից անմիջապես հետո քրեական հետապնդում է նախաձեռնվել ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերից մեկի՝ Բարգավաճ Հայաստան կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյան նկատմամբ: Ըստ հրապարակային տեղեկությունների՝ այդ գործընթացը ժամանակային առումով համընկնում է այն փուլին, երբ տվյալ քաղաքական ուժը վիճարկել է ընտրությունների արդյունքները և դիմել է ընտրական մարմիններին՝ ձայների վերահաշվարկի պահանջով:

Թեև քրեական վարույթի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ընտրական իրավունքի խախտման ապացույց, սակայն նման գործընթացների ժամանակային համընկնումը ընտրական վեճերի և ընտրությունների արդյունքների վիճարկման գործընթացների հետ օբյեկտիվորեն կարող է առաջացնել հիմնավոր հարցադրումներ իրավապահ

մարմինների գործողությունների քաղաքական չեզոքության և ընտրական գործընթացի նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովման վերաբերյալ:

Վերոնշյալ հանգամանքների ամբողջական գնահատումը ցույց է տալիս, որ ընտրական գործընթացի ընթացքում վարչական ռեսուրսի հնարավոր կիրառման վերաբերյալ բազմաթիվ հրապարակային հաղորդումներ և ահազանգեր չեն ստացել հանրությանը տեսանելի, արդյունավետ և համարժեք արձագանք, իսկ վերահսկողություն և իրավական գնահատում իրականացնող մարմինների գործողությունները չեն ապահովել ընտրական գործընթացի նկատմամբ անհրաժեշտ վստահության մակարդակը:

Այս փաստական հանգամանքների համակցությունը հիմք է տալիս ենթադրելու, որ վարչական ռեսուրսի կիրառման վերաբերյալ տեղեկությունների քննությունը կարող էր իրականացվել ոչ բավարար արդյունավետությամբ, իսկ ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների գործունեությունը չի չապահովում անկախության, անաչառության, քաղաքական չեզոքության և արդյունավետ իրավական պաշտպանության այն չափանիշները, որոնք բխում են ազատ և արդար ընտրությունների սահմանադրական ու միջազգային սկզբունքներից:

4.3. Նախընտրական քարոզչության ընթացքում հանրային լայն արձագանք է ստացել Հայաստանի Հանրապետության վարչապետի և նույն ինքը քաղաքացիական պայմանագիր կուսակցության պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպի տեսագրությունը, որում արձանագրված է վերջինիս անմիջական շփումը իրեն մոտեցած կնոջ հետ: Տեսանյութից երևում է, որ վարչապետը կնոջ նկատմամբ դրսևորում է ակնհայտ ագրեսիվ, ճնշող և նվաստացնող վարքագիծ՝ կիրառելով սպառնալիքի, վախի և թշնամանքի տարրեր պարունակող արտահայտություններ, ինչպես նաև ֆիզիկական միջամտություն և քաշքշուկի տարրեր պարունակող գործողություններ: */հարկ է նկատել, որ մի կողմում կին քաղաքացի է, իսկ մյուս կողմում պաշտոնատար անձ-նախընտրական քարոզչություն իրականացնող պատգամավորի թեկնածու/*

ՀՀ վարչապետ- նախընտրական քարոզչություն իրականացնող պատգամավորի թեկնածուի կողմից բազմիցս օգտագործվել են այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են՝ **«կզացնելու եմ», «չոքցնելու եմ», «սատկացնելու եմ», ինչպես նաև տարբեր քաղաքական գործիչների և նրանց աջակիցների հասցեին հնչեցվել են վիրավորական բնույթի և սպառնալիք պարունակող արտահայտություններ:**

Միջադեպը տեղի է ունեցել ոչ թե մասնավոր միջավայրում, այլ հանրային միջոցառման ընթացքում՝ բազմաթիվ քաղաքացիների, լրագրողների և տեսախցիկների ներկայությամբ: Տեսագրությունը հետագայում լայնորեն տարածվել է զանգվածային լրատվության միջոցներով և սոցիալական հարթակներով՝ *հասանելի դառնալով անորոշ թվով ընտրողների:*

Տվյալ հանգամանքը առանձնահատուկ իրավական նշանակություն է ստանում այն պատճառով, որ նման վարքագիծը դրսևորվել է Հայաստանի Հանրապետության գործող վարչապետի կողմից, որը միաժամանակ հանդիսանում է ընտրություններին մասնակցող քաղաքական ուժի առաջնորդ և վարչապետի թեկնածու: Հետևաբար նրա խոսքերն ու գործողությունները չեն կարող դիտարկվել որպես սովորական միջանձնային վիճաբանություն կամ քաղաքական բանավեճի շրջանակներում հնչած գնահատականներ: Հանրային իշխանության բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձի կողմից քաղաքացու նկատմամբ ագրեսիվ վերաբերմունքը, սպառնալից բառապաշարի օգտագործումը և ֆիզիկական ներգործության տարրեր պարունակող վարքագիծը հասարակության համար փոխանցում են իշխանական գերակայության, անհանդուրժողականության և ճնշման հստակ ուղերձ, քանի որ տվյալ անձը ներկայացնում էր երկրում տիրող խնդիրների մասին տեղեկություններ և ըստ էության հանդսանում էր ընդիմադիր քաղաքացի */առկա չէ տեղեկություն, թե տվյալ անձը աջակցում է այլ քաղաքական ուժի, թե ոչ/:*

Մասնավորապես, տեսագրությունից երևում է, որ կինը ներկայացնում էր իր դժգոհությունը գործող իշխանության գործունեության վերաբերյալ՝ առանց որևէ քաղաքական ուժի անուն տալու կամ որևէ ընդդիմադիր քաղաքական գործչի հետ իր կապը նշելու: Այնուամենայնիվ, վարչապետը՝ ընտրական քարոզարշավ իրականացնող անձը վերջինիս նույնացնում է քաղաքական այլ ուժերի ընդդիմախոսների հետ՝ օգտագործելով այնպիսի

ձևակերպումներ, որոնց ընդհանուր իմաստը հանգում է քաղաքական հակառակորդներին «**կզացնելու եմ», «չոքցնելու եմ», «սատկացնելու եմ», պատրաստակամության** ցուցադրմանը, իսկ կնոջ նկատմամբ վերաբերմունքը ըստ էության առաջացել էր այն պատճառով, որ միգուցե վերջինս հարում է այլ քաղաքական ուժերի, որոնց հասցեին ՀՀ վարչապետ հանդիսացող անձը հնչեցրել էր «**կզացնելու եմ», «չոքցնելու եմ», «սատկացնելու եմ» արտահայտությունները**: Ընդ որում, խոսքում բազմիցս օգտագործվել են կոպիտ, նվաստացնող և ագրեսիվ արտահայտություններ, որոնք ուղղված են եղել ինչպես տվյալ քաղաքացուն, այնպես էլ տարբեր քաղաքական գործիչների և նրանց աջակիցների նկատմամբ:

Առանձնակի մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ միջադեպի ընթացքում կինը ենթարկվել է ոչ միայն բանավոր խոսքի ճնշման, այլև ֆիզիկական ներգործության տարրեր պարունակող վերաբերմունքի: Հանրային տարածքում պետական բարձրագույն պաշտոնյայի կողմից, ով իրականացրել է այդ պահին քարոզարշավ քաղաքացուն քաշքշելը, նրա նկատմամբ ուժի ցուցադրումը և նվաստացնող վերաբերմունքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ որևէ կերպ իրավապահ մարմինները դրան չեն միջամտել օբյեկտիվորեն փաստում է այնպիսի գործողություն, որը հանրության մեջ ներշնչում է վախ և անհանգստություն : Նման վարքագիծը հանրությանը փոխանցում է այն ուղերձը, որ իշխանության ներկայացուցիչներին քննադատող կամ նրանց գործունեությունից դժգոհություն հայտնող անձինք ենթարկվելու են հրապարակային թիրախավորման և նվաստացման:

Միաժամանակ, նույն ելույթներում և հրապարակային հայտարարություններում խոսքում առանձնացվել են նաև **արցախցիները կամ Արցախի բարբառով խոսող անձինք՝ նրանց բնութագրելով որպես «փախածներ», «վախկոտներ», «լակոտներ» և այլ նվաստացնող որակումներով**: Նման հռետորաբանությունը ոչ միայն խորացնում է հասարակական բևեռացումը, այլև ձևավորում է ատելության և անհանդուրժողականության մթնոլորտ՝ ուղղված որոշակի խմբերի նկատմամբ:

Ընտրական իրավունքի տեսանկյունից նման վարքագիծը չի սահմանափակվում խոսքի ազատության շրջանակներում քաղաքական

գնահատականներ արտահայտելով: Երբ պետական իշխանության բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձը նախընտրական քարոզչության ընթացքում ցուցաբերում է ագրեսիվ, սպառնալից և նվաստացնող վարքագիծ քաղաքացիների, քաղաքական ընդդիմախոսների կամ հասարակական խմբերի նկատմամբ, դա ընտրողների մոտ արդենիսկ ձևավորում է վախի մթնոլորտ և այն համոզմունքը, որ իշխանությանը քննադատելը կամ այլ քաղաքական դիրքորոշում արտահայտելը հանգեցնում է թիրախավորման, հանրային նվաստացման կամ այլ բացասական հետևանքների:

Արդյունքում սահմանափակվում է քաղաքական կարծիքների ազատ արտահայտման հնարավորությունը, խաթարվում է ընտրողների կամքի ազատ ձևավորման միջավայրը, ձևավորվում է ինքնագրաքննության մթնոլորտ, իսկ ընտրական գործընթացը հեռանում է ազատ և հավասար մրցակցության սահմանադրական չափանիշներից:

Հաշվի առնելով խոսքի հեղինակի պաշտոնական կարգավիճակը, միջադեպի հանրային բնույթը, քաղաքացու նկատմամբ դրսևորված ագրեսիվ և ֆիզիկական ներգործության տարրեր պարունակող վարքագիծը, դրա լայն տարածումը տեղեկատվական հարթակներում, ինչպես նաև ընտրական գործընթացի ակտիվ փուլում տեղի ունենալու հանգամանքը՝ տվյալ գործողությունները ապացուցում է այն փաստը, որ վերջինս ազդում է ընտրողների ազատ կամարտահայտման վրա, նպաստելով վախի, սպառնալիքի և ատելության մթնոլորտի ձևավորմանը, ինչը անհամատեղելի է ազատ, արդար և ժողովրդավարական ընտրությունների հիմնարար սկզբունքների հետ:

4.4. 2026 թվականի մայիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում Երևանի Արաբկիր վարչական շրջանում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից անցկացվող քարոզչական հանդիպման ժամանակ տեղի է ունեցել միջադեպ ՀՀ վարչապետ-նախընտրական քարոզչություն իրականացնող պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի և Արցախի հեղափոխական կուսակցության նախագահ Արթուր Օսիպյանի միջև:

Հրապարակված տեսանյութերի և զանգվածային լրատվության միջոցներով տարածված տեղեկությունների համաձայն՝ Արթուր Օսիպյանը մոտեցել է քարոզչական միջոցառման վայրում գտնվող Նիկոլ Փաշինյանին

և վերջինիս ուղղել մի շարք հարցադրումներ՝ կապված Արցախի, ազգային անվտանգության և հանրային հետաքրքրություն ներկայացնող քաղաքական հարցերի հետ: Հարցադրումների ընթացքում կողմերի միջև ծագել է բանավեճ, որը վերածվել է հրապարակային վիճաբանության:

Նույն աղբյուրների համաձայն՝ վիճաբանության ընթացքում Նիկոլ Փաշինյանը Արթուր Օսիպյանի հասցեին հնչեցրել է կոշտ և վիրավորական բնույթի արտահայտություններ, իսկ նրա անվտանգությունն ապահովող անձինք միջամտել են և հեռացրել Արթուր Օսիպյանին միջոցառման անմիջական տարածքից: Միջադեպը տեղի է ունեցել բազմաթիվ քաղաքացիների ներկայությամբ և լայնորեն լուսաբանվել է զանգվածային լրատվության միջոցներով ու սոցիալական ցանցերում՝ հասանելի լինելով ընտրողների լայն զանգվածին:

Միջադեպից անմիջապես հետո Արթուր Օսիպյանը ձերբակալվել է: Նրա նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, այդ թվում՝ նախընտրական քարոզչությանը խոչընդոտելու, խուլիգանության և բռնություն գործադրելու հրապարակային կոչերի հատկանիշներով, իսկ դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, որից հետո վերջինիս կալանք խափանման միջոցը փոխարինվել է:

Վերոգրյալ փաստական հանգամանքները վերաբերում են նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված միջադեպին, որը լայն հանրային արձագանք է ստացել և անմիջականորեն առնչվել է ընտրական գործընթացի շրջանակներում քաղաքական գործիչների և քաղաքացիների միջև հաղորդակցությանը:

Նկարագրված հանգամանքների համակցությունը վկայում է, որ նախընտրական քարոզչության ընթացքում պաշտոնատար անձի կողմից կիրառվել է ագրեսիվ և սպառնալիք պարունակող քաղաքական խոսույթ, որը էական ազդեցություն է ունեցել ընտրողների ազատ կամարտահայտման միջավայրի վրա, սահմանափակել քաղաքական բազմակարծության մթնոլորտը և որոշ ընտրողների մոտ առաջացնել իրենց քաղաքական դիրքորոշումն ազատորեն արտահայտելու կամ ընդդիմադիր քաղաքական ուժերին աջակցելու հետ կապված վախեր ու զսպվածություն:

Վերոգրյալ փաստական տվյալները ենթակա են գնահատման՝ ընտրական գործընթացում ընտրողների ազատ կամարտահայտման,

հավասար քաղաքական մրցակցության, քաղաքական չեզոքության և ազատ ընտրությունների սահմանադրական ու միջազգային չափանիշների տեսանկյունից, քանի որ դրանք առերևույթ կարող են վկայել ընտրողների կամքի ձևավորման գործընթացի վրա անթույլատրելի հոգեբանական ազդեցության և ճնշման միջավայրի ձևավորման մասին:

Այս հանգամանքը կարևոր է, քանի որ ժողովրդավարական ընտրությունների լեգիտիմությունը պայմանավորված է ոչ միայն իրավական ընթացակարգերի պահպանումով, այլ նաև հանրային վստահությամբ ընտրական գործընթացի նկատմամբ:

Վերը նշված դեպքերը ուղղակի կերպով առաջացրել են վախի,անհավասարության, իշխանության ցուցադրման, ընտրական պայքարում անհավասար մոտեցման, կալանքի միջոցով պատժելու հետևքնաներ, որն ընտրական պայքարը վերածել է մի իրավիճակի, երբ անձը չի կարող ունենալ խոսքի ազատություն և քաղաքական գործչին քննադատելու հնարավորություն, որը ուղղակի ազդեցություն է ունեցել ընտրողի իրական կամքի, խոսքի արտահայտման և հետագայում այլ ուժին ընտրելու պարագայում նման վարքագծի արժանանալու մտավախության ձևավորմանը:

Հարկ է նկատել, որ ՀՀ վարչապետ հանդիսացող անձը, ով նախընտրական փուլում իրականացնում է քարոզչություն՝ որպես կուսակցության պատգամավորի թեկնածու պարտավոր է տարանաջատել վարչապետի և նախընտրական քարոզչություն իրականացնող անձի ելույթները և հայտարարությունները: Երբ նախընտրական քարոզչության ընթացքում պատգամավորի թեկնածու հանդսիացող անձը նաև հանդիսանում է ՀՀ վարչապետ */քննարկման առարկա չենք դարձնում ձերբակալման վերաբերյալ հաղորդման տարածման իրավաչափությունը/ և իր քարոզչության ընթացքում հայտարարում է, որ ձերբակալելու է անձանց և դրանից հետո իրավապահ համակարգը իրականացնում է այդ ձերբակալությունները, ապա* այս իրավիճակում պետք է նկատի ունենալ, որ տեղի է ունենում ոչ թե օրինական քարոզչություն, այլ տեղի է ունենում քարոզչություն, որն ուղղորդվում է իշխանական լիազորությունների օգտագործմամբ՝ եթե քարոզչության ընթացքում կիրառվում են ՀՀ վարչապետին հասու տեղեկություններ, իրավասություններ և այլ գործիքակազմեր: Նշված գործընթացները անհավասար պայմաններ են

ստեղծում այլ քաղաքական ուժերի նկատմամբ, ինչպես նաև ձևավորում են վախի մթնոլորտ և դիտարկվում են որպես ճնշման գործիքակազմեր, որն ուղղակի խաթարում է ընտրությունների գործընթացը և էական ազդեցություն է ունենում ընտրության արդյուքնների վրա:

*Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը «**Իշխանական ճնշումներ 4**»*

5. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՉ ՊԱՏՇԱՃ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

5.1. Ընտրական գործընթացի օրինականության գնահատման տեսանկյունից առանձնակի նշանակություն ունի այն փաստը, որ ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, նախքան քվեարկության օրը պաշտոնապես իրազեկված է եղել ընտրական գործընթացի վրա էական ազդեցություն ունեցող բազմաթիվ խախտումների մասին, սակայն չի ձեռնարկել այնպիսի արդյունավետ և համարժեք միջոցներ, որոնք կարող էին կանխել կամ վերացնել դրանց հետևանքները:

Մասնավորապես, 2026 թվականի հունիսի 2-ին «ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» կուսակցության լիազոր ներկայացուցչի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել գրավոր դիմում, որով ԿԸՀ-ի ուշադրությունն է հրավիրվել նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված և հանրային տիրույթում լայնորեն տարածված մի շարք փաստերի վրա, որոնք առերևույթ վկայում էին ընտրակաշառքի մեծ քանակի, վարչական ռեսուրսի ակնհայտ կիրառման, պետական և համայնքային լծակների ներգրավման, ինչպես նաև ընտրողների ազատ կամարտահայտության վրա ազդեցություն ունենալու այլ գործողությունների մասին: Դիմումին կից ներկայացվել են համապատասխան ապացույցներ, հրապարակումներ, տեսանյութեր: Նշվածի արդյունքում համաձայն ԿԸՀ գործունեության անհրաժեշտ էր անհապաղ միջամտություն և օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակում գործուն քայլերի իրականացում՝ ընտրական գործընթացի օրինականությունն ապահովելու նպատակով:

Նույն դիմումով Կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջվել է հայտնել, թե արդյոք հանձնաժողովը ձեռնարկում է համապատասխան միջոցներ արձանագրված խախտումները կանխելու, վերացնելու և դրանց հետևանքները չեզոքացնելու ուղղությամբ: Դիմումում նաև հատուկ ընդգծվել է, որ ընտրակաշառքի, վարչական ռեսուրսի և ընտրողների նկատմամբ ազդեցության նմանատիպ դրսևորումները նույնիսկ հետագայում պատասխանատվության միջոցների կիրառման պարագայում արդեն իսկ թողնում են անդառնալի ազդեցություն ընտրական գործընթացի վրա, քանի որ ձևավորում են ընտրողների վարքագիծը, խաթարում հավասար մրցակցային պայմանները և ազդում ընտրությունների արդյունքների վրա դեռևս մինչև քվեարկության օրը:

2026 թվականի հունիսի 3-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատասխանել է նշված դիմումին՝ փաստացի հաստատելով, որ բարձրացված հարցերը գտնվում է ԿԸՀ-ի վերահսկողության սահմաններում, մասանվորապես նշել է՝ **«Ձեր դիմումում ներկայացված, ինչպես նաև այլ հանգամանքների կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակներում ձեռնարկել է միջոցներ (հանդես է եկել հայտարարություններով, հարուցել է վարչական վարույթներ, ընդունել համապատասխան որոշումներ, համապատասխան միջնորդություններով դիմել է իրավապահ մարմիններին և այլն) իր ՀՀ օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով»**:

Հատկանշական է, որ ԿԸՀ-ի պատասխանում որևէ կերպ չի հերքվել դիմումով ներկայացված փաստերի առկայությունը, ինչպես նաև խախտումների անդառնալի ազդեցության հետևանքները ընտրական գործընթացի վրա:

Միաժամանակ, չնայած ԿԸՀ-ի կողմից հայտարարված գործողություններին, փաստացի որևէ արդյունավետ արդյունք չի արձանագրվել, ավելին՝ հայտնի չեն որևէ տեղեկություններ նշված գործընթացների զսպմանն ուղղված գործողությունների վերաբերյալ: Նախընտրական քարոզչության ընթացքում հրապարակված և ներկայացված նյութերի հիման վրա արձանագրված խախտումները չեն կանխվել, դրանց հետևանքները չեն վերացվել, իսկ ընտրական

գործընթացը շարունակվել և ավարտվել է նույն պայմաններում: Ավելին, ընտրությունները տեղի են ունեցել այն իրավիճակում, երբ ընտրակաշառքի, վարչական ռեսուրսի կիրառման և ընտրողների կամարտահայտության վրա ազդեցություն գործադրելու վերաբերյալ տեղեկությունները շարունակել են մնալ հանրային տիրույթում՝ առանց դրանց նկատմամբ համարժեք և արդյունավետ արձագանքի:

Հետևաբար, տվյալ հանգամանքը վկայում է ոչ միայն այն մասին, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացված է եղել ընտրական գործընթացի վրա ազդեցություն ունեցող խախտումների մասին, այլև այն մասին, որ հանձնաժողովի ձեռնարկած միջոցները ակնհայտորեն չեն ապահովել ընտրական գործընթացի բնականոն ընթացքը և չեն կանխել ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն թողնող գործընթացները: Սա, իր հերթին, էական նշանակություն ունի ընտրությունների արդյունքների իրավաչափության գնահատման համար, քանի որ վերահսկող մարմնի իրազեկված լինելու, սակայն արդյունավետ արձագանք չցուցաբերելու պայմաններում արձանագրված խախտումները շարունակել են գործել մինչև քվեարկության ավարտը՝ թողնելով ազդեցություն ընտրողների ազատ կամարտահայտության և ընտրությունների վերջնական արդյունքների վրա:

5.2. 2026 թվականի հունիսի 6-ին հանրային տեղեկությունների համաձայն՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության պատգամավորի թեկնածուն ձերբակալվել է ընտրակաշառք տալու կասկածանքով: Անկախ այն հանգամանքից, թե հետագայում քրեական վարույթի շրջանակներում ինչպիսի վերջնական իրավական գնահատական է տրվել տվյալ անձի գործողություններին, տվյալ փաստը ինքնին առաջացրել է ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված իրավական ընթացակարգերի կիրառման անհրաժեշտություն:

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասը նախատեսում է՝ եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող

կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից:

Հետևաբար, երբ իրավապահ մարմինների կողմից արդեն իսկ իրականացվել է ձերբակալություն ընտրակաշառքի կասկածով, որից հետո առաջադրվել է մեղադրանք, ապա ԿԸՀ-ն չէր կարող այդ փաստը անտեսել և պարտավոր էր առնվազն նախաձեռնել օրենքով նախատեսված վարույթ և քննարկման առարկա դարձնել այս հարցը, ինչի շրջանակներում հավաքագրեր անհրաժեշտ տեղեկությունները և քննարկեր տվյալ կուսակցության գրանցումը ուժը կորցրած ճանաչելու հարցը և նվազագույնը հասկանար արդյոք առկա են հիմքեր ՀՀ վարչական դատարան դիմելու համար, ինչը նշված իրավիճակում չի կատարել:

ԿԸՀ-ն որևէ գործողություն չի իրականացրել, չի նախաձեռնել համապատասխան վարույթ, չի քննարկել թեկնածուի գրանցման հարցը և չի ընդունել որևէ պատճառաբանված որոշում: Արդյունքում ընտրական գործընթացում պահպանվել է այնպիսի իրավիճակ, երբ ընտրակաշառքի կասկածով ձերբակալված անձի կուսակցությունը շարունակել է մնալ ընտրական գործընթացի մասնակից՝ առանց ընտրական մարմնի կողմից իրավաչափ գնահատականի /*նշված անձը ընտրությունների օրը ունեցել է մեղադրյալի կարգավիճակ*/:

Նման վարքագիծը փաստացի հանդիսանում է վարչական անգործություն:

ԿԸՀ-ի կողմից ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների չիրականացումը հանդիսանում է ընտրական վարչարարության էական թերություն և իրավական անգործություն:

Այդ պարտականության չկատարումը հանգեցրել է ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողության թուլացման, ընտրությունների մասնակիցների միջև հավասարության սկզբունքի խախտման և ընտրողների ազատ կամարտահայտման պաշտպանության

սահմանադրական երաշխիքների նվազեցման, ինչը գտնում ենք, որ ընտրությունների վրա էական ազդեցություն է թողել, քանի որ ԿԸՀ-ն չի կատարել իր վրա դրված պարտականությունները և վերջինիս կողմից արդյունքների ամփոփումը չի կարող վստահություն, արդարություն և քաղաքացիների իրական կամքի դրսևորում հանդիսանալ:

*Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը «**ԿԸՀ դիմում պատասխան 5**»*

6. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉՎԱԾ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել թիվ 10/51, 12/13 և 35/65 ընտրատեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչել: Նշվածի հետևանքով արձանագրված անճշտությունների ընդհանուր թիվը կազմել է 3395, ինչը կազմում է ԿԸՀ-ի կողմից վերջնական ամփոփմամբ արձանագրված 4331 անճշտությունների ճնշող մեծամասնությունը: Այսինքն՝ ընդհանուր անճշտությունների քանակը կազմում է 4331: Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ ընտրատեղամասերում արձանագրված խախտումներն ու անճշտություններն իրենց ծավալով էական ազդեցություն են ունեցել ընդհանուր արդյունքների հավաստիության և ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության վրա, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի ընդունել վերաքվեարկություն նշանակելու մասին որոշում՝ դա հիմնավորելով հետևյալ պատճառաբանությամբ՝

«...Մասնակի վերաքվեարկության դեպքում առաջանում է հետևյալ խնդիրը: Հիմնական քվեարկությանը մասնակցած ընտրողները քվեարկել են այն պահին, երբ ընդհանուր արդյունքը հայտնի չէր: Նրանք չգիտեին՝ ով է առաջատար, քանի ձայնի տարբերություն կա, որ ուժը կհաղթահարի շեմը կամ իրենց քվեն ինչ ազդեցություն կունենա վերջնական արդյունքի վրա:

Մինչդեռ վերաքվեարկության մասնակից ընտրողները քվեարկելու են արդեն այլ իրավիճակում՝ նրանց համար կարող է հայտնի լինել ընդհանուր պատկերը (տվյալ դեպքում ընտրությունների մասնակիցների 99,8 տոկոս):

Այս պայմաններում ընտրողի կամքը կարող է ձևավորվել ոչ թե իր սկզբնական քաղաքական նախապատվությամբ, ազատ կամարտահայտությամբ, այլ արդեն հայտնի արդյունքը խմբագրելու հաշվարկով: Այս ռիսկը սովորաբար բնութագրվում է որպես տակտիկական քվեարկություն (tactical voting):

Վենետիկի հանձնաժողովը ևս ընդունել է, որ մասնակի վերաքվեարկությունը միշտ չէ, որ պատշաճ միջոց է: 2025 թվականի հրատապ զեկույցում նշվում է, որ եթե խախտումները վերաբերում են միայն որոշ տեղամասերի, ապա արձագանքը սկզբունքորեն կարող է սահմանափակվել այդ տեղամասերով: Սակայն նույն մոտեցումը ունի կարևոր բացառություն. մասնակի վերաքվեարկությունը չի կարող պատշաճ միջոց լինել, եթե այդ տեղամասերում նոր քվեարկությունը, տակտիկական քվեարկության (tactical voting) հնարավորության պատճառով, չի երաշխավորի արդար ընտրական արդյունք:

Հավասար ընտրական իրավունքի տեսանկյունից ևս խնդիրը ակնհայտ է: Վերաքվեարկությունը կարող է խախտել ընտրողների հավասարությունը, քանի որ ընտրողների մեկ խումբը հայտնվում է մյուսներից էապես տարբեր ելակետային պայմաններում:»

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատճառաբանությունն, ըստ էության, հանգում է նրան, որ մասնակի վերաքվեարկությունը կարող էր խաթարել ընտրողների ազատ կամարտահայտումը, քանի որ վերաքվեարկությանը մասնակցող ընտրողները քվեարկելու էին արդեն հայտնի ընդհանուր արդյունքների պայմաններում, ինչը, ըստ ԿԸՀ-ի, կարող էր հանգեցնել այսպես կոչված «տակտիկական քվեարկության»: Սակայն նման հիմնավորումը չի կարող համարվել իրավաչափ և բավարար հիմք՝ օրենքով նախատեսված վերաքվեարկության մեխանիզմը չկիրառելու համար:

Նախ, ԿԸՀ-ն ինքն է արձանագրել, որ միայն թիվ 10/51, 12/13 և 35/65 ընտրատեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու արդյունքում արձանագրված անճշտությունների թիվը կազմել է 3395, մինչդեռ վերջնական ամփոփմամբ արձանագրված անճշտությունների ընդհանուր թիվը կազմել է 4331: Այսինքն՝ արձանագրված բոլոր անճշտությունների շուրջ 80 տոկոսը կենտրոնացած է եղել հենց այդ երեք ընտրատեղամասերում: Նման ծավալի խախտումները չեն կարող

դիտարկվել որպես ընտրության արդյունքների վրա չազդող տեխնիկական թերություններ դրանք օբյեկտիվորեն կասկածի տակ են դնում ընտրությունների արդյունքների արժանահավատությունը և հնարավորություն չեն տալիս հասկանալու ընտրությունների իրական պատկերը:

ԿԸՀ-ի պատճառաբանությունը հիմնված է բացառապես այն ենթադրության վրա, որ վերաքվեարկությանը մասնակցող ընտրողները կարող էին առաջնորդվել տակտիկական նկատառումներով: Սակայն իրավական պետությունում սահմանադրական իրավունքի սահմանափակումը չի կարող հիմնվել վերացական և չապացուցված կանխավարկածների վրա: ԿԸՀ-ն չի ներկայացրել որևէ փաստական տվյալ, մասնագիտական ուսումնասիրություն կամ կոնկրետ հանգամանք, որը կհիմնավորեր, որ տվյալ ընտրություններում մասնակի վերաքվեարկությունն անխուսափելիորեն կհանգեցներ ընտրողների կամքի աղավաղման:

ԿԸՀ-ի հղումը Վենետիկի հանձնաժողովի հրատապ զեկույցին չի կարող արդարացնել վերաքվեարկությունից հրաժարումը, քանի որ Վենետիկի հանձնաժողովի **«Ընտրական հարցերի լավ կառավարման օրենսգրքի»** /«Code of Good Practice in Electoral Matters» (CDL-AD(2002)023rev2-cor, https://docs-venice.coe.int/images/SITE%20IMAGES/Publications/Code_conduite_PREMS%20026115%20GBR.pdf)/ **3.3-րդ ենթագլխի e** կետով հստակ սահմանում է վերանայման և ընտրությունների անվավեր ճանաչման իրավական շրջանակը՝ ընդգծելով, որ՝

« Վերադաս/լիազոր/վերաքննիչ մարմինը պետք է ունենա լիազորություն չեղյալ համարելու ընտրությունները, եթե խախտումները կարող էին ազդել արդյունքների վրա: Պետք է հնարավոր լինի չեղյալ համարել ամբողջ ընտրությունը կամ միայն մեկ ընտրատարածքի կամ մեկ ընտրատեղամասի արդյունքները: ***Չեղյալ հայտարարման դեպքում տվյալ տարածքում պետք է նշանակվեն նոր ընտրություններ:*** */The appeal body must have authority to annul elections where irregularities may have affected the outcome. It must be possible to annul the entire election or merely the results for one constituency or one polling station.* ***In the event of annulment, a new election must be called in the area concerned.****/»*

Այս դրույթից բխում է, որ Վենետիկի հանձնաժողովի նշված մոտեցումը ոչ միայն չի սահմանափակում մասնակի վերաքվեարկության հնարավորությունը, այլ հակառակը՝ այն դիտարկում է որպես լիարժեք և ինքնուրույն իրավական միջոց՝ ընտրական իրավունքի խախտումների վերացման համար՝ առանց որևէ պարտադիր սահմանափակման, որը կբացառեր առանձին ընտրատեղամասերում նոր քվեարկության անցկացումը:

Վերոգրյալին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը: Առանձնապես նշանակալի է **«Դավիդովն ու մյուսներն ընդդեմ Ռուսաստանի» գործը (թիվ 75947/11, 30.05.2017),** որտեղ Եվրոպական դատարանը արձանագրել է, որ ընտրությունների ընթացքում տեղի ունեցած այնպիսի խախտումները, որոնք կարող են կասկածի տակ դնել ընտրության արդյունքների արժանահավատությունը, պահանջում են արդյունավետ արձագանք, ներառյալ՝ համապատասխան ընտրատեղամասերում արդյունքների վերանայում կամ քվեարկության կրկնություն: Դատարանը շեշտել է, որ ընտրական գործընթացի նկատմամբ վստահությունը չի կարող պահպանվել, եթե ընտրական մարմինները հրաժարվում են կիրառել այնպիսի միջոցներ, որոնք ունակ են վերականգնելու ընտրողների իրական կամքը:

Իրավունքի գերակայության, համաչափության և արդյունավետ իրավական պաշտպանության սկզբունքներից բխում է, որ ընտրական մարմինը պարտավոր էր ընտրել այն միջոցը, որը նվազագույն չափով կսահմանափակեր ընտրական իրավունքները և առավելագույն չափով կապահովեր ընտրողների իրական կամքի բացահայտումը: Տվյալ դեպքում մասնակի վերաքվեարկությունը հանդիսանում էր հենց այդպիսի միջոց՝ առավել համաչափ, նպատակային և արդյունավետ իրավական արձագանք:

Հետևաբար, ԿԸՀ-ի այն պատճառաբանությունը, թե վերաքվեարկությունը կարող էր առաջացնել տակտիկական քվեարկության կամ ընտրողների անհավասարության ռիսկեր, չի համապատասխանում իրավական հիմնավորվածության, փաստական որոշակիության և համաչափության պահանջներին: Այն հիմնված է վերացական ենթադրությունների վրա և չի կարող արդարացնել այն իրավիճակը, երբ ընտրությունների վերջնական արդյունքները պահպանվել են՝ չնայած այն հանգամանքին, որ արձանագրված անճշտությունների ճնշող

մեծամասնությունը կենտրոնացած է եղել հենց այն ընտրատեղամասերում, որոնց արդյունքներն անվավեր են ճանաչվել: Նման պայմաններում վերաքվեարկությունից հրաժարումը ոչ թե պաշտպանել է ընտրական գործընթացի ամբողջականությունը, այլ խորացրել է կասկածները ընտրությունների արդյունքների իսկության, ընտրողների իրական կամքի արտացոլման և ընտրական վարչարարության արդյունավետության վերաբերյալ: Եվ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից արտահայտված տվյալ մոտեցումը, ըստ էության, չի համադրվում և հակասության մեջ է մտնում հենց իր կողմից վկայակոչված Վենետիկի հանձնաժողովի զեկույցում ամրագրված սկզբունքների հետ:

Նման պայմաններում հաշվի առնելով, որ ԿԸՀ-ի կողմից փաստացի խեղաթյուրվել է հանձնաժողովի դիրքորոշումը այնուհանդերձ հարկ ենք համարում փաստել, որ փաստացի այդ ձայների հաշվարկման արդյունքում դրանք էական ազդեցություն կարող էին ունենալ մի քանի ընտրությունների իրական արդյունքների վրա, մասնավորապես մի մասը կունենար երկու տոկոս, Բարգավաճ Հայաստան կուսակցությունը կունենար չորս տոկոս, Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը կունենար Սահմանադրական մեծամասնություն, այսինքն՝ 3 տեղամասերի անվավերությունը և դրանց վերաքվեարկության չապահովումը հանգեցրել է այնպիսի անճշտությունների քանակի, որի արդյունքում հնարավորություն առկա չէ հասկանալու ընտրությունների իրական պատկերը:

Ավելին՝ ԿԸՆ-ն ուշադրության չի արժանացրել փաստացի այդ անձանց ընտրական իրավունքի հարցը և դա օգտագործել է որպես պարզապես հաշվարկման փաստաթուղթ, մինչդեռ յուրաքանչյուր անձ ունի ընտրելու իրավունք, իսկ պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել այդ իրավունքի իրացումը, որը նշված պայմաններում չի կատարվել:

Մյուս կողմից հաշվի առնելով ԿԸՀ մտավախությունները տակտիկական քվեարկության մասով, ԿԸՀ-ն պարտավոր էր զսպել այս ռիսկերը և անվավեր ճանաչեր ընտրության արդյունքները: Նման պայմաններում հատկանշական է, որ ԿԸՆ-ն խախտել է ընտրողների մի զանգվածի իրավունքները՝ ապահովելով այլ ընտրազանգվածի իրավունքի պաշտպանությունը, սակայն այստեղ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցադրմանը՝ արդյո՞ք առկա չէ այլ մեխանիզմ ապահովելու բոլոր անձանց իրավունքների ապահովումը: Նշված իրավիճակում այդ մեխանիզմը նոր

ընտրությունների նշանակումն է, որով չի լինի տակտիկական քվեարկության ռիսկ, որը բարձրաձայնում է ԿԸՀ-ն և կապահովվի յուրաքնաչյուր ընտրողի ընտրական իրավունքի իրացումը:

Նշվածի արդյունքում առկա չէ ընտրությունների իրական պատկերը, խախտվել են ընտրողների իրավունքները, ինչպես նաև կուսակցությունների իրենց հավանական ընտրողների ձայների ստացումը, որն էական ազդեցություն է թողել ընտրության արդյունքերի վրա և հագնեցրել է ՀՀ սահմանադրության 7-րդ հոդվածի խախտմանը:

*Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը «**Անճշտություններ**»*

7. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ընտրական գործընթացի օրինականությունը, թափանցիկությունը և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված ընտրողների ազատ կամարտահայտման սկզբունքի իրացման վրա էական ազդեցություն ունեցած հիմնական գործոններից մեկը կոռուպցիոն բնույթի ընտրական հանցագործությունների լայնածավալ և համակարգային դրսևորումներն են:

2026 թվականի փետրվարի 7-ից՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունները նշանակելու մասին հրամանագրի ուժի մեջ մտնելու պահից, Հանրապետության ողջ տարածքում առերևույթ ընտրական իրավախախտումների վերաբերյալ ստացված հաղորդումների և ձեռք բերված տվյալների հիման վրա նախաձեռնվել է ընդհանուր առմամբ **115 քրեական վարույթ**:

Նշված վարույթների քանակական ցուցանիշները, տարածքային ընդգրկվածությունը և դրանցում ներգրավված քաղաքական սուբյեկտների շրջանակը վկայում են, որ արձանագրված խախտումները չեն կրել մեկուսացված կամ պատահական բնույթ, այլ ունեցել են կազմակերպված, համակարգված և համապետական դրսևորումներ: Այդ հանգամանքը, իր հերթին, հիմնավոր կասկածի տակ է դնում ընտրական գործընթացի

նկատմամբ հանրային վստահությունը, ինչպես նաև ընտրողների ազատ կամարտահայտման պայմանների ապահովվածությունը:

Նախաձեռնված քրեական վարույթների բաշխվածությունն ըստ քաղաքական սուբյեկտների ներկայացվում է հետևյալ կերպ.

• «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի գործունեության հետ առնչվող առերևույթ ընտրական իրավախախտումների դեպքերով նախաձեռնվել է **77 քրեական վարույթ**,

• «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչների, համակիրների կամ նրանց հետ առնչություն ունեցող անձանց գործողությունների առթիվ՝ **24 քրեական վարույթ**,

• «Հայաստան» կուսակցությունների դաշինքի գործունեության առնչությամբ՝ **11 քրեական վարույթ**:

Վերոնշյալ վարույթների շրջանակներում իրականացված քննչական և դատավարական գործողությունների արդյունքում **61 քրեական վարույթով հանրային քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր թվով 242 անձի նկատմամբ**:

Իրավախախտումների հանրային վտանգավորության աստիճանը, դրանց ենթադրյալ կազմակերպվածության մակարդակը և բացահայտմանն ուղղված պետական հակազդեցության ծավալները արտահայտվել են նաև կիրառված խափանման միջոցների բնույթով և ինտենսիվությամբ: Մասնավորապես, մեղադրյալներից **100 անձի նկատմամբ կիրառվել են ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոցներ**, որոնցից դատարանների որոշումներով **52 անձի նկատմամբ ընտրվել է կալանքը**, իսկ **48 անձի նկատմամբ՝ տնային կալանքը**:

Միաժամանակ, քննությանը խոչընդոտելու, վարույթից խուսափելու կամ պատշաճ վարքագծի ապահովման նպատակով **120 մեղադրյալի նկատմամբ կիրառվել են այլընտրանքային խափանման միջոցներ**. նրանցից **20 անձի նկատմամբ սահմանվել է վարչական հսկողություն**, իսկ **100 անձի նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելքը**:

Վարույթներից խուսափելու միտումների առկայության պայմաններում **19 անձի նկատմամբ հայտարարվել է պաշտոնական հետախուզում**:

Իրավապահ մարմինների կողմից իրականացված քննության արդյունքում **54 անձի վերաբերյալ 14 քրեական գործ ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և ուղարկվել դատարան**, ինչը վկայում է,

որ արձանագրված դեպքերը չեն սահմանափակվել նախնական ստուգման փուլում արձանագրված կասկածներով, այլ դրանց զգալի մասը ձեռք է բերել դատական քննության ենթակա քրեադատավարական ձևակերպում:

Ընդ որում, ընտրական գործընթացի ընթացքում արձանագրված ենթադրյալ հանցավոր դրսևորումների ծավալները բացահայտվել են ոչ միայն քրեական դատավարական գործիքակազմի կիրառման, այլև տեղեկատվական դաշտի համակարգված մշտադիտարկման արդյունքում: Այս առումով, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում ստեղծված հատուկ օպերատիվ շտաբի կողմից իրականացվել է **73 լրատվական կայքերի և 27 սոցիալական մեդիայի էջերի ու հարթակների ամենօրյա և համակողմանի մշտադիտարկում**:

Նշված մեդիա-մշտադիտարկման, ինչպես նաև գործարկված հատուկ թեժ գծի միջոցով հայտնաբերվել և արձանագրվել է առերևույթ կոռուպցիոն բնույթի ընտրական հանցագործությունների հատկանիշներ պարունակող **47 ահազանգ**, որոնցից **12-ը ստացվել են անմիջականորեն թեժ գծի հեռախոսակապի միջոցով**:

Հատկանշական է նաև, որ ընտրակաշառքների համատարած բնույթին և դրանց նկատմամբ իրավապահ մարմինների կոշտ հակազդեցության անհրաժեշտությանը հրապարակայնորեն անդրադարձել է նաև Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ 2026 թվականի հունիսի 9-ի մամուլի ասուլիսի ընթացքում: Վարչապետը նշել է, որ ընտրակաշառք տված կամ վերցրած անձինք պետք է ենթարկվեն խիստ քրեաիրավական պատասխանատվության՝ ընդգծելով, որ. **«ընտրակաշառք տվողներն ու վերցնողները պետք է մինչև հաջորդ ընտրությունները մնան բանտում»**, ինչպես նաև իրավապահ մարմիններին կոչ է արել «չխղճալ ոչ մեկի», գնահատելով ընտրակաշառքի դեմ պայքարը որպես պետության և ժողովրդավարության անվտանգության հարց:

Նույն ասուլիսի ընթացքում վարչապետը վերահաստատել է, որ ընտրակաշառքի վերաբերյալ ստացված տեղեկությունները դիտարկվում են որպես լրջագույն սպառնալիք ընտրական գործընթացի օրինականության նկատմամբ, իսկ դրանց բացահայտումն ու կանխումը՝ որպես իրավապահ համակարգի առաջնահերթ խնդիր:

Վարչապետի հրապարակային հայտարարություններում, անդրադառնալով ընտրակաշառքի երևույթին, ընդգծվել է դրա

համատարած բնույթը և ընտրական գործընթացի վրա ունեցած ազդեցությունը՝ նշելով, որ ընտրակաշառքի դեպքերը ոչ միայն արձանագրվել են լայն ծավալով, այլև ազդեցություն են ազդեցություն ընտրական գործընթացի բնականոն ընթացքի և ընտրությունների արդյունքների ձևավորման վրա: Մասնավորապես, վարչապետը իր խոսքում արձանագրել է, որ՝ «...**առանց փողի նրանց օգտին ոչ մեկ չի քվեարկել, ոչ մեկ, բացարձակապես ոչ մեկ: ... խախտումներ, այո, եղել են, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա, որովհետև էդ երեք ուժը խորհրդարան մտնելու շեմը պետք է չհաղթահարեն...»:** Այսինքն՝ արձանագրված ընտրական խախտումները ունեցել են ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն, քանի որ առանձին քաղաքական ուժեր, ընտրական օրենսդրությամբ սահմանված կարգավորումների պայմաններում, չպետք է հաղթահարեին Ազգային ժողով մուտք գործելու շեմը:

Բացի վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը **17.06.2026 թվականի Ազգային ժողովում ունեցած հրապարակային ելույթի ընթացքում** հայտարարել է, որ ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել ընտրակաշառքների բաժանման դեպքեր: Վարչապետի գնահատմամբ՝ ընտրական գործընթացի վրա կազմակերպված ազդեցություն գործադրելու նպատակով որոշ քաղաքական ուժեր և դրանց հետ առնչվող անձինք օգտագործել են նախկին ընտրական ցուցակները և իրականացրել ընտրակաշառքների բաժանում:

Վարչապետը նշել է, որ առկա են բազմաթիվ ձայնագրություններ և տեղեկություններ քաղաքացիներից, որոնցից երևում է, որ ընտրողներին առաջարկվել են դրամական միջոցներ՝ նրանց քվեարկության վրա ազդելու նպատակով: Նրա խոսքով՝ բազմաթիվ քաղաքացիներ հրաժարվել են ընդունել առաջարկված գումարները և այդ մասին տեղեկացրել են իրավապահ մարմիններին կամ արձանագրել համապատասխան փաստերը:

Վարչապետը հրապարակայնորեն հայտարարել է, որ ընտրություններին մասնակցած որոշ քաղաքական ուժերի /հասկացվում է ԲՀԿ և անցողիկ շեմը հաղթահարած մնացյալ կուսակցությունները/ ստացած ձայների զգալի մասը, իր գնահատմամբ, ձեռք է բերվել ընտրակաշառքների

միջոցով: **Մասնավորապես, վերջինս նշել է, որ այդ քաղաքական ուժերի ստացած ձայների շուրջ 70 տոկոսը «փողով ստացած ձայներ են»:**

Նույն ելույթում վարչապետը փաստացի արձանագրել է, որ ընտրակաշառքների կիրառումը եղել է այնպիսի ծավալի և բնույթի, որը պահանջում է պետության անհապաղ և խիստ արձագանքը: Նա հայտարարել է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է արձագանքել այդ երևույթին և իրավական գնահատական տալ տեղի ունեցածին:

Վարչապետը նաև հայտարարել է, որ ընտրակաշառք տված և ընտրակաշառք վերցրած անձինք պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության: Նրա խոսքով՝ ընտրակաշառքի հանցավոր մեխանիզմների դեմ պայքարը պետք է դառնա պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը:

Ավելին, վարչապետը հրապարակայնորեն անդրադարձել է նախկին ընտրական գործընթացներում ընտրակաշառքների վերաբերյալ հարուցված քրեական գործերին՝ նշելով, որ բազմաթիվ դեպքերում պատասխանատվությունը եղել է ոչ արդյունավետ, որոշ անձինք ստացել են պայմանական պատիժներ, իսկ որոշ գործերով կայացվել են արդարացման դատական ակտեր: Վարչապետը կասկածի տակ է դրել այդպիսի արդարացումների հիմնավորվածությունը և նշել, որ հանրության շրջանում գոյություն չունի վստահություն, որ խոշոր ընտրակաշառքների գործերով պատասխանատվությունը եղել է լիարժեք և արդյունավետ:

Վերոգրյալ վիճակագրական տվյալները, գնահատվելով իրենց ամբողջության, փոխկապակցվածության և ընտրական գործընթացի տարբեր փուլերում արձանագրված իրավախախտումների բնույթի համադրման մեջ, վկայում են ընտրական իրավախախտումների համատարած և համակարգային բնույթի մասին: Դրանք ձևավորում են այն փաստական ընդհանուր համատեքստը, որի պայմաններում տեղի են ունեցել ստորև ներկայացվող առանձնահատուկ, տեղային և տարածքային բնույթի ծանր իրավախախտումները, և որը ենթակա է գնահատման՝ ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության, ընտրական գործընթացի ամբողջականության և Սահմանադրությամբ երաշխավորված ազատ կամարտահայտման սկզբունքի պահպանման տեսանկյունից:

*Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը՝ «**Կոռուպցիա 7», որում ֆայլեր «Հակակոռուպցիոն կոմիտե քրեական վարույթներ, վարչապետի ասուլիս, վարչապետի ելույթ ԱԺ Հակակոռուպցիոն կոմիտե քրեական վարույթներ, վարչապետի ասուլիս, վարչապետի ելույթ ԱԺ»***

7.1. «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԵՎ ՔՈՂԱՐԿՎԱԾ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի, Ներքին գործերի նախարարության քրեական ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում **բացահայտվել են «Ուժեղ Հայաստան» կուսակցության (և «Ուժեղ Հայաստան» դաշինքի) անունից հանդես եկող թեկնածուների, տարածքային պատասխանատուների, համակիրների ու նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից ընտրողներին նյութապես շահագրգռելու, ընտրակաշառք տրամադրելու, ինչպես նաև նրանց ազատ կամարտահայտման վրա ապօրինի ազդեցություն գործադրելու կազմակերպված, բազմաշերտ, համակարգված և քողարկված մեխանիզմներ:** Այս համակարգային իրավախախտումները կրել են փոխլրացնող բնույթ և **արձանագրվել են Հանրապետության մի շարք մարզերում ու Երևան քաղաքում:**

Ստորև ներկայացվում են բոլոր էական փաստական հանգամանքները՝ ըստ համապատասխան տարածքային ընդգրկվածության և դրսևորված մեխանիզմների:

Լոռու մարզ և Ալավերդի քաղաք

Լոռու մարզում բացահայտվել է ընտրողների նյութական շահագրգռման բարդ սխեմա, որն իրականացվել է կուսակցության պատգամավորի թեկնածուի անմիջական կազմակերպմամբ և նախաձեռնությամբ: Այս սխեմայի շրջանակներում, օրենսդրական արգելքի պայմաններում, **ֆինանսավորվել են ընտրողների (այդ թվում՝**

արցախցիների) բնակարանների վարձավճարները, ինչպես նաև ուղարկվել են 20.000-ական դրամանոց թղթադրամների տեսքով գումարներ (օրինակ՝ դեպի Տաշիր): Գործողությունների հետագծելիությունը նվազեցնելու, բանկային փոխանցումների միջոցով իրավապահների ուշադրությունը չգրավելու և բացահայտումից խուսափելու նպատակով գործընթացում ներգրավվել են միջնորդներ, որոնց անձնական ավտոմեքենաներն օգտագործվել են դրամական միջոցների տեղափոխման ու բաշխման համար: Վճարումները կատարվել են **բացառապես կանխիկ եղանակով**, և գործընթացում ներգրավված են եղել թեկնածուի հետ փոխկապակցված առևտրային կազմակերպությունների (ընկերությունների) աշխատակիցներն ու նրանց շրջապատի անձինք: Ֆինանսական գործառնությունների հետագա վերահսկումը դժվարացնելու նպատակով նախատեսվել է փոխանցումները կազմակերպել արտասահմանյան, այդ թվում՝ **ռուսական բանկային համակարգերի և քարտերի միջոցով**:

Ալավերդի քաղաքում կուսակցության նախընտրական գրասենյակի պատասխանատու անձը, նախնական համաձայնությամբ գործելով այլ անձանց հետ, կուսակցության օգտին կողմնորոշված քվեարկություն ապահովելու պայմանով ընտրողներին տրամադրել է ընտրակաշառք: Իրավախախտումը **քողարկվել է քաղաքացիներին նախընտրական գրասենյակի հաստիքային աշխատակիցներ, ակտիվիստներ կամ պատասխանատուներ ձևականորեն գրանցելու մեխանիզմով**: Քաղաքացիներին որպես աշխատավարձ փաստաթղթավորված ձևով **վճարվել են 100.000, 150.000 և 200.000 ՀՀ դրամի չափերով գումարներ**: Քննությամբ հիմնավորվել է, որ **այդ անձինք որևէ փաստացի աշխատանք չեն իրականացրել** (նրանցից ոմանք նույնիսկ գրանցված չեն եղել որպես պաշտոնական աշխատակից), իսկ գումարները տրվել են իրենց և իրենց ընտանիքի անդամների քվեները կուսակցության օգտին ապահովելու պայմանով: Այս տարածաշրջանում առկա են եղել նաև քաղաքացիներին աշխատանքի «զավոդում և այլն» տեղավորելու խոստումներ: **Դեպքի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք**, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ:

Շիրակի մարզ

Շիրակի մարզի Անի համայնքում արձանագրվել է ընտրողների կամքի վրա ապօրինի ազդեցության առավել վտանգավոր դրսևորում, որտեղ **համակցվել են ընտրակաշառքի և ահաբեկման տարրերը:** Կուսակցության տարածքային պատասխանատուն, ներգրավելով իր մերձավոր ազգականներին ու այլ անձանց, ընտրողներին տրամադրել է դրամական միջոցներ՝ դրանք ձևականորեն ներկայացնելով որպես **«պատասխանատուների» (վարձատրությունը՝ 200.000 ՀՀ դրամ) կամ «ակտիվիստների» (վարձատրությունը՝ 80.000 ՀՀ դրամ)** աշխատավարձ՝ գործընթացը քողարկելով տարածքային գրասենյակներում ձևակերպելու միջոցով: Գործընթացի շրջանակներում քաղաքացիներից հավաքագրվել են անձնագրային տվյալներ (սերիաներ):

Ֆինանսական շահագրգռմանը զուգահեռ, ընտրողների նկատմամբ կիրառվել են հոգեբանական ճնշման և ահաբեկման մեթոդներ: Քաղաքացիներին **սպառնացել են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանող (քրեական աշխարհի) անձանց պահանջներին չենթարկվելու հնարավոր հետևանքներով և ֆիզիկական հաշվեհարդարով**, որպիսի պայմաններում փորձ է կատարվել կանխորոշել քաղաքացիների ընտրական վարքագիծը և խոչընդոտել նրանց ընտրական իրավունքի ազատ իրականացմանը:

Բացի այդ, Շիրակի մարզի տարբեր բնակավայրերում (ներառյալ Տաշիրի հայ համայնքի և որոշակի գործարար շրջանակների հետ կապվող ֆինանսական հոսքերը) կուսակցության ներկայացուցիչները և համակիրները բազմաթիվ ընտրողների **տրամադրել են 70.000-ից մինչև 200.000 ՀՀ դրամի չափով դրամական միջոցներ՝ նրանց ձևականորեն փաստաթղթավորելով որպես նախընտրական ակտիվիստներ, կամավորներ կամ տարածքային պատասխանատուներ**, ինչը կրել է զանգվածային բնույթ: Գումարները վճարվել են **ոչ թե փաստացի կատարված աշխատանքի, այլ ընտրություններին նախապես պայմանավորված ձևով քվեարկելու խոստման դիմաց**: Շրջանառվել են նաև տեղեկություններ անսահմանափակ ֆինանսավորման, ընտրություններից ամիսներ առաջ (3-4 ամիս) գրանցումներ կատարելու և ամսական 250.000-ից 300.000 դրամ, ինչպես նաև անցյալում կամ այլ փուլերում 50.000 կամ 100.000 դրամ բաժանելու վերաբերյալ: **Դեպքերի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական**

վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ և վարութային այլ գործողություններ:

Կոտայքի մարզ

Կոտայքի մարզի Չարենցավան (Չարենցիվան) համայնքում արձանագրվել է առավել ծավալուն դրսևորում: Կուսակցության տեղական գրասենյակի պատասխանատուները և պատգամավորի թեկնածու գրանցված անձը, գործելով նախնական համաձայնությամբ, խմբի կազմում և հստակ դերաբաշխմամբ, թիրախավորել են շուրջ 45 ընտրողի: Վերջիններիս կուսակցության օգտին քվեարկելու դիմաց խոստացվել և տրամադրվել են խոշոր չափերի դրամական միջոցներ՝ **ընդհանուր առմամբ շուրջ 7,5 միլիոն ՀՀ դրամի չափով, ինչը վկայում է ընտրողների ձայների կազմակերպված ուղղակի գնման մեխանիզմի մասին:**

Բացի այդ, փաստական տվյալներ են ստացվել նաև այն մասին, որ կուսակցության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի տարածքային գրասենյակի ղեկավարը կուսակցության օգտին քվեարկելու պայմանով նույն համայնքի բնակչին խոստացել, ինչպես նաև տվել է ընտրակաշառք:

Արմավիրի մարզ

Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում արձանագրվել է առավել բարդ և տևական բնույթ կրող կառուցվածքային սխեմա: Մի խումբ անձինք նախնական համաձայնությամբ խմբի կազմում նպատակադրվել են ընտրակաշառք բաժանել Արմավիրի մարզում բնակվող քաղաքացիներին՝ ապահովելով նրանց մասնակցությունը 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին և քվեարկությունը «Ուժեղ Հայաստան» կուսակցության օգտին:

Այս նպատակով Մեծամոր համայնքում բացվել է **«Մեր ձևով» հասարակական կազմակերպության գրասենյակ**: 2025 և 2026 թվականների ընթացքում համայնքի տարբեր բնակիչներ **ձևականորեն աշխատանքի են ընդունվել (գրանցվել) այս կազմակերպությունում, սակայն նրանց փաստացի հանձնարարվել է զբաղվել ընտրողների հավաքագրմամբ և ցուցակագրմամբ**: Որպես նախապես խոստացված ընտրակաշառք և պայմանավորված վարձատրություն՝ քաղաքացիներին (օրինակ՝ Սիմոնի որդուն և այլոց) **ամսական վճարվել է 150.000 ՀՀ դրամ, որը փաստաթղթավորվել է որպես աշխատավարձ՝ քողարկելու և բացահայտման վտանգը նվազագույնի հասցնելու համար**:

«Աշխատանքի» ընդունման հիմնական նախապայման է հանդիսացել տվյալ ընտրատարածքում ընտրող լինելու հանգամանքը, ինչպես նաև անձի՝ **մեծ ընտանիք (նաֆարներով, հարսներով), սոցիալական կապեր և ծանոթների լայն շրջանակ ունենալու փաստը**, որոնք հնարավորություն կտային ազդեցություն ունենալ այլ ընտրողների քվեարկության վրա: Գործընթացում արձանագրվել են նաև ներքին դժգոհություններ և վեճեր կապված հունվար ամսվա վճարումների և ձայների քանակի (օրինակ՝ 180 ձայնի) տեղափոխման հետ:

Միաժամանակ, նույն համայնքում ընտրությունների նշանակումից հետո (ԱԺ հերթական ընտրությունները նշանակելու մասին հրամանագրի՝ 2026 թվականի փետրվարի 7-ին ուժի մեջ մտնելուց հետո), **օրենքով սահմանված բարեգործության արգելքի պայմաններում**, բնակիչներին տրամադրվել են տարբեր չափերի դրամական միջոցներ: Դրանք **ներկայացվել են որպես բարեգործություն՝ բժշկական ծառայությունների, բժշկական սպասարկման, վիրահատությունների, ռենտգենի (օրինակ՝ Ռենտգենի ինստիտուտում) և հիվանդանոցային այլ ծախսերի փոխհատուցում**: Գումարները կազմել են **120.000-ից մինչև 500.000 ՀՀ դրամ** (օրինակ՝ Բաղդասարյան Սաքոյին փոխանցված 500.000 դրամը) և ծառայել են որպես ընտրողների թաքնված նյութական շահագրգռման միջոց: Իրավապահները նախազգուշացրել են նաև կանխիկի շրջանառության սահմանափակումների նոր օրենսդրական կարգավորումների ֆոնին քողարկված այս մեթոդների կիրառման մասին: **Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախաձեռնվել է քրեական վարույթ, կատարվել են մեկ տասնյակ խուզարկություններ, ձերբակալվել են 5 անձինք**:

Երևան քաղաք

Երևանի տարբեր վարչական շրջաններում նույնպես բացահայտվել են ընտրակաշառքի խոստման և տրամադրման փաստեր.

• **Աջափնյակ վարչական շրջան.** Գրասենյակում որպես պատասխանատու նշանակված անձինք, կուսակցության համակիրների և նրանց հետ համագործակցող մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, ընտրողներին խոստացել և տվել են ընտրակաշառք: **Գործընթացում կիրառվել են շենքերի լիազորների կամ նախագահների**

ներգրավման մեխանիզմներ, իսկ պատասխանատուների «աշխատավարձերը» սահմանվել են շուրջ 100.000 ՀՀ դրամ:

• **Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան.** Գրասենյակի պատասխանատուները, համակիրների և այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, ընտրողներին խոստացել և տվել են ընտրակաշառք, որոնց վերաբերյալ տվյալներում **շրջանառվել են միլիոնավոր դրամների հասնող գումարներ** և առանձին անձանց 80.000-ական դրամ վճարելու հանգամանքներ:

• **Արաբկիր վարչական շրջան.** Գրասենյակի պատասխանատու անձինք, համակիրների և համագործակցող խմբի հետ նախնական համաձայնությամբ, ընտրողներին խոստացել ու տվել են ընտրակաշառք: Փաստական տվյալների համաձայն՝ Դավիթ Ղազինյանը **400.000 ՀՀ դրամ է տրամադրել Արման անունով անձնավորությանը՝ շտաբի կարիքների և մարդկանց կաշառք խոստանալու/բաժանելու նպատակով:** Գումարները ձևակերպվել են որպես աշխատավարձ, իսկ ներգրավված ընտրողներին փաստացի վճարվել են միջինում 80.000-ից 100.000 ՀՀ դրամ գումարներ:

Այս բոլոր դեպքերով նախաձեռնվել են քրեական վարույթներ, կատարվել են խուզարկություններ և ձերբակալություններ:

7.2. ԱՐՏԵՐԿՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

Իրավապահ մարմինները փաստական տվյալներ են ձեռք բերել նաև այն մասին, որ կուսակցության ներկայացուցիչն այլ անձանց հետ կազմակերպել է **արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիներին ընտրություններին մասնակցելու և իրենց կուսակցության օգտին քվեարկելու պայմանով ընտրակաշառք տալու և Հայաստան տեղափոխելու (այդ թվում՝ ճանապարհածախսի/տոմսերի փոխհատուցման) գործընթաց:** Այս վարույթով դատարան են ներկայացվել կալանքի միջնորդություններ, և 1 անձ գտնվում է կալանքի տակ:

Մեկ այլ դեպքով փաստական տվյալներ են ստացվել առ այն, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի համակիրներն այլ անձանց հետ, Ազգային ժողովի ընտրություններին հիշյալ դաշինքի օգտին քվեարկելու և ընտրողներ հավաքագրելու պայմանով, **Ռուսաստանաբնակ ամուսիններ**

հանդիսացող ՀՀ երկու քաղաքացիների խոստացել են հունիսի 8-ին ընտրվելուց հետո լուծել թմրամիջոց պահելու համար ՌԴ-ում դատապարտվող վերջիններիս որդիներին ազատ արձակելու և ՀՀ տեղափոխելու հարցը: Այս գործընթացում ներգրավված են եղել Սամվելի, Արմենի, Սարգիսի և այլոց անունները, ովքեր խոստացել են «ամսի 8-ին զբաղվել և հարցը լուծել»: **Այս առթիվ ևս նախաձեռնված է քրեական վարույթ, կատարվել են վարութային գործողություններ և կան ձերբակալվածներ:**

Ընտրական վարչարարության գործիքների չարաշահում

Համակարգային խախտումների շարքում առանձնանում է ընտրական վարչարարության գործիքների առերևույթ չարաշահումը: **«Ուժեղ Հայաստան» դաշինքի կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, օգտվելով հանձնաժողովի անդամներ առաջադրելու իր իրավասությունից, նախապատվությունը տվել է այն անձանց, ովքեր պաշտոնական վարձատրությունից բացի, պարտավորվել են ապահովել ինչպես իրենց անձնական քվեն, այնպես էլ իրենց կողմից ներգրավված կոնկրետ թվով այլ ընտրողների քվեարկությունը դաշինքի օգտին:** Այդպիսով, հանձնաժողովի անդամի կարգավիճակը և դրա դիմաց նախատեսված վարձատրությունը **փաստացի օգտագործվել են որպես քվեներ ձեռք բերելու, ընտրողների կամքի վրա ազդելու և ընտրական գործընթացի ներսում քաղաքական աջակցություն ապահովելու գործիք:**

Վերոգրյալ փաստական տվյալները, գնահատվելով իրենց ամբողջության, փոխկապակցվածության և տարածքային ընդգրկվածության մեջ, ըստ դիմողի, վկայում են ոչ թե առանձին և միմյանցից անկախ իրավախախտումների, այլ կազմակերպված, համակարգված և փոխլրացնող մեխանիզմների առկայության մասին, որոնք օբյեկտիվորեն էական ազդեցություն են ունեցել ընտրողների ազատ կամարտահայտման, ընտրական գործընթացի ամբողջականության և ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության վրա:

*Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը՝ «**Կոռուպցիա 7», որում ֆայլ «Ուժեղ Հայաստան-ընտրախախտումներ»,***

7.3. «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԵՎ ՔՈՂԱՐԿՎԱԾ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից իրականացված ընդգրկուն օպերատիվ-հետախուզական և քննչական միջոցառումների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները վկայում են, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչների, պատգամավորի թեկնածուների, ակտիվ համակիրների, ինչպես նաև նրանց հետ ուղղակի կամ անուղղակի փոխկապակցված անձանց գործունեության մեջ առկա են **տարածքային մեծ ընդգրկվածություն ունեցող, բազմաձև և համակարգված բնույթ կրող առերևույթ ընտրական իրավախախտումներ**: Համաձայն քրեական վարույթների նյութերի՝ ընտրողների կամարտահայտման վրա ազդելու նպատակով կիրառվել են տարաբնույթ ապօրինի մեխանիզմներ, որոնց թվում են **ընտրողների ուղղակի նյութական շահագրգռումը, ձայների կազմակերպված գնումը, կուսակցական զանգվածային հավաքներին քաղաքացիների մասնակցության ուղղակի ֆինանսավորումը, ինչպես նաև նախընտրական գրասենյակներում ձևական զբաղվածության հաստիքների ստեղծման միջոցով ընտրակաշառքի քողարկումը**: Բացահայտված բոլոր դեպքերի առթիվ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել են համապատասխան քրեական վարույթներ, իրականացվել են մեծածավալ խուզարկություններ, ձերբակալվել են բազմաթիվ անձինք և կատարվել են այլ անհրաժեշտ վարութային գործողություններ: Այս բոլոր փաստական տվյալները, գնահատվելով իրենց ամբողջության մեջ, ըստ դիմող կողմի, հիմնավորում են, որ իրավախախտումները չեն եղել պատահական կամ մեկուսացված դեպքեր, այլ հանդիսացել են փոխկապակցված գործելակերպ, որն **օբյեկտիվորեն կարող էր էական և բացասական ազդեցություն ունենալ**

ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության, ընտրական գործընթացի ամբողջականության և ընտրողների ազատ կամարտահայտման վրա:

Կոտայքի մարզում (Աբովյան համայնք)

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և Ներքին գործերի նախարարության քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողների կողմից իրականացված համատեղ միջոցառումների արդյունքում հստակ փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ **«Բարգավաճ Հայաստան» կուսակցության Աբովյան համայնքի տարածքային գրասենյակի պատասխանատուն, գործելով նախնական համաձայնությամբ կուսակցության անդամների և նրանց հետ համագործակցող մի խումբ այլ անձանց հետ, մի շարք ընտրողների խոստացել և փաստացի տվել է ընտրակաշառք**: Գործով ձեռք բերված ձայնագրությունների նյութերից պարզ է դառնում, որ ներքին խոսակցություններում կազմակերպիչները քննարկել են կոնկրետ անձանց ներգրավելու և իրենց կողմն անցկացնելու հարցերը՝ նշելով, որ ցանկանում են հարազատ, վստահելի մարդկանց միջոցով թև ու թիկունք ստեղծել և կողք կանգնել: Խոսակցություններում անդրադարձ է կատարվում գումարներ ստանալու և բաշխելու մեխանիզմներին, որտեղ շեշտվում է, որ վերջում ոչ մի բան չի մնում, բացի սեփական սխալներից, և տրվում են հստակ խոստումներ ընտանիքի անդամների ու ամենահարազատ մարդկանց ներգրավելու վերաբերյալ: Առանձնակի ուշադրություն է դարձվում **«Բարգավաճ երեխաների թեմային» և «հարյուր մանեթ» (100.000) դրամական միջոցների շրջանառությանը**: Քննարկվել են կոնկրետ շենքերի, այդ թվում՝ կոնի շենքի վրա աշխատելու տարբերակները, որտեղ կան ազնիվ և ոսկի տղաներ, ովքեր կարող են պատասխանատվություն վերցնել: Այսպես, **յուրաքանչյուր ակտիվիստի հանձնարարվել է հավաքագրել իր 10 հոգուն, «վիզ դնել և բերել»: Տարածքային պատասխանատուներից մեկին վստահվել է 14 շենք՝ նպատակ դնելով այդ տարածքը լիարժեքորեն «տրաքցնել» և ապահովել ձայների առավելագույն քանակ**: Որպես լրացուցիչ խթան՝ **խոստացվել է կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանի հետ ունեցած կապերի միջոցով լուծել ակտիվիստների կամ նրանց մտերիմների աշխատանքի, օրինակ՝ պահակախմբում (ախրանայում) տեղավորվելու հարցերը**:

Խոսակցություններում արձանագրվել են նաև պահանջներ՝ գումարները մինչև ամսի 10-ը փոխանցելու և 60 հոգուց բաղկացած ցուցակները համատեղ ստուգելու վերաբերյալ, ինչպես նաև հորդորներ՝ տրամադրված միջոցներով ընկերներին ու «սարեր ախպերներին» հյուրասիրելու և կուսակցության դիրքերն ամրապնդելու մասին:

Արարատի մարզ

Արարատի մարզում իրավապահ մարմինների (ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՀՀ Ազգային անվտանգության ծառայության Շիրակի մարզային վարչության ծառայողների համագործակցությամբ) կողմից հաստատվել են ծանրակշիռ փաստական տվյալներ այն մասին, որ **«Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ, պատգամավորի թեկնածու հանդիսացող անձը և նույն կուսակցության անունից հանդես եկող այլ ներկայացուցիչներ ու ակտիվ համակիրներ, համագործակցելով տեղական բնակիչների հետ, մարզի մի շարք բնակավայրերում ընտրողներին տրամադրել են ընտրակաշառք**: Ըստ քրեական վարույթի նյութերի՝ **դրամական միջոցների տրամադրման հիմնական, միակ և անդրդվելի պայմանն է եղել ընտրության օրը բացառապես «Բարգավաճ Հայաստան» կուսակցության օգտին քվեարկելը և համապատասխան քանակությամբ պատրաստակամ ընտրողների հավաքագրումը**: Այս ապօրինի գործընթացը տևել է ընդհուպ մինչև մայիսի վերջ: Ներքին խոսակցությունների համաձայն՝ սկզբնական շրջանում հավաքագրվել են 20-25 հոգանոց խմբեր, ընդ որում, քննարկվել են տարբեր բնակավայրերի, այդ թվում՝ Արթիկի և Մարտունու բնակիչների ներգրավման հարցերը: Կազմակերպիչները խոսել են քաղաքական իրավիճակի մասին՝ նշելով, որ իրենց կուսակցությունը տվյալ պահին չունի առաջատար շանսեր և հավակնում է անցնել երրորդ տեղով, սակայն ընտրություններից հետո բոլոր աջակիցների համար հաջողություն է լինելու: **Գաղտնիության պահպանման նպատակով հրահանգվել է չկազմել գրավոր ցուցակներ, չունենալ «զապիսկաներ», որպեսզի որևէ ավելորդ անձ չիմանա կատարվածի մասին**: Բացահայտված նյութերի համաձայն՝ **քաղաքացիներին բաժանվել են 10.000 ՀՀ դրամ գումարներ**: Ընտրողների շրջանում քննարկումներ են եղել այն մասին, որ քանի որ «փողով են բաժանում», իրենք նույնպես պետք է գնան և վերցնեն իրենց հասանելիքը, որպեսզի «ուրիշի փողը իրենք չուտեն»: Խոսակցություններում շրջանառվել է նաև որոշակի Սամվել

Կարապետյանի անունը, ով, ըստ քաղաքացիների խոսքերի, տալիս է 40.000 ՀՀ դրամ: **Կուսակցության ակտիվիստները հեռախոսային խոսակցություններում ցուցաբերել են ծայրահեղ զգուշավորություն՝ հորդորելով հեռախոսով չխոսել փողերի մասին, ջնջել նամակագրությունները և գումարները տեղ հասցնել բացառապես անձամբ՝ տուն գնալու միջոցով**: Վարույթի շրջանակներում ձերբակալվել է շուրջ մեկ տասնյակ անձ:

Վայոց ձորի մարզ

Վայոց ձորի մարզում քրեական վարույթի տվյալները մատնանշում են, որ **կուսակցության պատգամավորի թեկնածուներից մեկը, սեփական համակիրների և այլ անձանց ցանցի միջոցով, անմիջականորեն ներգրավվել է ընտրակաշառքների բաշխման կազմակերպման մեջ**: Մարզի տարբեր բնակավայրերի բնակիչներին տրամադրվել են դրամական միջոցներ՝ Ազգային ժողովի ընտրություններին կուսակցության օգտին քվեարկելու նախապայմանով: Սակայն ապօրինի ազդեցության գործիքակազմը սրանով չի սահմանափակվել: Նույն մարզում **քաղաքացիներին նյութապես շահագրգռել են՝ ամբողջությամբ հոգալով նրանց տրանսպորտային ծախսերը, սնունդը և հարակից այլ կարիքները, որպեսզի ապահովեն նրանց զանգվածային և կազմակերպված տեղափոխումն ու մասնակցությունը 2026 թվականի հունիսի 4-ին Երևան քաղաքում կազմակերպված կուսակցական կենտրոնական հավաքին**: Այս գործողությունների արդյունքում, ըստ դիմողի հայտարարության, **հանրային միջոցառման մասնակիցների իրական թվաքանակի վերաբերյալ ստեղծվել է արհեստականորեն ուռճացված պատկեր, ինչը միտված է եղել հանրային ընկալումների մանիպուլյացիային և ընտրողների վարքագծի վրա հոգեբանական ազդեցություն գործելուն**: Գործով անցնող խոսակցություններում ակտիվիստները քննարկել են մեքենաների (ավտոների) վարձակալության, գազի և բենզինի («բենդերի») ծախսերը, նշելով, որ յուրաքանչյուր ավտոմեքենայի մեջ պետք է նստի 4 հոգի, և անհրաժեշտ է մեծ քանակությամբ բենզին լցնել քաղաքացիներին բերել-տանելու համար: Արձանագրվել են խոսակցություններ հարազատներին ու հարևաններին հավաքագրելու, ցուցակները ճշտելու և **մեկ միլիոն դրամի հասնող խոշոր գումարների շրջանառության վերաբերյալ**, որտեղ

շեշտվում է, որ «հայերը տանում են տղերին» և պետք է ապահովել ձայների անհրաժեշտ տոկոսը:

Լոռու մարզի Վանաձոր քաղաք

Լոռու մարզի Վանաձոր քաղաքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՆԳՆ քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչության ծառայողների համատեղ օպերատիվ աշխատանքի արդյունքում բացահայտվել է ընտրողների ձայների ուղղակի գնման կազմակերպված դեպք: Ըստ քրեական վարույթի նյութերի՝ **«Բարգավաճ Հայաստան» կուսակցության Վանաձորի տարածքային գրասենյակի պատասխանատու անձը, համագործակցելով այլ ակտիվիստների հետ, ընտրողներին տվել է ընտրակաշառքներ**: Քննչական մարմինների կողմից փաստաթղթավորվել են դեպքեր, երբ **քաղաքացիներին յուրաքանչյուր քվեի դիմաց առաջարկվել և տրամադրվել է կոնկրետ 20.000 ՀՀ դրամ գումար**: Գումարի տրամադրման հստակ պայմանն է եղել այն, որ **տվյալ քաղաքացիները պետք է երաշխավորեին և ապահովեին ոչ միայն իրենց անձնական քվեն, այլև իրենց ընտանիքի անդամների, հարազատների և մտերիմների կողմից կուսակցության օգտին քվեարկությունը**: Գաղտնալսումների նյութերում կողմերը բացահայտ քննարկում են փողերը բաժանելու վախերը և տեխնիկական կողմը՝ նշելով, որ քարաբերտ կոչվող տարածքում անհրաժեշտ է ապահովել առնվազն 3-4 կամ 4-5 հոգու ընտրությունը: Նշվում են կոնկրետ գումարային հաշվարկներ, օրինակ՝ **«20 մանեթ նրանց, 50 քեզ, մի 20 էլ կտամ, 5-ը Սիլվային կտաս», ինչի արդյունքում ընդհանուր գումարը կազմում է 90-100 հազար դրամ**: Կազմակերպիչները քննարկել են նաև, որ իրենց ընդհանուր հաշվարկով ձայների քանակը պետք է լինի մեծ (օրինակ՝ 400, 500 կամ 850 ձայն): Խոսակցություններում հատուկ ընդգծվում է, որ **անձով հաշիվ չեն տալիս, և հեռախոսով այս թեմաներով խոսելը խիստ վտանգավոր է, քանի որ կարող են բռնվել իրավապահների կողմից**:

Տավուշի մարզ

Տավուշի մարզում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից արձանագրվել է ընտրողների նկատմամբ երկարաժամկետ նյութական կախվածություն ձևավորելու առավել կառուցվածքային, ինստիտուցիոնալ և քողարկված մեխանիզմ: Ըստ քրեական վարույթի տվյալների՝ կուսակցության օգտին քվեարկելու և նոր համակիրներ ներգրավելու

պայմանով ընտրողներին տրամադրվել է ընտրակաշառք, որը **քողարկվել է նախընտրական գրասենյակներում ձևական հաստիքների ստեղծման միջոցով**: **Քաղաքացիներին պաշտոնապես ձևակերպել են որպես գրասենյակային աշխատակիցներ՝ ամսական 150.000 ՀՀ դրամ բարձր վարձատրությամբ, մինչդեռ վերջիններս որևէ իրական գրասենյակային կամ վարչական աշխատանք չեն իրականացրել**: Նրանց միակ և հիմնական պարտականությունը եղել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության օգտին ընտրողների ակտիվ հավաքագրումը և նոր անձանց ներգրավումը: Յուրաքանչյուր այդպիսի ձևական «աշխատակցի» համար սահմանվել է հստակ և կոշտ պլանային պահանջ. **նա պարտավոր է եղել յուրաքանչյուր ամիս հավաքագրել նվազագույնը 20 նոր անձի, որոնք պետք է ընդգրկվեին կուսակցության ազդեցության ցանցում**: Այս մեխանիզմը փաստացի **վերածվել է ընտրակաշառքի բաշխման ցանցային, բազմաստիճան և ինքնավերարտադրվող համակարգի (բուրգի), որի միջոցով նյութական շահագրգռման շրջանակները շարունակաբար ընդլայնվել են՝ ընդգրկելով ընտրողների նորանոր խմբեր և մեծացնելով ապօրինի ազդեցության աշխարհագրությունը**: Նյութերում առկա խոսակցություններից երևում է, որ քաղաքացիները ներքին կարգով քննարկել են այս գրասենյակներում տեղավորվելու և փող աշխատելու հնարավորությունները՝ նշելով, որ «ամիսը մի 20 հոգի տանել դեմ, գոգիր, ու ամիսը 150.000 դրամ»: Քննարկվել են նաև երկու տարբեր տեղերում գրանցված լինելու վտանգները և այն փաստը, որ **կազմակերպիչները չեն վճարում գումարները, քանի դեռ ակտիվիստը չի ներկայացնում հավաքագրված անձանց հստակ թիվը կամ պլանը**: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ակտիվիստները դժգոհել են սահմանված պլանը չկատարելու պատճառով աշխատանքից կամ շտաբից դուրս մնալու և այլ կուսակցական կառույցներ տեղափոխվելու վերաբերյալ, որտեղ նույնպես փող են տալիս:

Վերոգրյալ փաստական տվյալները, գնահատվելով իրենց ամբողջության, տարածքային ընդգրկվածության և կիրառված մեխանիզմների նմանության համատեքստում, ըստ դիմողի, վկայում են, որ արձանագրված առերևույթ իրավախախտումները չեն կրել մեկուսացված կամ պատահական բնույթ, այլ արտահայտել են փոխկապակցված և համակարգված գործելակերպ, որն օբյեկտիվորեն

կարող էր էական ազդեցություն ունենալ ընտրողների ազատ կամարտահայտման, ընտրական գործընթացի ամբողջականության և ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության վրա:

Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը՝ ***«Կոռուպցիա 7», որում ֆայլ «Բարգավաճ Հայաստան - ընտրախախտումներ»***

7.4. «ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԵՎ ՔՈՂԱՐԿՎԱԾ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

«Հայաստան» կուսակցությունների դաշինքի գործունեության վերաբերյալ արձանագրված բոլոր փաստական հանգամանքները, առանց որևէ դրվագ բաց թողնելու, արձակ ձևաչափով և **ընդգծված կարևորագույն մասերով** ներկայացվում են ստորև.

Հակակոռուպցիոն կոմիտեի և Ազգային անվտանգության ծառայության իրականացրած միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Հայաստան» կուսակցությունների դաշինքի գործունեության շրջանակներում տեղի է ունեցել **ֆինանսական միջոցների ուղղակի բաշխում ընտրողներին**: Դրանից բացի, արձանագրվել են ընտրական իրավունքի տրամաբանությունից դուրս գտնվող **ակնհայտ ապօրինի խոստումներ** և հատուկ հավաքների կազմակերպում, որոնցում նպատակային կերպով **ներգրավվել է զինվորականությունը**:

Իրավապահ մարմինների կողմից ձեռք բերված ապացույցների համաձայն՝ ընտրողներին ընտրակաշառք տալու գործընթացում **ակտիվորեն ներգրավված է եղել դաշինքի պատգամավորի թեկնածուի հայրը**: Դաշինքի ներկայացուցիչների կողմից իրականացվել է քաղաքացիներին նյութապես շահագրգռելու համակարգված քաղաքականություն, որի հստակ նպատակն է եղել **բազմամարդություն ապահովել դաշինքի նախընտրական հավաքներին և հանդիպումներին**: Այս նպատակին հասնելու համար դաշինքի կողմից ամբողջությամբ հոգացվել են հավաքների մասնակից քաղաքացիների **տրանսպորտային**

բոլոր ծախսերը, տրամադրվել են ավտոմեքենաներ, ինչպես նաև անվճար հիմունքներով բաժանվել է բենզին: Քրեական վարույթի առանձին դրվագներով արձանագրվել են նաև կոնկրետ փաստեր, երբ **անձամբ պատգամավորի թեկնածուն է ընտրողներին անմիջականորեն տվել ընտրակաշառքներ**: Ի լրումն սրա, փաստական տվյալներ են ստացվել նաև օրենսդրական արգելքի պայմաններում դաշինքի պատգամավորի և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության թեկնածուի կողմից միջնորդավորված եղանակով **բարեգործության արգելքը խախտելու դեպքերի մասին**:

Դաշինքի կողմից հատուկ թիրախավորման է ենթարկվել **ընտրական հանձնաժողովների անդամների ինստիտուտը**: Պատգամավորի թեկնածուն, օգտվելով տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ առաջադրելու և նշանակելու օրենքով սահմանված հնարավորությունից, ժողովրդավարական գործընթացների նկատմամբ վստահության ապահովմանն ուղղված այս ինստիտուցիոնալ երաշխիքը և դրա դիմաց պետության կողմից նախատեսված պաշտոնական վարձատրության հնարավորությունը **փաստացի ծառայեցրել է բացառապես սեփական քաղաքական շահերին**: Որպես տեղամասային հանձնաժողովի անդամ նշանակվել են միայն այն անձինք, ովքեր նախապես կոնկրետ պարտավորություն են ստանձնել դաշինքի համար ընտրություններում **ապահովել նվազագույնը 10 կամ ավելի ընտրողների քվեարկություն**: Այսպիսով, հանձնաժողովի անդամությունը և դրա դիմաց նախատեսված վարձատրությունն **օգտագործվել են որպես քվեներ ձեռք բերելու ուղղակի միջոց**: Հարուցված քրեական վարույթների շրջանակներում դատարանի որոշումներով իրականացված խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել և առգրավվել են էլեկտրոնային կրիչներ, համակարգիչներ, գաղտնալսող միջոցներ հայտնաբերող սարքավորում, ինչպես նաև վարույթի համար ապացուցողական նշանակություն ունեցող **անհերքելի փաստաթղթեր ու սևագրություններ ապօրինի գումարային շարժերի, ընտրողների ցուցակների և քաղաքացիներին տարբեր տեսակի օգնություններ տրամադրելու վերաբերյալ**:

Առանձնահատուկ և մանրամասն ուշադրության է արժանի ընտրողներին հավաքագրելու նպատակով տրված ոչ իրավաչափ և

ապօրինի խոստումների փաստը: Դաշինքի ակտիվ համակիրները, ընտրություններում կոնկրետ ձայներ ապահովելու հստակ պայմանով, Ռուսաստանի Դաշնությունում բնակվող, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երկու ամուսինների տվել են ակնհայտ ապօրինի խոստում: Տրված խոստման բովանդակության համաձայն՝ ընտրությունների ավարտից անմիջապես հետո, **սկսած 2026 թվականի հունիսի 8-ից**, դաշինքի ղեկավարությունը պարտավորվել է օգտագործել իր ունեցած քաղաքական կապերը և ամբողջությամբ լուծել **թմրամիջոց պահելու ծանր հանցագործության համար Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից դատապարտվող նրանց որդիներին պատժից ազատ արձակելու և Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու հարցը**: Այս հանգամանքը հանդիսանում է ընտրողների կամքի վրա ազդելու նպատակով **արդարադատության ոլորտում ապօրինի միջամտության խոստումների կիրառման ուղղակի ապացույց**:

*Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը՝ «**Կոռուպցիա 7», որում ֆայլ «Հայաստան դաշինք - ընտրախախտումներ»:***

Վերը ներկայացված փաստական հանգամանքների ամբողջական և համակցված գնահատումը ցույց է տալիս, որ դրանք չեն վերաբերում ընտրական գործընթացի ընթացքում արձանագրված մեկ կամ մի քանի միջադեպերի: Ընդհակառակը, ներկայացված տվյալները վերաբերում են ընտրական գործընթացի տարբեր փուլերին՝ նախընտրական ժամանակահատվածից մինչև քվեարկության օրը և ընտրություններից անմիջապես հետո տեղի ունեցած իրադարձությունները, ընդգրկում են պետական և համայնքային կառավարման տարբեր մակարդակների մարմիններ ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև առնչվում են ընտրական իրավունքի պաշտպանության և վերահսկողության համար պատասխանատու ինստիտուտների գործունեությանը:

Նշված հանգամանքները, թեև յուրաքանչյուրն առանձին վերցված ենթակա են ինքնուրույն իրավական գնահատման, իրենց ամբողջության մեջ ձևավորում են փոխկապակցված փաստական պատկերի տարրեր: Դրանք միավորվում են ընդհանուր ժամանակային շրջանակով, վերաբերում են նույն

ընտրական գործընթացին, առնչվում են նույն քաղաքական մրցակցային միջավայրին և, ըստ էության, ուղղված են եղել ընտրողների քաղաքական կամքի ձևավորման, արտահայտման կամ դրա վրա ազդեցություն գործադրելու գործընթացներին:

Հատկանշական է նաև, որ արձանագրված փաստական տվյալները վերաբերում են ոչ միայն առանձին համայնքների կամ մեկ վարչատարածքային միավորի, այլ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և բնակավայրերի, ինչը բացառապես տեղային կամ պատահական բնույթի խախտումների վարկածը դարձնում է առավել քիչ հավանական և առաջացնում է անհրաժեշտություն գնահատելու դրանց հնարավոր համակարգային բնույթը:

Միաժամանակ, ներկայացված հանգամանքները չեն սահմանափակվում միայն ընտրական իրավունքի նեղ ընթացակարգային խախտումների հնարավոր դեպքերով: Դրանք առնչվում են ընտրական գործընթացի այն հիմնարար պայմաններին, որոնցից կախված է ընտրությունների ազատ, արդար և մրցակցային բնույթը, այդ թվում՝ պետական մարմինների քաղաքական չեզոքությունը, քաղաքական ուժերի համար հավասար հնարավորությունների ապահովումը, վարչական ռեսուրսի չկիրառումը, ընտրողների ազատ կամարտահայտման երաշխավորումը, ինչպես նաև ընտրական գործընթացի նկատմամբ արդյունավետ և անկախ վերահսկողության իրականացումը:

Հետևաբար, վերը նկարագրված բոլոր փաստական հանգամանքները պետք է գնահատվեն ոչ թե առանձին - առանձին, այլ իրենց փոխադարձ կապի և ընդհանուր ընտրական գործընթացի վրա ունեցած հնարավոր ազդեցության համատեքստում: Միայն նման համալիր գնահատման արդյունքում հնարավոր կլինի պարզել, թե արդյոք արձանագրված դեպքերի ամբողջությունը հանգեցրել է ազատ, արդար, հավասար և իրական մրցակցային ընտրությունների համար անհրաժեշտ սահմանադրական և միջազգային չափանիշների խախտման, ինչպես նաև արդյոք այդ խախտումները իրենց բնույթով, ծավալով և ազդեցությամբ կարող էին անդրադառնալ ընտրությունների արդյունքների հավաստիության և ընտրական գործընթացի լեգիտիմության վրա:

Կաշառքի դիմաց ընտրության քվե ստանալը ուղղակի կերպով հանգեցնում է ընտրության իրական ադրոյքնենրի բացահայտման վրա և

նման պայմաններում նման քանակի քրեական վարույթների բացահայտումը իրենից ենթադրում է, որ մեծ քանակի կաշառք է բաժանվել և ընտրության արդյունքները չեն արտացոլում ընտրությունների իրականա պատկերը.

Հարկ է նկատել, որ այս հարցին անդրադարձել է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ով նշել է, որ թվով երեք կուսակցություն, որից երկուսը արդեն անցել են խորհրդարան իրենց ձայները ստացել են ընտրակաշառքի արդյունքում և փաստացի հենց այն ուժը, ով ձևավորել է խորհրդարանական մեծամասնություն, կասկածի տակ է դնում ընտրության արդյունքները և նշում է, որ ընտրությունները կեղծված են, այսինքն՝ հաստատում է մի հանգամանք, որ այս խախտումները էական ազդեցություն են ունեցել ընտրությունների վրա և չեն արտահայտում քաղաքացիների իրական կամքը:

Նշված փաստին անդրադարձել է նաև «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ծրագրերի համակարգող, «Անկախ դիտորդ» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Դանիել Իոանիսյանը և հայտնել տեղեկություններ ընտրակաշառքի վերաբերյալ և նշում, որ բացահայտվել է 0.5 տոկոսը:

*Տես վերոնշյալ փաստական տվյալների վերաբերյալ սույն դիմումին էլեկտրոնային կրիչով կցված հետևյալ ֆայլը՝ «**Կոռուպցիա 7», որում ֆայլ «Դանիել Իոաննիսյան հարցազրույց»:***

II. ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾ՝

Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾ՝

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ

նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾ՝

Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ 8 -ՐԴ ՀՈԴՎԱԾ՝

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը:

2. Կուսակցությունները կազմավորվում և գործում են ազատորեն: Կուսակցությունների համար օրենքով երաշխավորվում են գործունեության հավասար իրավական հնարավորություններ:

3. Կուսակցությունները նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:

4. Կուսակցությունների կառուցվածքը և գործունեությունը չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ 48-ՐԴ ՀՈԴՎԱԾ՝

1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

(...)

4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով

անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾ՝

1. Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

2. Հանրային իշխանությունները հավասար պայմաններ են ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:

3. Ընտրողները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն:

ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾ՝

1. Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին:

2. Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել:

ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾ՝

1. Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:

ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾ՝

1. Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

Արգելվում են նախընտրական քարոզչության կազմակերպման և իրականացման ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների, նյութական և մարդկային ռեսուրսների օգտագործումը ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու նպատակով: (...)

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1606 որոշմամբ նշել է. *«Սահմանադրական դատարանն ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի քննության առանձնահատկությունների թվին է դասել.*

« (...)

- ընտրություններն անվավեր ճանաչելու կամ չճանաչելու որոշումը յուրաքանչյուր դեպքում կախված է կոնկրետ հանգամանքներից և պետք է հաշվի առնել իրավաբանորեն փաստարկված խախտման լրջությունն ու ծանրությունը, խախտումների ընդգրկման ծավալը, խախտումներ կատարելու միջոցներն ու ձևերը,

- (...) գործեր քննելիս՝ սահմանադրական դատարանը պետք է ելնի ոչ միայն Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, այլև ընտրական գործընթացի, ողջ ընտրական համակարգի հուսալիության ու վստահելիության հանգամանքից՝ օրենսդրությանը համապատասխան այն կազմակերպելու և անցկացնելու առումով,

- ընտրական իրավունքների ապացուցված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ընտրությունների արդյունքները վերանայելու համար, սակայն այդ վերանայման էական բովանդակությունը պետք է կազմի այն

հարցի պատասխանը, թե արդյոք առկա իրավախախտումներն այնպիսի ընդգրկում ունեն, որ կարող են կասկածի տակ դնել ամբողջ ընտրությունների արդյունքները և վավերությունը,

- որևէ ընտրատեղամասում կամ տարածքում կատարված խախտումները չեն կարող հիմք հանդիսանալ այլ տեղամասերում նմանատիպ խախտումների մասին ենթադրություններ անելու կամ վստահության աստիճանը կասկածի տակ դնելու համար: Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ միայն իրավաբանորեն փաստարկված այն կոնկրետ խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա,

- ընտրությունների արդյունքները կարող են անվավեր ճանաչվել, եթե խախտումներն էապես ազդել են թեկնածուների ստացած ձայների հարաբերակցության վրա և ընդհանուր արդյունքն աղավաղված է» (24.03.2003թ., ՍԴՈ-408):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության համար անհրաժեշտ է.

- նկատի ունենալ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով,

- հստակ պատկերացնել դատական յուրաքանչյուր ատյանի իրավազորության շրջանակները,

- օրենքով սահմանված ժամկետներում և կարգով իրականացնել ընտրական իրավունքի պաշտպանությանն ուղղված միջոցներն այն դատարանում, որն ունի համապատասխան իրավազորություն,

- հաշվի առնել, որ ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցերով Սահմանադրական դատարանը ոչ թե այլ դատարանների նկատմամբ վերադաս դատարան է, այլ իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված կոնկրետ իրավասություն:»

Սահմանադրական դատարանը վերլուծության է ենթարկել նաև ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի

հիմնարար սկզբունքները՝ նշելով, որ *«Սահմանադրությունն ամրագրում է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքները, որոնք եզրագծում են ընտրական իրավահարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման կառուցակարգերը:*

Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի *ուժով Հայաստանի Հանրապետությունն ունի իր քաղաքացիների (բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի) որոշ սահմանադրաիրավական պայմանների առկայության պարագայում ընտրելու և ընտրվելու իրավունքն ապահովելու պարտականություն: Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքով օժտված են Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Նույն հոդվածի ուժով՝ Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու իրավունքով օժտված է քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:*

Սահմանադրության նույն հոդվածով սահմանվում է նաև, որ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Հավասար ընտրական իրավունքի սկզբունքի *էությունը «մեկ ընտրող՝ մեկ ձայն» բանաձևի ապահովումն է, ենթադրում է պետության պարտականությունը՝ արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի միջոցով բացառելու կրկնակի/բազմակի քվեարկությունների հնարավորությունը, ինչպես նաև ապահովելու մասնակցային հավասար հնարավորություններ ընտրական գործընթացին մասնակից քաղաքական միավորների համար:*

Հավասար ընտրական իրավունքի՝ հնարավորությունների հավասարության տարրը բացահայտվել է Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1028 որոշմամբ, որում դատարանը, մասնավորապես, նշել է. «... հնարավորությունների հավասարությունը հավասար ընտրական իրավունքի կարևոր բաղադրատարրերից է: Վերջինս իր հերթին ներառում է, մասնավորապես, այնպիսի պայմաններ, ինչպիսիք են լրատվամիջոցների կողմից լուսաբանումը, ռադիոյի և հեռուստատեսության եթերաժամերի տրամադրումը, ընտրարշավի անկաշկանդ իրականացումը, խոսքի և արտահայտվելու ազատության երաշխավորումը, ընտրարշավի ֆինանսավորման թափանցիկությունը և այլն»:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ՝ «... վերահաստատում է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ ընտրական գործընթացի սուբյեկտներին հավասար հնարավորությունների ընձեռումը սերտորեն առնչվում է ընտրողների կարծիքի ձևավորմանը և ենթադրում պետական մարմինների չեզոքություն՝ նախընտրական քարոզչության, զանգվածային լրատվամիջոցների լուսաբանումների նկատմամբ: Սակայն ընտրական գործընթացների կազմակերպման և անցկացման միջազգային իրավական չափանիշների անվերապահ պահպանման անհրաժեշտությունից ելնելով, սույն գործով հարկ է նշել, որ նախընտրական քարոզչության իրականացման արդարության և ազատության սկզբունքը չի կարող մեկնաբանվել այնքան տարածական, որ բացառվի խոսքի, տեղեկատվության ազատության, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների՝ սեփական տեսակետ ունենալու և այն ներկայացնելու իրավունքի իրականացումը» (10.06.2007թ., ՍԴՈ-703):

Ազատ ընտրական իրավունքի սկզբունքը *պահանջում է, որ պետությունն ապահովի ընտրողի կամքն ազատորեն ձևավորելու և այն արտահայտելու, ընտրողի քաղաքական կամքի ձևավորման ցանկացած ոչ իրավաչափ միջամտությունը բացառելու, ընտրական գործընթացում մրցակից քաղաքական միավորների կողմից իրենց ծրագրերի և գաղափարների ներկայացման և ընտրողների հետ հաղորդակցվելու հարցերում պետական իշխանության մարմինների չեզոքության, ազատ ընտրության այլ բաղադրիչների իրավական կառուցակարգերի ներդրումը և դրանց արդյունավետ գործարկումը:*

Ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքի *պահանջն է, որ Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ համայնքների ավագանիների կողմից ընտրվող համայնքների ղեկավարների, ընտրվեն ուղիղ և անմիջականորեն՝ ընտրողների կողմից:*

Քվեարկության գաղտնիության սկզբունքի *համաձայն՝ պետության պարտականությունն է ապահովել, որ քվեարկության ժամանակ ընտրողի քաղաքական կամքի արտահայտումը տեղի ունենա գաղտնիության պայմաններում և երաշխիքներով»:*

III. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՎԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ԺՈՂՈՎՐԴԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածները համատեղ ձևավորում են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմքը և արտահայտում են պետության գոյության ու գործունեության հիմնարար արժեքները: Սահմանադրության 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն, իսկ 2-րդ հոդվածով ամրագրվում է ժողովրդական ինքնիշխանության սկզբունքը՝ սահմանելով, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին և իրականացվում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Նշված սահմանադրական դրույթները չեն հանդիսանում պարզապես իրավական նորմեր կամ վերացական քաղաքական հռչակագրեր: Դրանք Հայաստանի Հանրապետության սահմանադրական ինքնության, պետականության և ժողովրդավարական կարգի հիմնաքարերն են, որոնց վրա կառուցված է ամբողջ սահմանադրաիրավական համակարգը:

Ժողովրդավարական և իրավական պետության գաղափարը ենթադրում է, որ պետական իշխանության լեգիտիմության միակ սկզբնաղբյուրը ժողովուրդն է, իսկ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրենց լիազորությունները ստանում և իրականացնում են բացառապես ժողովրդի ազատ կամարտահայտման արդյունքում ձևավորված ժողովրդավարական մանդատի հիման վրա:

Ժողովրդական ինքնիշխանության սկզբունքը սահմանադրական իրավունքի առանցքային դոկտրիններից է, որի համաձայն ժողովուրդը ոչ միայն իշխանության աղբյուրն է, այլև պետական իշխանության իրական կրողը: Հետևաբար ընտրությունները ժողովրդավարական հասարակությունում չեն կարող դիտարկվել որպես զուտ քաղաքական կամ կազմակերպչական գործընթաց: Դրանք հանդիսանում են ժողովրդի ինքնիշխան կամքի արտահայտման սահմանադրական մեխանիզմ, որի միջոցով ձևավորվում են պետական իշխանության մարմինները և ապահովվում է պետական իշխանության ժողովրդավարական լեգիտիմությունը:

Իրավական պետության սկզբունքը, որն ամրագրված է Սահմանադրության 1-ին հոդվածում, ենթադրում է, որ պետական իշխանության իրականացումը սահմանափակված է իրավունքով, իսկ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են գործել բացառապես Սահմանադրության և օրենքների շրջանակներում: Իրավական պետության դոկտրինը ներառում է իրավունքի գերակայության, իրավական որոշակիության, համաչափության, իրավահավասարության, իշխանությունների տարանջատման, պետական մարմինների հաշվետվողականության և մարդու հիմնարար իրավունքների արդյունավետ պաշտպանության սկզբունքները: Այս սկզբունքները կոչված են բացառելու պետական իշխանության կամայական իրականացումը և ապահովելու, որ պետությունը ծառայի հանրային շահին, այլ ոչ թե առանձին քաղաքական ուժերի, պաշտոնատար անձանց կամ ազդեցիկ խմբերի շահերին:

Ժողովրդավարական պետության էությունը կայանում է նրանում, որ իշխանությունը ձևավորվում է ազատ և արդար ընտրությունների միջոցով, իսկ քաղաքական մրցակցությունը կազմակերպվում է հավասար հնարավորությունների պայմաններում: Այս առումով սահմանադրական ժողովրդավարության կարևորագույն դոկտրիններից է քաղաքական

բազմակարծության և հավասար քաղաքական մրցակցության սկզբունքը, որի համաձայն պետությունը պարտավոր է պահպանել քաղաքական չեզոքություն և չստեղծել այնպիսի պայմաններ, որոնց արդյունքում որևէ քաղաքական ուժ կարող է անհիմն կամ արհեստական առավելություն ստանալ պետական ռեսուրսների, պաշտոնեական դիրքի կամ վարչական լծակների օգտագործման միջոցով:

Սահմանադրական պետության գաղափարը հիմնված է նաև հանրային իշխանության ֆիդուցիար (fiduciary) բնույթի վրա, ըստ որի պետական իշխանությունը հանրային վստահության ինստիտուտ է: Պաշտոնատար անձինք իշխանությունը չեն իրականացնում սեփական կամ կուսակցական շահերից ելնելով, այլ որպես ժողովրդի կողմից ժամանակավորապես պատվիրակված լիազորությունների կրողներ: Հետևաբար պետական իշխանության ցանկացած օգտագործում, որն ուղղված է ոչ թե հանրային, այլ մասնավոր, կուսակցական կամ քաղաքական շահերի սպասարկմանը, հակասում է սահմանադրական կառավարման էությանը և խաթարում է պետական իշխանության ժողովրդավարական լեգիտիմությունը:

Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներով ամրագրված արժեքները յուրաքանչյուր քաղաքացու համար հանդիսանում են հիմնարար սահմանադրական երաշխիք այն բանի, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է այնպիսի պետական համակարգ, որտեղ մարդը, նրա արժանապատվությունը, իրավունքներն ու ազատությունները ճանաչվում են որպես բարձրագույն արժեք, իսկ պետական իշխանությունը սահմանափակված է իրավունքով և ենթակա է ժողովրդավարական վերահսկողության: Այս դրույթները երաշխավորում են, որ պետությունը ծառայում է հանրությանը, ապահովում է օրենքի առջև բոլորի հավասարությունը, քաղաքական գործընթացների արդարությունը, իշխանության ձևավորման ժողովրդավարական բնույթը և քաղաքացիների ազատ կամարտահայտման իրավունքի արդյունավետ իրականացումը:

Հետևաբար Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածների պաշտպանությունը միայն առանձին սահմանադրական նորմերի պահպանության խնդիր չէ: Այն ուղղակիորեն վերաբերում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական ինքնության, ժողովրդավարական պետականության, իրավունքի գերակայության և ժողովրդի ինքնիշխան իշխանության պահպանմանը: Ցանկացած գործողություն կամ գործընթաց,

որը խաթարում է ազատ ընտրությունների միջոցով ժողովրդի կամքի ազատ և անարգել ձևավորումը, սահմանափակում է քաղաքական մրցակցության հավասար պայմանները կամ պետական իշխանությունը ծառայեցնում է կուսակցական նպատակներին, իր էությամբ վտանգում է հենց այն սահմանադրական հիմքերը, որոնց վրա կառուցված է Հայաստանի Հանրապետությունը որպես ժողովրդավարական և իրավական պետություն:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ առաջնային և հիմնարար նշանակություն ունի ներկայացված փաստական հանգամանքների, դրանցից բխող իրավական հետևանքների և վերջիններիս միջև առկա պատճառահետևանքային կապի գնահատումը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված ազատ, հավասար և իրական ընտրական իրավունքի պաշտպանության տեսանկյունից:

Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ ընտրությունների սահմանադրական գնահատման առանցքային հարցը չի սահմանափակվում միայն քվեարկության օրվա ընթացակարգերի օրինականությամբ, քվեների հաշվարկի ճշգրտությամբ կամ ընտրությունների տեխնիկական կազմակերպման մակարդակով: Ժողովրդավարական և իրավական պետությունում ընտրությունների սահմանադրականության հիմնական չափանիշն այն է, թե արդյոք ընտրության արդյունքն արտահայտում է ժողովրդի ազատ, ինքնուրույն և չկաշկանդված քաղաքական կամքը: Այլ կերպ ասած՝ ընտրությունների լեգիտիմությունը որոշվում է ոչ միայն քվեարկության արդյունքով, այլ նախևառաջ այն գործընթացով, որի արդյունքում ձևավորվել է ընտրողի քաղաքական կամքը:

Սահմանադրահիրավական տեսանկյունից ազատ ընտրությունների իրավունքը ներառում է ոչ միայն քվեարկելու իրավունքը, այլև ընտրողի քաղաքական կամքի ազատ ձևավորման իրավունքը: Այս սկզբունքը ենթադրում է, որ քաղաքացին պետք է հնարավորություն ունենա իր քաղաքական նախապատվությունները ձևավորել ազատ, բազմակարծիք և հավասար քաղաքական միջավայրում՝ զերծ վարչական ճնշումներից, պետական ռեսուրսների անհավասար օգտագործումից, պաշտոնեական ազդեցությունից, տեղեկատվական անհավասարակշռությունից և ընտրական գործընթացի վրա ազդելու այլ անթույլատրելի գործոններից:

Հետևաբար ընտրությունների սահմանադրական գնահատման առարկա են ոչ միայն ընտրությունների օրը տեղի ունեցած գործողությունները, այլև ընտրական գործընթացին նախորդած ամբողջ ժամանակահատվածը, որի ընթացքում ձևավորվել են քաղաքացիների քաղաքական համոզմունքները, նախապատվությունները և վերջնական ընտրությունը: Եթե այդ գործընթացում խախտվել են քաղաքական մրցակցության հավասարության, պետական մարմինների չեզոքության, հանրային իշխանության անաչառության կամ ընտրողների ազատ կամարտահայտման սկզբունքները, ապա նման խախտումները կարող են կասկածի տակ դնել ոչ միայն առանձին ընտրական գործողությունների օրինականությունը, այլև ընտրությունների ընդհանուր սահմանադրական լեգիտիմությունը:

Ներկայացված փաստական տվյալների ամբողջությունը վկայում է այն փաստը, որ բարձրացված հարցերը վերաբերում են ոչ թե առանձին ընտրատեղամասերում կամ ընտրական հանձնաժողովների գործունեության ընթացքում թույլ տրված հնարավոր խախտումներին, այլ ընտրական գործընթացի առավել խորքային և սկզբունքային բաղադրիչին՝ ընտրողների ազատ քաղաքական կամքի ձևավորման միջավայրին: Դրանք առնչվում են ընտրական իրավունքի իրական բովանդակությանը, ժողովրդական ինքնիշխանության սկզբունքին, քաղաքական մրցակցության հավասարությանը, պետական իշխանության քաղաքական չեզոքությանը և ազատ ընտրությունների սահմանադրական երաշխիքներին:

Ուստի ներկայացված փաստական հանգամանքների իրավական գնահատումը պետք է իրականացվի ոչ թե միայն առանձին դրվագների կամ հատուկենտ խախտումների տեսանկյունից, այլ դրանց ամբողջական ազդեցության համատեքստում՝ պարզելու համար,

•թե արդյոք ընտրական գործընթացի ընթացքում պահպանվել են Սահմանադրությամբ ամրագրված այն հիմնարար սկզբունքները, որոնք կոչված են ապահովելու ժողովրդի կամքի ազատ, անկաշկանդ և իրական արտահայտումը: **Քանի որ ժողովրդավարական պետությունում ընտրությունների լեգիտիմության աղբյուրը ոչ թե պարզապես քվեաթերթիկների քանակական հաշվարկն է, այլ ժողովրդի ազատորեն ձևավորված կամքը, ցանկացած հանգամանք, որն ազդում է այդ կամքի ձևավորման գործընթացի վրա, ձեռք է բերում սահմանադրաիրավական**

նշանակություն և ենթակա է առավել խիստ ու համակողմանի գնահատման:

Հետևաբար սույն դիմումի շրջանակներում քննության առարկան պետք է լինի ոչ միայն այն հարցը,

• թե արդյոք ընտրությունների արդյունքներն արտացոլում են քվեարկության պաշտոնական տվյալները, այլև առավել կարևոր հարցը՝

• արդյոք այդ արդյունքները ձևավորվել են այնպիսի ընտրական միջավայրում, որտեղ լիարժեքորեն ապահովված են եղել ժողովրդական ինքնիշխանության, ազատ կամարտահայտման, քաղաքական բազմակարծության, հավասար ընտրական հնարավորությունների և իրավական պետության հիմնարար սկզբունքները: **Միայն այդ պայմաններում ընտրությունները կարող են համարվել սահմանադրական իմաստով ազատ, արդար և լեգիտիմ:**

Եթե պետական և համայնքային կառույցների աշխատակիցները ներգրավվում են քաղաքական միջոցառումներում, եթե ծառայողական ենթակայության մեջ գտնվող անձանցից պահանջվում են քաղաքական բնույթի գործողություններ, եթե պաշտոնատար անձինք մասնակցում են ընտրողների ուղղորդմանը, եթե պետական մարմինների գործունեության նկատմամբ առաջանում են քաղաքական կախվածության կասկածներ, ապա վտանգվում է ժողովրդի ինքնիշխան կամքի ձևավորման գործընթացը:

Այդ դեպքում ընտրությունը դադարում է լինել ժողովրդի իշխանության ազատ իրացում և սկսում է կրել պետական ազդեցության ներքո ձևավորված քաղաքական գործընթացի հատկանիշներ:

Սահմանադրության 2-րդ հոդվածի իմաստով սա արդեն պարզապես ընտրական իրավունքի խախտում չէ:

Սա ժողովրդի իշխանության իրականացման սահմանադրական մեխանիզմի խաթարում է:

2. ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ

Վերոնշյալ փաստական հանգամանքների համակցված գնահատումը, ինչպես նաև դրանց միջև առկա պատճառահետևանքային կապը, հիմք են տալիս եզրակացնելու, որ ընտրական գործընթացի ընթացքում առերևույթ

խախտվել են ՀՀ Սահմանադրության 7-րդ և 8-րդ հոդվածներով ամրագրված ազատ ընտրությունների, քաղաքական բազմակարծության, գաղափարախոսական բազմազանության և բազմակուսակցական համակարգի հիմնարար սկզբունքները:

ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածը սահմանում է, որ ընտրությունները պետք է լինեն ազատ, ընդհանուր, հավասար և ապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումը, մինչդեռ Սահմանադրության 8-րդ հոդվածը երաշխավորում է գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը՝ որպես ժողովրդավարական պետության անբաժանելի բաղադրիչներ: Նշված սահմանադրական սկզբունքները պահանջում են, որպեսզի քաղաքական ուժերը մասնակցեն ընտրական գործընթացին հավասար պայմաններում, իսկ պետական իշխանությունը պահպանվի քաղաքականապես չեզոք դիրքում և չօգտագործվի որևէ քաղաքական ուժի օգտին:

Սույն գործով ներկայացված փաստական տվյալները, սակայն, վկայում են այն մասին, որ իշխող քաղաքական ուժը, միաժամանակ հանդիսանալով գործադիր իշխանության կրող, իր տրամադրության տակ գտնվող վարչական, կազմակերպչական և հանրային ռեսուրսները օգտագործել է այնպիսի եղանակով, որը կարող էր ապահովել անհամաչափ քաղաքական առավելություն և խաթարել ընտրական մրցակցության հավասար պայմանները:

Մասնավորապես՝

• Նախընտրական քարոզչության ընթացքում լայնորեն օգտագործվել են պետական և համայնքային կառավարման համակարգի հետ առնչվող ազդեցության լծակները, այդ թվում՝ համայնքների ղեկավարների հեղինակությունն ու ազդեցությունը համայնքների բնակչության նկատմամբ, ինչպես նաև կրթական և սոցիալական նշանակության հաստատությունների՝ մանկապարտեզների, դպրոցների, քոլեջների և բուժհաստատությունների աշխատակիցների ներգրավումը քաղաքական միջոցառումներին Գործով առկա ապացույցներով հաստատվում է, որ նախընտրական քարոզչության ընթացքում կիրառվել է վարչական ռեսուրս, որի շրջանակներում պետական և համայնքային համակարգերի աշխատակիցները ներգրավվել են քաղաքական միջոցառումներում: Այս հանգամանքը

խախտել է ընտրական գործընթացի հավասարության, ազատության և արդարության սկզբունքները, ընտրողների կամքի ձևավորման վրա գործադրել է անթույլատրելի ազդեցություն և իր ծավալներով ու բնույթով էական ազդեցություն է ունեցել ընտրությունների վերջնական արդյունքների վրա

• **Ընտրական գործընթացին նախորդող ժամանակահատվածում իրականացվել են այնպիսի գործողություններ, որոնք իրենց բովանդակությամբ և նպատակով ունեցել են քաղաքական և քարոզչական բնույթ, սակայն իրականացվել են նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածից դուրս: Նման վարքագիծը ընտրողներին ենթարկել է միակողմանի քաղաքական ազդեցության, խաթարել է նրանց կամքի ազատ ձևավորման գործընթացը և ստեղծել ակնհայտ անհավասար պայմաններ այն քաղաքական ուժերի նկատմամբ, որոնք չեն ունեցել պետական կառավարման համակարգի, վարչական լծակների և հանրային ռեսուրսների համարժեք հասանելիություն:**

• **Պաշտոնեական գործունեության և քաղաքական քարոզչության միջև սահմանների ջնջման դրսևորումը կարող է դիտարկվել նաև այն հանգամանքով, որ պետական պաշտոն զբաղեցնող անձինք օգտագործել են խորհրդանիշներ և քաղաքական բովանդակություն ունեցող պատկերներ, որոնք նույնացվում են իշխող քաղաքական ուժի նախընտրական ուղերձների և ծրագրային դրույթների հետ, այդ թվում՝ այսպես կոչված «Իրական Հայաստանի» քարտեզի խորհրդանիշը:** Նման պայմաններում պետական իշխանության իրականացումը և քաղաքական քարոզչությունը փաստացի միախառնվում են, ինչը հակասում է պետական չեզոքության սկզբունքին:

• **Առանձնակի մտահոգիչ են այն դեպքերը, որոնք առնչվում են վախի, սպառնալիքի կամ ճնշման մթնոլորտի ձևավորմանը:** Եթե նախընտրական միջոցառումների ընթացքում քաղաքական գործիչների կողմից քաղաքացիների հասցեին հնչեցվել են վիրավորական, նվաստացնող կամ սպառնալիք պարունակող արտահայտություններ, ապա դրանք պետք է գնահատվեն ոչ միայն քաղաքական էթիկայի, այլև ընտրողների ազատ կամարտահայտման վրա հնարավոր ազդեցության տեսանկյունից: Ժողովրդավարական հասարակությունում յուրաքանչյուր քաղաքացի

իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր քաղաքական համոզմունքները, քննադատելու իշխանության գործունեությունը և ներկայացնելու իր դժգոհությունները՝ առանց հետապնդման, վախի կամ ճնշման ենթարկվելու վտանգի:

• **Նույն համատեքստում գնահատման ենթակա է նաև քաղաքացի Արթուր Օսիպյանի ձերբակալության հանգամանքը, եթե այն ժամանակային և փաստական առումով կապված է նրա կողմից իշխանության ներկայացուցիչներին ուղղված քաղաքական քննադատության կամ դժգոհության արտահայտման հետ:** Նման դեպքերը, անկախ դրանց քրեաիրավական գնահատականից, ընտրական գործընթացի շրջանակներում մեծ ազդեցություն են թողնում հանրային ընկալումների վրա և նպաստում են վախի սպառնալիքի մթնոլորտի ձևավորմանը:

• **Առանձին իրավական գնահատման է արժանի նաև իրավապահ և վարչական մարմինների հնարավոր ներգրավվածությունը քաղաքական մրցակցության գործընթացներում:** Մասնավորապես, եթե նախընտրական քարոզչության ընթացքում իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչների կողմից հրապարակայնորեն հայտարարվել է, որ ընդդիմադիր քաղաքական ուժի ներկայացուցիչը ենթարկվելու է իրավապահ մարմինների կողմից ձերբակալության, և դրանից անմիջապես հետո այդ գործողությունները փաստացի իրականացվել են, ապա նման հանգամանքները կրկին առաջացնում են ողջամիտ կարծիք, որ իրավապահ մարմինները դուրս են քաղաքական չեզոքությունից և անկախությունից: Այդպիսի իրավիճակներում վտանգվում է ոչ միայն քաղաքական մրցակցության հավասարությունը, այլև իրավական պետության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ պետական մարմինների անկախ և անաչառ գործունեության երաշխիքը:

Վերոգրյալ հանգամանքների ամբողջությունը վկայում է այն մասին, որ խնդիրը չի սահմանափակվում առանձին խախտումներով: Խոսքը վերաբերում է մի շարք փոխկապակցված գործողությունների և գործընթացների, որոնք իրենց ընդհանուր ազդեցությամբ էականորեն ազդում են ընտրողների քաղաքական կամքի ձևավորման վրա և ստեղծում անհավասար մրցակցային պայմաններ սահմանափակելով քաղաքական բազմակարծության լիարժեք իրացումը:

3. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԿԱ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

3.1. ՎԱՐՉԱԿԱ ՌԵՍՈՒՐՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընտրական գործընթացի ընթացքում արձանագրվել են նաև ընտրողների ազատ կամարտահայտման վրա անմիջական ազդեցություն գործադրելու առերևույթ դեպքեր: Մասնավորապես, առկա են տեղեկություններ և փաստական տվյալներ, համաձայն որոնց՝ մի շարք համայնքների ղեկավարներ, համայնքային կառավարման համակարգի հետ փոխկապակցված անձինք, ինչպես նաև իշխող քաղաքական ուժի վստահված անձինք ընտրությունների նախօրեին և քվեարկության օրը իրականացրել են ընտրողների ուղղորդում և ազդեցության գործադրում՝ վերջիններիս հորդորելով, պարտադրելով կամ այլ եղանակներով դրդելով իրենց ձայնը տալ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը:

Նման վարքագիծը ժողովրդավարական ընտրությունների հիմնարար սկզբունքների տեսանկյունից ունի առանձնակի վտանգավոր բնույթ, քանի որ այն ուղղակիորեն ներխուժում է ընտրողի ներքին համոզմունքի ձևավորման և քաղաքական ընտրության ազատության ոլորտ: Ընտրական իրավունքի սահմանադրական բովանդակությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է հնարավորություն ունենա իր քաղաքական նախապատվությունները ձևավորել և իր քվեն տալ բացառապես սեփական համոզմունքի հիման վրա՝ զերծ մնալով պետական, վարչական, ծառայողական կամ այլ ազդեցություններից:

Համայնքի ղեկավարների և նրանց ազդեցության շրջանակում գտնվող անձանց կողմից ընտրողների նկատմամբ ուղղորդման կամ ճնշման գործադրումը հատկապես խնդրահարույց է այն պատճառով, որ այդ անձինք համայնքներում օժտված են հանրային իշխանության որոշակի լծակներով և հասարակական ազդեցությամբ: Հետևաբար նրանց կողմից արտահայտված քաղաքական պահանջները կամ ակնկալիքները քաղաքացիների կողմից կարող են ընկալվել ոչ թե որպես սովորական քաղաքական կոչ, այլ որպես իշխանության ներկայացուցչի կողմից հնչեցված պարտադրանք կամ ակնարկ, որի չկատարումը կարող է

առաջացնել քաղաքացիների մոտ անհանգստություն, կախվածության կամ հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ մտավախություններ:

Այսպիսի գործելակերպը հակասում է ոչ միայն ընտրական իրավունքի ազատության սկզբունքին, այլև Սահմանադրության 2-րդ հոդվածով ամրագրված ժողովրդական ինքնիշխանության գաղափարին, քանի որ ժողովրդի կամքը դադարում է լինել ազատ ձևավորված կամք, եթե դրա ձևավորման գործընթացում ներգրավվում են իշխանական լծակներ, վարչական ազդեցություն կամ պաշտոնեական հեղինակություն: Միաժամանակ այն հակասում է Սահմանադրության 7-րդ հոդվածով երաշխավորված ազատ ընտրությունների սկզբունքին և խաթարում է ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը:

Ավելին, ընտրողների նկատմամբ համակարգային բնույթ կրող ուղղորդումները, հատկապես եթե դրանք իրականացվել են համայնքային կառավարման մարմինների ներկայացուցիչների, վստահված անձանց կամ իշխող քաղաքական ուժի հետ փոխկապակցված անձանց կողմից, պետք է գնահատվեն ոչ թե որպես առանձին և մեկուսացված դրվագներ, այլ որպես ընտրողների ազատ կամքի ձևավորման վրա ազդեցություն գործադրող ընդհանուր մեխանիզմի բաղադրիչներ: Այդպիսի գործողությունները, համադրվելով վարչական ռեսուրսի օգտագործման, պետական պաշտոնի առավելության կիրառման, նախընտրական թաքնված քարոզչության, քաղաքական մրցակիցների նկատմամբ ճնշումների և վախի մթնոլորտի ձևավորման վերաբերյալ ներկայացված մյուս փաստական հանգամանքների հետ, կարող են վկայել ընտրական գործընթացի վրա համակարգային ազդեցության առկայության մասին:

Հետևաբար ներկայացված փաստական տվյալների ամբողջական գնահատումը հիմք է տալիս եզրակացնելու, որ ընտրական գործընթացի ընթացքում առկա են եղել ոչ միայն ընտրական վարչարարության առանձին խախտումներ, այլ նաև ընտրողների ազատ կամարտահայտման վրա ազդեցություն գործադրող փոխկապակցված գործողություններ, որոնք իրենց համակցված ազդեցությամբ կարող էին էապես խաթարել ՀՀ Սահմանադրության 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով երաշխավորված ժողովրդական ինքնիշխանության, ազատ ընտրությունների և քաղաքական բազմակարծության հիմնարար սկզբունքները:

3.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆՏՐՈՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

Սահմանադրական ժողովրդավարության պայմաններում պետությունը պարտավոր է իրականացնել սոցիալական քաղաքականություն և ապահովել քաղաքացիների սոցիալական պաշտպանության իրավունքը: Այդպիսի քաղաքականությունը, որպես կանոն, հանդիսանում է պետության բնականոն գործունեության բաղադրիչ և ինքնին չի կարող դիտվել որպես ընտրական իրավունքի խախտում:

Սակայն ընտրական իրավունքի և սահմանադրական արդար ընտրությունների տեսանկյունից էական նշանակություն ունի ոչ միայն պետական որոշման օրինականությունը, այլև դրա իրական ազդեցությունը ընտրական գործընթացի և ընտրողների քաղաքական կամքի ձևավորման վրա: Ընտրությունների սահմանադրական գնահատման շրջանակներում քննության առարկա է դառնում ոչ միայն այն, թե արդյոք տվյալ սոցիալական միջոցառումը համապատասխանում է օրենքին, այլ նաև այն, թե արդյոք դրա ընդունման ժամանակը, եղանակը և հանրային ներկայացման ձևը կարող էին ազդել ընտրողների քաղաքական նախապատվությունների վրա:

Ժամանակակից ընտրական իրավունքի տեսության և միջազգային ժողովրդավարական չափանիշների համաձայն՝ պետական սոցիալական քաղաքականությունը կարող է վերածվել քաղաքական ազդեցության գործիքի, եթե այն իրականացվում է ընտրություններին անմիջապես նախորդող ժամանակահատվածում և հանրային ընկալման մեջ նույնացվում է ընտրություններին մասնակցող կոնկրետ քաղաքական ուժի կամ իշխանության պահպանման շահի հետ:

Հատկապես զգայուն է այս հարցը այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է կենսաթոշակների, նպաստների, սոցիալական աջակցության ծրագրերի կամ այլ ֆինանսական հատկացումների ավելացմանը: Նման որոշումները սոցիալապես խոցելի խմբերի համար ունեն ոչ միայն տնտեսական, այլև հոգեբանական և քաղաքական ազդեցություն: Քաղաքացին սոցիալական բարելավումը սկսում է ընկալել ոչ թե որպես պետության շարունակական սոցիալական քաղաքականության դրսևորում,

այլ որպես գործող իշխանության կողմից իրեն տրամադրված անմիջական օգուտ:

Առանձնահատուկ սահմանադրաիրավական նշանակություն ունի նաև ՀՀ կառավարության N 748-Ա որոշումը, որով նախատեսվել է ԼՂՀ քաղաքացիների և ՀՀ այն քաղաքացիների որոշակի խմբերի նկատմամբ մինչև 5 միլիոն դրամի չափով պարտավորությունների ներման մեխանիզմի կիրառումը:

Թեև այս որոշումները կարող են ունենալ սոցիալական կամ հումանիտար նպատակներ, ընտրական գործընթացի համատեքստում դրանց ազդեցությունը չի կարող գնահատվել բացառապես տնտեսական կամ սոցիալական տեսանկյունից: Անհրաժեշտ է գնահատել նաև դրանց հնարավոր ազդեցությունը ընտրողների քաղաքական վարքագծի և քաղաքական որոշումների ձևավորման վրա:

Նյութական խթանման կամ նյութական ազդեցության կիրառումը նախընտրական փուլում, ընտրողի քաղաքական կամքի վրա ազդեցություն է ոչ միայն ուղղակի կաշառքի կամ փոխհատուցման միջոցով, այլև այնպիսի տնտեսական օգուտների տրամադրմամբ, որոնք օբյեկտիվորեն ունակ են ազդելու ընտրողի քաղաքական վարքագծի վրա:

Այս միջոցի կիրառման համար պարտադիր չէ ապացուցել, որ ընտրողից ուղղակիորեն պահանջվել է քվեարկել կոնկրետ քաղաքական ուժի օգտին: Բավական է պարզել, որ պետության կողմից տրամադրված նյութական օգուտը, հաշվի առնելով դրա ծավալը, նշանակությունը և տրամադրման ժամանակահատվածը, կարող էր ողջամտորեն ազդել ընտրողի քաղաքական որոշման վրա, և որպես այդպիսին ընդունել որպես թաքնված և օրինական ճանապարհով տրված ընտրակաշառք:

Մինչև 5 միլիոն դրամի չափով պարտավորությունների ներման կամ դադարեցման մասին որոշումը, իր բնույթով, հանդիսանում է զգալի տնտեսական արժեք ունեցող պետական միջամտություն: Հազարավոր քաղաքացիների համար նման որոշումը կարող է ունենալ էական ֆինանսական նշանակություն՝ փոխելով նրանց տնտեսական վիճակը և ստեղծելով պետության կամ գործող իշխանության նկատմամբ երախտագիտության, կախվածության կամ քաղաքական աջակցություն ցուցաբերելու հոգեբանական տրամադրվածություն:

Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ նման որոշումն ընդունվել է ընտրություններին անմիջապես նախորդող ժամանակահատվածում: Ընտրական իրավունքի տեսանկյունից հենց ժամանակային գործոնն է որոշիչներից մեկը, քանի որ նույնիսկ սոցիալապես հիմնավորված միջոցառումը կարող է ստանալ բոլորովին այլ իրավական գնահատական, եթե այն իրականացվում է ընտրողների քաղաքական նախապատվությունների ձևավորման առավել ակտիվ փուլում:

Այս առումով անհրաժեշտ գնահատելի է տվյալ որոշման ընտրական ազդեցությունը, որը ինքնին վկայում է այն կարևորագույն փաստի մասին, որ այս աջակցությունը մեծապես նպաստել է իշխող քաղաքական ուժի առավելության մասին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ N 748-Ա որոշումը սահմանադրական վերահսկողության շրջանակներում պետք է գնահատվի ոչ միայն որպես սոցիալական քաղաքականության միջոց, այլ նաև որպես ընտրական գործընթացի վրա ազդեցություն ունեցող գործոն: սույն որոշման ընդունման ժամանակը, ծավալը և հանրային ներկայացման ձևը օբյեկտիվորեն նպաստել են ընտրողների քաղաքական վարքագծի վրա ազդեցություն գործադրելուն, պետք է դիտարկվի որպես ազատ ընտրությունների, քաղաքական մրցակցության հավասարության և ընտրողների կամքի ազատ ձևավորման սահմանադրական սկզբունքների խախտման հանգամանքի վրա :

Տվյալ պայմաններում ընտրողի քաղաքական նախապատվությունը կարող է ձևավորվել ոչ թե տարբեր քաղաքական ծրագրերի, գաղափարների և քաղաքական առաջարկների ազատ մրցակցության արդյունքում, այլ պետական իշխանության կողմից տրամադրված նյութական կամ սոցիալական առավելության ազդեցության ներքո: Արդյունքում խաթարվում է ընտրական գործընթացի կարևորագույն սկզբունքներից մեկը՝ ընտրողի քաղաքական կամքի ազատ և ինքնուրույն ձևավորման սկզբունքը:

Սահմանադրության 2-րդ հոդվածով ամրագրված ժողովրդական ինքնիշխանության սկզբունքը ենթադրում է, որ իշխանությունը ձևավորվում է քաղաքացիների ազատ քաղաքական կամարտահայտության արդյունքում: Հետևաբար պետական միջոցների օգտագործումը այնպիսի եղանակով, որը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրողների քաղաքական

որոշումների վրա, ձեռք է բերում սահմանադրաիրավական նշանակություն և ենթակա է առավել խիստ գնահատման:

Ուստի ընտրություններին անմիջապես նախորդող ժամանակահատվածում սոցիալական վճարների, կենսաթոշակների կամ այլ սոցիալական հատկացումների էական բարձրացումները, որոշակի խումբ քաղաքացիներին տրվող ֆինանսական աջակցությունը պետք է գնահատվեն ոչ միայն սոցիալական քաղաքականության նպատակահարմարության, այլ նաև ընտրական գործընթացի վրա դրանց հնարավոր ազդեցության տեսանկյունից՝ պարզելու համար, թե արդյոք դրանք չեն հանգեցրել ընտրական մրցակցության հավասար պայմանների խախտման և ընտրողների ազատ քաղաքական կամքի ձևավորման վրա անհամաչափ ազդեցության:

3.3. ԿԸՀ- Ի ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊՈԶԻՏԻՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄ

Սույն գործի շրջանակներում առանձին սահմանադրաիրավական գնահատման ենթակա է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեությունը՝ որպես ընտրական գործընթացի օրինականության և ընտրական իրավունքների պաշտպանության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի:

Ժամանակակից սահմանադրական իրավունքում և մարդու իրավունքների պաշտպանության համակարգում վաղուց ձևավորվել է այն մոտեցումը, համաձայն որի՝ պետության պարտականությունները չեն սահմանափակվում միայն իրավունքների նկատմամբ չմիջամտելու պահանջով: Պետությունը կրում է նաև դրական պարտավորություններ, որոնք ենթադրում են իրավական, կազմակերպական և ինստիտուցիոնալ այնպիսի մեխանիզմների ստեղծում և գործադրում, որոնք իրականում ապահովում են համապատասխան իրավունքի արդյունավետ իրականացումն ու պաշտպանությունը:

Այս սկզբունքը լիարժեք կիրառելի է նաև ընտրական իրավունքի ոլորտում: Ազատ ընտրությունների իրավունքը չի կարող դիտարկվել որպես պետության կողմից միայն չխախտելու ենթակա իրավունք: Պետությունը պարտավոր է ստեղծել արդյունավետ վերահսկողական համակարգ, որը

կկանխի ընտրական գործընթացի նկատմամբ ապօրինի ազդեցությունը, կբացահայտի ընտրական իրավախախտումները և կապահովի դրանց ժամանակին կանխումը կամ վերացումը, որը հնարավորություն կտա կասկածի տակ չդնել ընտրության արդյունքները:

Հայաստանի Հանրապետությունում այդ դրական պարտավորության հիմնական կրողներից մեկը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է: ԿԸՀ-ն ոչ միայն ընտրությունների կազմակերպման մարմին է, այլ նաև ընտրական գործընթացի օրինականության ապահովման կարևորագույն ինստիտուցիոնալ երաշխիքը: Հենց այդ պատճառով ընտրական օրենսդրությամբ ԿԸՀ-ին վերապահված են ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողական, արձագանքման և իրավապահ մարմինների հետ համագործակցության լայն լիազորություններ:

Հետևաբար ԿԸՀ-ի սահմանադրական գործառույթը չի կարող մեկնաբանվել նեղ՝ որպես միայն ընտրությունների տեխնիկական կազմակերպման պարտականություն: Ընտրական գործընթացի նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը նրա լիազորությունների բովանդակային և էական մասն է:

Սույն գործով ներկայացված փաստական տվյալները ցույց են տալիս, որ նախընտրական քարոզչության ընթացքում հանրային տիրույթում լայնորեն տարածվել են տեղեկություններ վարչական ռեսուրսի օգտագործման, պետական պաշտոնեական դիրքի առավելության կիրառման, ընտրողների նկատմամբ ազդեցության, քաղաքական ճնշումների, համայնքային և պետական հիմնարկների աշխատակիցների ներգրավման, ինչպես նաև ընտրական մրցակցության հավասար պայմանների խախտման վերաբերյալ:

Ավելին, այդ տեղեկությունները չեն մնացել բացառապես հանրային քննարկումների մակարդակում: Դիմող կողմը պաշտոնապես դիմել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ներկայացնելով համապատասխան փաստական տվյալներ և ապացույցներ, ինչպես նաև մատնանշելով, որ արձանագրված երևույթները կարող են էական ազդեցություն ունենալ ընտրական գործընթացի վրա: Դրանով իսկ իրավասու մարմինը ոչ միայն հնարավորություն է ստացել տեղեկանալու հնարավոր խախտումների մասին, այլև պաշտոնապես ծանուցվել է դրանց գոյության վերաբերյալ:

ԿԸՀ-ի պատասխանից ակնհայտ է, որ հանձնաժողովը տեղյակ է եղել բարձրացված խնդիրներին և դրանք դիտարկել է իր իրավասության շրջանակում քննարկման ենթակա հարցեր:

Այս հանգամանքը էական է, քանի որ տվյալ պահից սկսած ԿԸՀ-ի վրա առաջացել է ոչ թե վերացական, այլ կոնկրետ իրավական պարտականություն՝ իր լիազորությունների շրջանակում ապահովելու ներկայացված տեղեկությունների արդյունավետ քննությունը և ձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք կկարողանային կանխել կամ նվազեցնել հնարավոր խախտումների ազդեցությունը ընտրական գործընթացի վրա:

Միաժամանակ ներկա իրավիճակը փաստում է, որ ներկայացված խախտումների բնույթին և մասշտաբին համարժեք վերահսկողական կամ կանխարգելիչ միջոցառումներ չեն իրականացվել: որի արդյունքում ԿԸՀ-ի արձագանքը չի հանգեցրել վարչական ռեսուրսի կիրառման դադարեցման, ընտրողների վրա ազդեցության մեխանիզմների վերացման կամ ընտրական մրցակցության պայմանների վերականգնման:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի այն հանգամանքը, որ ընտրական իրավունքում վերահսկողության արդյունավետությունը գնահատվում է ոչ միայն կատարված գործողությունների փաստով, այլև դրանց գործնական արդյունքով: Եթե վերահսկող մարմինը տեղեկացված է ընտրական գործընթացի վրա ազդող հնարավոր խախտումների մասին, սակայն այդ խախտումները շարունակում են առկա մնալ մինչև քվեարկության ավարտը, ապա ծագում է հարց՝ արդյոք իրականացված միջոցառումները բավարար և արդյունավետ են եղել ընտրական իրավունքի պաշտպանության տեսանկյունից:

Ընտրական գործընթացի առանձնահատկությունն այն է, որ դրա նկատմամբ ազդեցություն ունեցող բազմաթիվ խախտումներ ունեն էական մեծ հետևանք: Վարչական ռեսուրսի օգտագործումը, ընտրողների ուղղորդումը, ճնշումները կամ պետական պաշտոնեական դիրքի առավելության կիրառումը արդեն իսկ մեծ ազդեցություն է թողել ընտրողների քաղաքական կամքի ձևավորման վրա դեռևս նախքան քվեարկության օրը, որը և ինչպես անհնար դարձրեց այդ վիճակի ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն, այլ նաև իր էկան հետքը թողեց ընտրությունների արդյունքների ելիք վրա:

Հետևաբար ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի հիմնական գործառույթը ոչ թե միայն իրավախախտումները հետագայում արձանագրելն է, այլ դրանց ազդեցությունը ժամանակին կանխելը:

Դիմող կողմը հենց այդ նպատակով է նախապես դիմել ԿԸՀ-ին՝ մատնանշելով, որ արձանագրված երևույթներն արդեն իսկ ազդում են ընտրական գործընթացի վրա և առաջացրել են անդառնալի հետևանքներ ընտրությունների արդյունքների տեսանկյունից:

Այս պայմաններում ԿԸՀ-ի կողմից իրականացված արձագանքը և հետագա անգործությունը լիարժեք գնահատվում է ձևական գործողությունների իրականացում, որը որևէ կերպ չի հանգեցրել ընտրական գործընթացի արդյունավետ պաշտպանության:

Հաստատված փաստ է այն հանգամանքը, որ արձանագրված խնդիրները շարունակել են գոյություն ունենալ մինչև ընտրությունների ավարտը, ուստի այն ևս մեկ անգամ վկայում է, որ ընտրական գործընթացի նկատմամբ իրականացված վերահսկողությունը չի ապահովել այն արդյունքը, որի համար ԿԸՀ-ին վերապահված են համապատասխան սահմանադրական և օրենսդրական լիազորություններ:

Այսպիսով նվերոգրյալից պարզ է դառնում, որ ընտրական գործընթացի օրինականության հիմնական երաշխավորը չի կատարել իր վրա դրված պոզիտիվ պարտավորությունը՝ ապահովելու ընտրողների ազատ կամարտահայտության, քաղաքական ուժերի հավասար հնարավորությունների և ընտրությունների արդարության արդյունավետ պաշտպանությունը:

3.4. ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության հայեցակարգային հիմքն ու գոյության բացարձակ նախապայմանը հանրային իշխանության ձևավորման օրինականությունն է, որն ուղղակիորեն բխում է ժողովրդի ազատ, անկաշկանդ և անաղարտ կամարտահայտությունից: Երբ ընտրական գործընթացը թունավորվում է համակարգային կոռուպցիայի, ընտրակաշառքների, հարկադրանքի, քաղաքական սակարկությունների և քվեարկության գաղտնիության

բացահայտ ոտնահարման ծանրակշիռ դրսևորումներով, վտանգվում է ոչ միայն կոնկրետ ընտրության արդյունքը, այլև տեղի է ունենում Սահմանադրության 2-րդ հոդվածով ամրագրված հիմնարար սկզբունքի՝ ժողովրդի իշխանության յուրացման առերևույթ գործընթաց: Սույն խորքային իրավական վերլուծությամբ, հիմնվելով իրավասու պետական մարմինների կողմից արձանագրված անհերքելի փաստական տվյալների, ներպետական օրենսդրության և միջազգային իրավական նորմերի ու նախադեպային իրավունքի համադրության վրա, ներկայացնում ենք ընտրությունների արդյունքների վավերականությունը բացառող համակարգային խախտումների համապարփակ իրավական գնահատականը:

3.4.1. ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅԱՆ ԽԱԹԱՐՄԱՆ ՑՈՒՑԻՉ

Ընտրական գործընթացի օրինականության վրա էական և որոշիչ ազդեցություն ունեցած գործոնների գնահատման համար Սահմանադրական դատարանի մեթոդաբանության տեսանկյունից առանցքային է իրավախախտումների ոչ թե պատահական, դրվագային կամ մեկուսացված, այլ կազմակերպված, համապետական և ինստիտուցիոնալ բնույթը: 2026 թվականի փետրվարի 7-ից՝ ընտրությունների նշանակման պահից սկսած, իրավապահ մարմինների կողմից նախաձեռնված 115 քրեական վարույթները չեն կարող դիտարկվել որպես անհատական իրավախախտումների սովորական հանրագումար: Դրանք վկայում են ընտրական համակարգի դեմ ուղղված համատարած, կառուցվածքային արատավոր երևույթների մասին, որոնք նպատակ են հետապնդել կանխամտածված կերպով ձևախեղել քվեարկության իրական պատկերը:

Խախտումների համակարգվածությունը հավաստվում է դրանց սուբյեկտային և աշխարհագրական լայն ընդգրկվածությամբ, որտեղ ներգրավված են եղել ընտրական գործընթացի հիմնական քաղաքական դերակատարները.

• «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի գործունեության հետ կապված նախաձեռնվել է 77 քրեական վարույթ:

• «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առնչությամբ հարուցվել է 24 քրեական վարույթ:

• «Հայաստան» կուսակցությունների դաշինքի առնչությամբ նախաձեռնվել է 11 քրեական վարույթ:

Այս վիճակագրությունը ցույց է տալիս, որ ընտրական պայքարի հիմնական սեգմենտները գործել են իրավական դաշտից դուրս՝ ստեղծելով ապօրինի ազդեցության համատարած ու կազմակերպված ցանց: Այս վարույթների շրջանակներում 242 անձի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը և դրանցից 100 անձի նկատմամբ կիրառված ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոցները (որոնցից 52-ը՝ կալանք, իսկ 48-ը՝ տնային կալանք) փաստում են, որ հանրային վտանգավորության աստիճանն ու ապացուցողական բազան եղել են բավարար ծանրակշիռ, որպեսզի դատարանները դիմեն անձնական ազատության սահմանափակման ծայրահեղ միջոցներին: Սա բացառում է որևէ պնդում այն մասին, թե արձանագրված խախտումները եղել են աննշան, տեխնիկական կամ ընտրությունների ելքի վրա ազդեցություն չունեցող բնույթի:

Քրեական դատավարական գործիքներից զատ, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ շտաբի կողմից 73 լրատվական կայքերի և 27 սոցիալական մեդիա հարթակների մշտադիտարկմամբ արձանագրված 47 առերևույթ կոռուպցիոն ահազանգերը լրացնում են այն ընդհանուր արատավոր համատեքստը, որում տեղի են ունեցել ընտրությունները: Մեդիա տիրույթի նմանատիպ աղտոտվածությունը կազմակերպված կոռուպցիոն սխեմաների մասին հավաստի տեղեկություններով ինքնին ձևավորել է հանրային անվստահության այնպիսի մթնոլորտ, որտեղ անհնար է խոսել ընտրական օրինականության սահմանադրական կանխավարկածի մասին:

Առաջնային իրավական և փաստական նշանակություն ունի նաև գործադիր իշխանության ղեկավարի՝ ՀՀ վարչապետի հրապարակային հայտարարությունն այն մասին, որ արձանագրված խախտումները «ազդել են ընտրությունների արդյունքների վրա», և որ առանձին քաղաքական ուժեր քվեարկության շեմը չպետք է հաղթահարեին: Սահմանադրական իրավունքի տեսանկյունից, երբ պետության բարձրագույն քաղաքական պաշտոնյան հրապարակայնորեն ընդունում է, որ իրավախախտումներն

ունեցել են որոշիչ և արդյունք ձևավորող ազդեցություն, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների արդյունքների սովորական ամփոփումը վերածվում է իրավական ձևականության: Այս պարագայում արձանագրվում է արդյունքների և ժողովրդի իրական կամքի միջև առկա ակնհայտ խզումը: Սահմանադրական դատարանը, որպես սահմանադրական իրավակարգի բարձրագույն երաշխավոր, չի կարող անտեսել պետության գործադիր թևի ղեկավարի կողմից փաստված այս հանգամանքը և պարտավոր է այն գնահատել ընտրությունների վավերականությունը բացառող առանցքային գործոն:

3.4.2.ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԱԶԱՏ ԿԱՄԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՊՏԱԳՈՒՅՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 2-րդ և 48-րդ հոդվածները, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի 4-րդ և 6-րդ հոդվածները երաշխավոր են կանգնում ընտրությունների անցկացմանը ազատության, կամավորության և գաղտնիության սկզբունքների հիման վրա: Այս նորմերը կազմում են ընտրական ժողովրդավարության միջուկը, և դրանց ցանկացած խեղաթյուրում հանգեցնում է ընտրության՝ որպես իշխանության լեգիտիմացման գործիքի, բովանդակազրկմանը: Սակայն, ձեռք բերված փաստական տվյալները վկայում են այս սկզբունքների նպատակաուղղված, ցինիկ և կառուցվածքային ոտնահարման մասին:

Ա. Ընտրողների կամքի ձևավորման վրա ապօրինի ազդեցության և նյութական շահագրգռման մեխանիզմները

Լոռու մարզում և Ալավերդի քաղաքում պատգամավորության թեկնածուների և նախընտրական գրասենյակների պատասխանատուների կողմից գործարկվել են ընտրողներին, այդ թվում՝ հասարակության առավել խոցելի խմբերին, մասնավորապես արցախցիներին, նյութապես շահագրգռելու բարդ և դիվերսիֆիկացված սխեմաներ: Բնակարանների վարձավճարների ֆինանսավորումը և 20,000-ական դրամների կանխիկ բաշխումը, որն իրականացվել է իրավապահների ուշադրությունից խուսափելու նպատակով միջնորդների անձնական մեքենաներով և արտասահմանյան (ռուսական) բանկային համակարգերի ներգրավմամբ,

ուղղակիորեն տեղավորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածի (ընտրակաշառք առաջարկելը, խոստանալը կամ տալը) հատկանիշների մեջ:

Իրավական տեսանկյունից ընտրակաշառքը ոչ միայն քրեորեն պատժելի արարք է, այլև սահմանադրական իրավունքի կոպտագույն խախտում, քանի որ այն վերացնում է ընտրողի կամքի ինքնաբուխ և անկախ ձևավորումը: Երբ քաղաքական սուբյեկտը նյութական միջոցների ներարկմամբ փոխարինում է ընտրողի գիտակցված քաղաքական նախապատվությունը, ընտրության արդյունքը դադարում է լինել քաղաքական կամարտահայտություն և վերածվում է ֆինանսական գործարքի, ինչն ուղղակիորեն հակասում է Սահմանադրության 48-րդ հոդվածի բուն իմաստին:

Բ. Քվեարկության գաղտնիության խախտումը և վերահսկողության սահմանումը

Ընտրական իրավունքի տեսանկյունից առավել վտանգավոր և սահմանադրական կարգի հիմքերը խարխլող դրսևորում է քվեարկության գաղտնիության բացարձակ սկզբունքի դեմ ոտնձգությունը: Ալավերդի քաղաքում և Սյունիքի մարզի Գորիս համայնքում արձանագրված դեպքերը, երբ ընտրողներից պահմիջոցով պահանջվել է քվեախցիկում լուսանկարել քվեարկած քվեաթերթիկը և ներկայացնել որպես կատարված նյութական կամ այլ պարտավորության ապացույց, հանդիսանում է կամքի ազատ արտահայտման նկատմամբ ապօրինի վերահսկողության և հոգեբանական հարկադրանքի դասական օրինակ:

Քվեարկության գաղտնիությունը ընտրողի պաշտպանության հիմնական իրավական երաշխիքն է արտաքին ճնշումներից և հետապնդումներից: Այս սկզբունքի վերացումը կամ դրա նկատմամբ վերահսկողության սահմանումը ոչ միայն խախտում է ՀՀ Ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի պահանջները, այլև հարկադրանքի միջոցով ամբողջությամբ կաթվածահար է անում ընտրության «ազատ» լինելու հայեցակարգային էությունը, քանի որ վախի կամ պարտավորվածության տակ գտնվող ընտրողը ի վիճակի չէ իրացնել իր սահմանադրական ազատությունը:

3.4.3.ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից կիրառված քաղաքական տեխնոլոգիաները և նախընտրական մանիպուլյացիաները դուրս են եկել իրավական բոլոր սահմաններից՝ հարվածելով պետականության հիմքերին: Ռուսաստանի Դաշնությունում թմրամիջոցների պահման համար դատապարտված անձանց պատժից ազատ արձակելու և Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու վերաբերյալ ծնողներին տրված պաշտոնական, գրավոր խոստումները, որոնք ձևակերպվել են կոնկրետ ստորագրված հուշագրերի տեսքով, իրենցից ներկայացնում են արդարադատության իրականացման և պետության ինքնիշխան գործառույթների ոլորտում ապօրինի միջամտության խոստման միջոցով ընտրակաշառքի տրամադրման աննախադեպ դրսևորում:

ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածն ուղղակիորեն արգելում է ընտրողներին անհատույց ծառայությունների մատուցումը կամ դրանց խոստումը նախընտրական քարոզչության շրջանակներում: Քաղաքական իշխանության հասնելու նպատակով անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժի կրումից ազատելու հրապարակային խոստումները հարվածում են իրավական պետության, օրենքի առջև բոլորի հավասարության և արդարադատության անկախության հիմնարար սկզբունքներին: Սա ցույց է տալիս, որ ընտրողների կամքը նվաճվել է ոչ թե քաղաքական կամ տնտեսական ծրագրերի ազատ մրցակցության արդյունքում, այլ անձնական ողբերգությունների և իրավական հարկադրանքի գործիքների ապօրինի շահագործմամբ:

Բացի այդ, 2026 թվականի ապրիլին Երևանում կազմակերպված մասշտաբային հավաքներում սոցիալապես խոցելի խմբերի ներգրավումը և նրանց նպատակային, կազմակերպված ֆինանսավորումը փաստում է, որ քաղաքական սուբյեկտները համակարգված կերպով օգտագործել են բնակչության աղքատության, տնտեսական անպաշտպանվածության և սոցիալական խնդիրների գործոնը: Սահմանադրական իրավունքի տեսանկյունից, սոցիալական ծանր դրության մեջ գտնվող անձանց կամքի

նպատակային կապիտալիզացիան ֆինանսական ներարկումների միջոցով հանդիսանում է ընտրական իրավունքի չարաշահում: Ընտրությունները չեն կարող համարվել ազատ և արդար, եթե հասարակության մի ստվար հատվածի սոցիալական կախվածությունը պետությունից կամ մասնավոր սուբյեկտներից վերածվում է քաղաքական առուվաճառքի առարկայի, ինչը հանգեցնում է Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված սոցիալական պետության գաղափարի ամբողջական նենգափոխմանը:

3.4.4.ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՈՂԱԿԱՆ ԲԱՌԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ընտրությունների արդյունքների վավերականությունը վիճարկող սույն գործով առկա է փաստական հանգամանքների մի ծավալուն շղթա, որոնցից յուրաքանչյուրն առանձին և բոլորը միասին վերցրած ամբողջությամբ կազմաքանդում են լեգիտիմ ընտրական գործընթացի սահմանադրական կանխավարկածը:

Առաջին հերթին, անհրաժեշտ է գնահատել իրավապահ մարմինների կողմից իրականացված գործողությունների իրավական կշիռը: 115 քրեական վարույթների հարուցումը սոսկ վիճակագրական տվյալ չէ, այլ ապացուցողական նշանակություն ունեցող իրավաբանական փաստ: Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ վարույթ նախաձեռնելու և առավել ևս 242 անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համար անհրաժեշտ է հիմնավոր կասկածի և առերևույթ հանցանքի կատարումը հավաստող փաստական տվյալների բավարար համակցություն:

Այն հանգամանքը, որ դատարանները 100 անձի նկատմամբ կիրառել են ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոցներ, որոնցից 52-ը՝ կալանավորում, նշանակում է, որ դատական մարմինները, գնահատելով քրեական գործերի նյութերը, հաստատված են համարել հանցանքի կատարված լինելու բարձր հավանականությունը և անձանց կողմից քննությանը խոչընդոտելու կամ նոր հանցանք կատարելու ռիսկերը: Ընտրական իրավունքի համատեքստում սա նշանակում է, որ ընտրողների կամքի վրա ապօրինի ազդեցություն գործադրող հանցավոր ցանցն ունեցել

է այնպիսի կազմակերպվածություն և ռեսուրսներ, որոնց չեզոքացումը հնարավոր է եղել միայն անձանց մեկուսացնելու միջոցով:

Երկրորդ, կուսակցությունների և դաշինքների միջև քրեական վարույթների բաշխվածությունը (77-ը՝ «Ուժեղ Հայաստան» դաշինք, 24-ը՝ «Բարգավաճ Հայաստան», 11-ը՝ «Հայաստան» դաշինք) վկայում է այն մասին, որ իրավախախտումները կրել են ոչ թե պատահական կամ անհատական բնույթ, այլ եղել են տվյալ քաղաքական միավորների նախընտրական մարտավարության ինստիտուցիոնալ մասը: Երբ քաղաքական ուժի կառուցվածքային ստորաբաժանումները՝ կենտրոնական շտաբներից մինչև տեղական ակտիվիստներ, ներգրավվում են քրեորեն պատժելի սխեմաներում, տեղի է ունենում ընտրական մրցակցության սահմանադրական սկզբունքի դեֆորմացիա:

Ալավերդիում և Լոռու մարզում արձանագրված փաստերը, մասնավորապես բնակարանների վարձավճարների փոխհատուցումը և 20,000-ական դրամների կանխիկ բաշխումը, ցույց են տալիս, որ թիրախավորվել են հասարակության ամենաանպաշտպան շերտերը, այդ թվում՝ արցախահայերը: Իրավական տեսանկյունից սա հանդիսանում է կամքի ազատության նպատակային կանխամտածված խաթարում, քանի որ փախստականի կարգավիճակում կամ սոցիալական ծայրահեղ ճգնաժամում գտնվող անձի համար նյութական աջակցությունը դադարում է լինել սոսկ օգնություն և վերածվում է գոյապահպանական գործոնի, ինչն անհնարին է դարձնում քաղաքական ազատ ընտրության կատարումը:

Երրորդ, արտասահմանյան (ռուսական) բանկային համակարգերի և անձնական մեքենաների միջոցով գումարների տեղափոխման ու բաշխման փաստը վկայում է իրավախախտումների կոնսպիրատիվ և պրոֆեսիոնալ բնույթի մասին: Սա նշանակում է, որ գործ ունենք ընտրական հանցագործություններ կատարելու նպատակով ստեղծված հատուկ կառույցների հետ, որոնք նպատակ են ունեցել շրջանցել պետական վերահսկողական մեխանիզմները:

Չորրորդ, ամենամտահոգիչ և իրավական առումով կործանարար փաստը քվեախցիկում քվեաթերթիկների լուսանկարման պահանջն է, որն արձանագրվել է Ալավերդիում և Գորիսում: Լուսանկարումը հանդիսանում է վերահսկվող քվեարկության (controlled voting) ապացույց: Եթե ընտրողը պարտավոր է ապահովել իր քվեարկության տեսանելիությունը երրորդ

անձանց համար, ապա քվեարկության գաղտնիության սահմանադրական երաշխիքը (Սահմանադրության 48-րդ հոդված) ամբողջությամբ ոչնչանում է: Գաղտնիության սկզբունքի խախտումը ավտոմատ կերպով հանգեցնում է ընտրության ազատության կորստին, քանի որ ընտրողը գիտակցում է, որ իր քվեն այլևս անոնիմ չէ և դրան կարող են հետևել անձնական, տնտեսական կամ այլ բացասական հետևանքներ:

Հատուկ ուշադրության է արժանի նաև արդարադատության ոլորտում ապօրինի միջամտության խոստումների փաստը: ՌԴ-ում դատապարտված անձանց ազատ արձակելու և ՀՀ տեղափոխելու վերաբերյալ գրավոր հուշագրերի ստորագրումը ծնողների հետ ոչ միայն ընտրական իրավախախտում է, այլև հանդիսանում է պետական իշխանության և սահմանադրական մարմինների գործառույթների ուղղակի յուրացման փորձ: Քաղաքական ուժը չի կարող իրեն վերապահել արդարադատության իրականացման, քրեական պատժի կրման կամ միջազգային իրավական օգնության ոլորտում որոշումներ կայացնելու իրավասություն: Նման խոստումները հանրության գիտակցության մեջ խարխլում են պետության՝ որպես իրավական ինստիտուտի հանդեպ վստահությունը և ընտրությունները վերածում ապօրինի արտոնությունների սակարկության հարթակի:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ

Սահմանադրական դատարանը, քննարկելով ընտրական հիրավունքի հիմնարար սկզբունքները, դրանց մեջ առանձնացնում է ընդհանուր ընտրական իրավունքը: Սահմանադրական դատարանը արձնագարում է, որ «*Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի ուժով Հայաստանի Հանրապետությունն ունի իր քաղաքացիների (բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի) որոշ սահմանադրաիրավական պայմանների առկայության պարագայում ընտրելու և ընտրվելու իրավունքն ապահովելու պարտականություն*»: Այսինքն՝ թե պասիվ և ակտիվ ընտրական իրավունքները բոլորի համար հավասար չափով են երաշխավորված: Որևէ անձ չպետք է զրկվի ընտրական իրավունքից, բացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ արձանագրված դեպքերից:

Այնուամենայնիվ, ԿԸՀ-ն, շրջանցելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այս կարևորագույն սկզբունքը, անվավեր է ճանաչել 3 ընտրատեղամասերի քվեարկության արդյունքները՝ խախտելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի հստակ պահանջը վերաքվեարկություն նշանակելու մասին, և չի նշանակել վերաքվեարկություն: Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, որ 3395 ընտրողի ձայներ ոչ իրավաչափ կերպով համարվել են անճշտություններ և հաշվի չեն առնվել մանդատների բաշխման ընթացքում: Սահմանադրական նորմի մակարդակ ունեցող այս սկզբունքի խախտումներն էապես ազդել է թեկնածուների ստացած ձայների հարաբերակցության վրա և դրա արդյունքում ընտրությունների ընդհանուր արդյունքն աղավաղվել է, քանի որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը տվյալ ընտրատեղամասերի քվեարկության նախնական արդյունքների հաշվի առնման դեպքում ունենալու էր բավարար քանակության ձայներ Ազգային ժողովի մանդատների բաշխմանը մասնակցելու համար:

Արդյունքում ունենք մի իրավիճակ, երբ ՀՀ-ի 3395 ընտրող-քաղաքացի զրկված է իր պասիվ ընտրական իրավունքն իրացնելու հնարավորությունից, իսկ այդ իրավունքի վերականգնման համար չի տրվել վերաքվեարկությանը մասնակցելու հնարավորություն՝ խախտելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածի 1-ին մասը:

IV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Վենետիկի հանձնաժողովն իր բազմաթիվ եզրակացություններում արձանագրել է, որ ընտրությունների լեգիտիմությունը կախված է ոչ միայն քվեների հաշվարկի ճշտությունից, այլև ընտրողի կամքի ազատ ձևավորման հնարավորությունից:

Եվրոպական մարդու իրավունքների դատարան իր նախադեպային իրավունքում բազմիցս նշել է, որ պետությունը պարտավոր է ապահովել այնպիսի ընտրական միջավայր, որտեղ ընտրողը պաշտպանված կլինի ճնշումներից, սպառնալիքներից, կոռուպցիոն ազդեցություններից և իշխանական միջամտություններից:

Մասնավորապես **Նամաթ Ալիևն ընդդեմ Անդրբեջանի /գանգատի թիվ՝ 18705/06, 08.04.2010 թվական/** գործով դատարանը կարևորել է

ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության նշանակությունը՝ արձանագրելով, որ ընտրությունների լեգիտիմությունը կախված է հասարակության վստահությունից ընտրական գործընթացի արդարության նկատմամբ: Միջազգային իրավունքի համաձայն՝ ազատ ընտրությունների սկզբունքը խախտված է համարվում ոչ միայն այն դեպքում, երբ ապացուցվում է կոնկրետ արդյունքի կեղծումը, այլ նաև այն դեպքում, երբ ընտրական միջավայրն ամբողջությամբ չի ապահովել ընտրողի ազատ կամքի ձևավորումը

ՄԻԵԴ-ի դիրքորոշումից հետևում է, որ Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածով երաշխավորված ընտրական իրավունքները ոչ միայն ձևական իրավական հնարավորություններ են, այլ իրական, արդյունավետ և գործնականում իրացվող իրավունքներ: Հետևաբար, այն իրավիճակներում, երբ ընտրական գործընթացում առաջացած խախտումները կամ դրանց համախառն ազդեցությունը այնպիսի բնույթ են ստանում, որ խաթարվում է ընտրողների կամքի ազատ արտահայտման իրականությունը, պետության կողմից կազմակերպված ընտրությունները չեն կարող համարվել համապատասխան ժողովրդավարական չափանիշներին: Այս մոտեցումը հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ խախտումները կրում են ոչ թե մեկուսացված, այլ համակարգային կամ արդյունքի վրա ազդեցություն ունեցող բնույթ:

Դատարանի ձևակերպած սկզբունքներից բխում է, որ ընտրական գործընթացը պետք է ապահովի ժողովրդի կամքի ազատ և անխոչընդոտ արտահայտում, իսկ ցանկացած միջամտություն, որը խաթարում է այդ կամքի իրական ձևավորումը կամ դրա վստահելի արտահայտումը, հակասում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի էությանը: Հետևաբար, եթե ընտրությունների ընթացքում արձանագրված անճշտությունները, խախտումները կամ ընթացակարգային խաթարումները հասնում են այն մակարդակի, որ կասկածի տակ են դնում ընտրությունների արդյունքների իսկությունը, ապա այդ ընտրությունները չեն կարող պահպանել իրենց իրավական վավերականությունը:

Միևնույն ժամանակ, ՄԻԵԴ-ը հստակ շեշտում է, որ ընտրական իրավունքների սահմանափակումները կամ գործընթացային շեղումները կարող են ընդունելի լինել միայն այն դեպքում, երբ դրանք չեն խախտում իրավունքների բուն էությունը և չեն զրկում դրանց արդյունավետությունից:

Այս չափանիշը նշանակում է, որ ընտրական գործընթացում թույլատրելի չեն այնպիսի խախտումներ, որոնք իրենց կուտակային ազդեցությամբ փոխում են ընտրությունների արդյունքի իրական արտահայտումը կամ ստեղծում են լուրջ և հիմնավոր կասկածներ ընտրությունների ազնվության նկատմամբ:

Հատկապես էական է Դատարանի այն դիրքորոշումը, որ պետությունը պարտավոր է ապահովել ընտրական վեճերի արդյունավետ ներպետական քննության համակարգ: Եթե ընտրական մարմնի կամ իրավասու վարչական մարմնի որոշումները չեն ապահովում իրական, արդյունավետ և անկողմնակալ վերանայում, կամ եթե այդ համակարգը չի կարողանում վերացնել ընտրական գործընթացում առկա էական խախտումները, ապա խախտվում է ոչ միայն ընթացակարգային երաշխիքը, այլև բուն ընտրական իրավունքի էությունը: Այս պայմաններում ընտրությունների արդյունքները չեն կարող համարվել վերջնական և վստահելի ժողովրդավարական կամքի արտահայտում:

Այսպիսով, ՄԻԵԴ-ի նշված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ ընտրությունների անվավեր ճանաչման հարցը պետք է գնահատվի ոչ միայն առանձին խախտումների առկայությամբ, այլ դրանց բնույթի, ծավալի և ընտրական արդյունքների վրա ունեցած իրական ազդեցության համատեքստում: Երբ խախտումները կամ անճշտությունները խաթարում են ընտրական գործընթացի ամբողջականությունը և թույլ չեն տալիս վստահորեն հաստատել ժողովրդի կամքի ազատ արտահայտումը, ապա նման ընտրությունները չեն համապատասխանում Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի պահանջներին և ենթակա են իրավական կասկածի՝ մինչև դրանց անվավեր ճանաչումը:

Այս իրավական տրամաբանությունը թույլ է տալիս Սահմանադրական դատարանին ընտրությունների գնահատման ժամանակ կիրառել բարձր չափանիշ՝ ապահովելով, որ ընտրական արդյունքները արտացոլեն ոչ թե ձևական հաշվարկ, այլ իրական ժողովրդավարական կամքի ազատ և անխոչընդոտ արտահայտում:

Մեկ այլ՝ Ժերմեն Մագըմանգանգոն ընդդեմ Բելգիայի /գանգատի թիվ՝ 310/15, 10.07.2020 թվական/ գործով, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը արձանագրել է, որ ընտրական վեճերի առկայության դեպքում վճռորոշ նշանակություն ունի դրանց արդյունավետ ներպետական քննությունը: Եթե բողոքները, որոնք բավարար չափով լուրջ և հիմնավորված

են, չեն ստանում իրական և արդյունավետ քննություն, ապա խախտվում է ոչ միայն ընթացակարգային երաշխիքը, այլ նաև ընտրելու և ընտրվելու իրավունքի բուն էությունը՝ այն դարձնելով ոչ արդյունավետ: Այսինքն՝ ընտրական իրավունքի պաշտպանությունը չի ավարտվում ընտրությունների անցկացմամբ, այլ շարունակվում է հետընտրական իրավական վերահսկողության փուլում:

Միաժամանակ Դատարանը ընդունում է պետությունների լայն հայեցողության շրջանակը ընտրական համակարգերի կազմակերպման հարցում, սակայն այդ հայեցողությունը սահմանափակված է հիմնարար պարտականությամբ՝ ապահովել ժողովրդի կամքի ազատ արտահայտումը: Այդ պատճառով նույնիսկ ներքին խորհրդարանական կամ ընտրական ինքնավարության սկզբունքը չի կարող արդարացնել այնպիսի ընթացակարգեր կամ որոշումներ, որոնք հանգեցնում են կամայականության կամ զրկում են ընտրական վեճերի իրական դատական կամ համարժեք վերահսկողությունից:

Սույն մոտեցման մեջ առանձնահատուկ կարևորություն ունի այն հանգամանքը, որ երբ ընտրական վեճը վերաբերում է հենց մանդատների բաշխմանը և խորհրդարանի կազմի ձևավորմանը, ապա այդ վեճը անմիջականորեն առնչվում է ժողովրդավարական լեգիտիմությանը: Այս պայմաններում Դատարանը պահանջում է, որ ներպետական մարմինները ոչ միայն ունենան ձևական իրավասություն, այլ նաև ապահովեն իրական, արդյունավետ և անկողմնակալ քննություն, որը կարող է կանխել կամայական որոշումները և ապահովել ընտրական գործընթացի վստահելիությունը:

Հատկանշական է նաև այն, որ երբ նույնիսկ ներպետական մարմիններն են արձանագրում, որ առկա խախտումները կարող էին ազդել մանդատների բաշխման վրա կամ փոփոխել ընտրությունների արդյունքը, ապա այդ հանգամանքը ինքնին ուժեղացնում է այն եզրահանգումը, որ ընտրական գործընթացի ամբողջականությունը խախտված է կամ առնվազն լուրջ կասկածի տակ է դրված: Նման իրավիճակում ընտրությունների արդյունքների անփոփոխ պահպանումը չի կարող համարվել ժողովրդավարական կամքի վստահելի արտահայտում:

Այս իրավական տրամաբանությունից հետևում է, որ ընտրությունների անվավեր ճանաչման հարցը պետք է դիտարկվի ոչ թե ձևական սխալների

առկայության, այլ դրանց իրական և հնարավոր ազդեցության համատեքստում՝ հատկապես այն դեպքերում, երբ խախտումները կարող էին ազդել մանդատների բաշխման վրա կամ փոխել ընտրությունների արդյունքների բովանդակային կառուցվածքը:

Այսպիսով, ՄԻԵԴ-ի ձևակերպած չափանիշները թույլ են տալիս Սահմանադրական դատարանին գնահատել ընտրական գործընթացի օրինականությունը բարձր ստանդարտով՝ պահանջելով ոչ միայն ընթացակարգային ձևական համապատասխանություն, այլ նաև իրական վստահելիություն, արդյունքի կանխատեսելիության իրավաչափություն և ժողովրդի կամքի ազատ արտահայտման փաստացի ապահովում:

Նշված պայմաններում համեմտական տանելով, ներկայացված փաստերի հետ կարող ենք փաստել, որ ներկայացված փաստերը լիովին բավարար են, որպեսզի դատարանը հիմք ընդունելով վերը նշված միջազգային նախադեպային իրավունքը բավարարի ներկայցված դիմումն ամբողջությամբ և անվավեր ճանաչի ընտրության արդյունքները:

Սահմանադրական դատարանի առջև դրված խնդիրը դուրս է սովորական իրավական կամ ընթացակարգային վեճի շրջանակներից: Այստեղ հարցադրումն ունի իրավական և սահմանադրական խորքային նշանակություն. *Փաստացի այն ընտրության արդյունքները, որոնց ընթացքում արձանագրվել են 115 քրեական վարույթներ, հարյուրավոր մեղադրյալներ, կազմակերպված կոռուպցիոն սխեմաներ և քվեարկության գաղտնիության բացահայտ ոտնահարում, և որոնց որոշիչ ազդեցությունը ընտրության ելքի վրա հաստատվել է պետության բարձրագույն պաշտոնյայի հրապարակային հայտարարությամբ, չեն կարող համարվել վավերական, օրինական և լեգիտիմ ընտրություններ և ադպիսի ընտրություններով ձևավորել լեգիտիմ խորհրդարան :*

Նման պայմաններում ձևավորված բարձրագույն օրենսդիր մարմինը չի կարող օժտված լինել ժողովրդի իրական մանդատով և ներկայացնել նրա կամքը, իսկ հանրային իշխանության ձևավորման նման ընթացակարգը հիմնավորապես հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 48-րդ հոդվածների հիմնարար սկզբունքներին:

Արձանագրված փաստական հանգամանքների համակցությունը՝ սկսած քրեական գործերի և կալանավորված անձանց աննախադեպ թվից, վերջացրած քվեարկության գաղտնիության ինստիտուցիոնալ ոչնչացմամբ և

արտաքին ֆինանսական միջոցների ներգրավմամբ, թույլ չի տալիս կիրառել ընտրությունների օրինականության որևէ իրավական կանխավարկած: Վերոգրյալ հիմնավորումների հիման վրա, խախտումների համակարգային ու համապետական բնույթը հանդիսանում է անհերքելի իրավական հիմք՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն ամբողջությամբ անվավեր ճանաչելու համար:

V. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Սույն գործի առանցքային իրավական հարցը հետևյալն է. Արդյո՞ք արձանագրված խախտումները կարող էին էական ազդեցություն ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա: Ընտրական իրավունքի տեսության և միջազգային իրավական չափանիշների համաձայն՝ ընտրությունների արդյունքների օրինականությունը գնահատելիս որոշիչ նշանակություն չունի միայն այն հանգամանքը, թե հնարավոր է արդյոք թվաբանական ճշգրտությամբ հաշվարկել, թե քանի ընտրող է փոխել իր քվեն ընտրակաշառքի, վարչական ճնշման կամ այլ ապօրինի ազդեցության հետևանքով: Նման մոտեցումն ինքնին կհանգեցներ անհեթեթ հետևության, որ ընտրակաշառքը գրեթե երբեք չի կարող հիմք հանդիսանալ ընտրությունների արդյունքների անվավերության համար, քանի որ գործնականում անհնար է պարզել, թե կոնկրետ որ ընտրողն ինչպես կքվեարկեր ապօրինի ազդեցության բացակայության դեպքում: Հենց այդ պատճառով միջազգային ընտրական իրավունքը ձևավորել է «էական ազդեցության» չափանիշը:

Այդ չափանիշի էությունն այն է, որ եթե խախտումների ծավալը, բնույթը, տարածվածությունը և ինտենսիվությունը այնպիսին են, որ օբյեկտիվ և անաչառ դիտորդի մոտ ողջամիտ կասկած են առաջացնում ընտրությունների արդյունքների արժանահավատության նկատմամբ, ապա այդ ընտրությունների արդյունքները չեն կարող համարվել ժողովրդի ազատ կամարտահայտության արտացոլում: Այս դեպքում դատարանի խնդիրը միայն թվաբանական հաշվարկ իրականացնելը չէ:

Դատարանի խնդիրը պարզելն է, թե արդյոք ընտրողն ունեցել է իր քաղաքական կամքն ազատ ձևավորելու իրական հնարավորություն:

Եթե ընտրական գործընթացի ընթացքում միաժամանակ առկա են եղել՝ վարչական ռեսուրսի համակարգային կիրառման բազմաթիվ փաստեր, ընտրակաշառքի վերաբերյալ հարյուրավոր քրեական վարույթներ, բազմաթիվ մեղադրյալներ, ընտրողների նկատմամբ ճնշումների և ազդեցությունների մասին հաղորդումներ, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության էական անկում, ապա անհնար է վստահությամբ պնդել, որ ընտրությունների արդյունքները ձևավորվել են բացառապես ժողովրդի ազատ կամարտահայտության արդյունքում:

Ավելին, ընտրական գործընթացի նկատմամբ վստահության կորուստն ինքնին սահմանադրական խնդիր է: Սահմանադրությունը պաշտպանում է ոչ միայն ընտրությունների տեխնիկական արդյունքը, այլև այդ արդյունքի նկատմամբ հանրային վստահությունը:

Եթե քաղաքացին հիմնավոր կասկած ունի, որ ընտրությունների արդյունքները ձևավորվել են ոչ թե ազատ կամարտահայտության, այլ պետական ռեսուրսի, վարչական ճնշումների, ընտրակաշառքի և այլ ապօրինի ազդեցությունների պայմաններում, ապա վտանգվում է ժողովրդաիշխանության սահմանադրական սկզբունքը:

Սույն դիմումով ներկայացված փաստական տվյալների ամբողջությունը վկայում է, որ ընտրական գործընթացի ընթացքում տեղի ունեցած խախտումները եղել են ոչ թե առանձին և մեկուսացված դեպքեր, այլ համակարգային բնույթի երևույթներ: Այդ խախտումները վերաբերել են ընտրողի կամքի ձևավորման գործընթացին, այսինքն՝ ընտրական իրավունքի ամենակարևոր բաղադրիչին:

Հետևաբար, անհնար է վստահորեն տարանջատել ընտրողների ազատ կամարտահայտության արդյունքում ձևավորված քվեները ապօրինի ազդեցությունների պայմաններում ձևավորված քվեներից:

Նման պայմաններում ընտրությունների պաշտոնական արդյունքները չեն կարող արժանանալ սահմանադրական վստահության:

Ժողովրդավարությունը մահանում է ոչ միայն այն ժամանակ, երբ կեղծվում է քվեաթերթիկը, այլև այն ժամանակ, երբ կեղծվում է ընտրողի կամքը:

Եթե պետական ռեսուրսը վերածվում է քաղաքական պայքարի գործիքի, եթե փողը դառնում է քվեի արժեքը, եթե ընտրողը կանգնում է

վախի, ճնշման կամ կախվածության առաջ, ապա քվեատուփում հայտնված թերթիկներն այլևս չեն արտահայտում ժողովրդի ազատ կամքը:

Այդ դեպքում վտանգվում է ոչ միայն ընտրության արդյունքը, այլև Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմքը:

2. Անդրադառնալով թվաբանական հաշվարկին հարկ է նակտել, որ փաստացի անճշտությունների քանակը, որն արդեն իսկ ներկայացվել է սույն դիմումում իրենից ենթադրում է ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցություն ունեցող հանգամանք, քանի որ հենց դրա արդյունքում կարող էր տեղի ունենալ մադատների քանակի փոփոխություն, որը կարող էր ազդել խորհրդարանում քվեարկության արդյունքների վրա, կամ կարող էր հնարավորություն տալ այլ քաղաքական ուժերի ստանալ ավելի մեծ քանակի քվե և ապահովեր կոնկրետ տոկոսային հարաբերակցություն:

Սույն դիմումով արդնե իսկ ներկայացվել է հիմանվորումներ, որ այս թվաբանական հաշվարկի արդյունքում հնարավոր չէ հասկանալ ընտրությունների իրական պատկերը, ինչով պայմանավորված հարկ է նկատել, որ ընտրության արդյունքները չեն արտահայտում քաղաքացիների իրական կամահայտնությունը:

Գտնում ենք, որ առկա են բավարար հիմքեր, թե արձանագրված խախտումների, որոնք էական ազդեցություն են ունեցել ընտրության արդյունքների վրա և թե թվաբանական հաշվարկի մասով ընտրության արդյունքները ամբողջությամբ անվավեր ճանաչելու համար, ուստի հիմք ընդունելով վերը նշվածը և ղեկավարվելով

ՀՀ Սահմանադրական դատարանի մասին Սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ Սամանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝

ՀԱՅՑՈՒՄ ԵՄ

Անվավեր ճանաչել 2026 թվականի հունիսի 07-ին տեղի ունեցած ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.06.2026 թվականի թիվ 259-Ա որոշումը և ընտրությունների արդյունքները:

Կից ներկայացվում են՝

1. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված «ԴՕԿ» կուսակցության գրանցման վերաբերյալ քաղվածք,
2. ԿԸՀ 03.05.2026 թ. թիվ 99- Ա որոշումը «ԴՕԿ» կուսակցության գրանցման վերաբերյալ,
3. «ԴՕԿ» կուսակցության քաղաքական խորհրդի քարտուղարի անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
4. Լիազորագրի բնօրինակը,
5. Ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճեն և փաստաբանական գործնեության արտոնագրի պատճեն,
6. 1 էլեկտրոնային կրիչ, որում առակա է հետևյալ ֆայլերը՝
7. ֆայլ 1՝ «Վարչական ռեսուրսի կիրառում 1»,
8. ֆայլ 2՝ «Թաքնված նախընտրական քարոզչություն 2»
9. ֆայլ 3՝ «Կառավարության որոշումներ, որպես ընտրական ազդեցություն 3»
10. ֆայլ 4՝ «Իշխանության ճնշումներ 4»
11. ֆայլ 5՝ «ԿԸՀ դիմում պատասխան 5»
12. ֆայլ 6՝ «Անճշտություններ 6»
13. ֆայլ 7 ՝ «Կոռուպցիա 7»
14. ֆայլ 8՝ «ԿԸՀ որոշում 14.06.2026թ.»
15. ֆայլ 11՝ «ՍԴ դիմումի էլեկտրոնային տարբերակ»

«ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՓԱՍՏԱԲԱՆ՝

ՏԱՐՈՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«19» հունիս 2026 թ.